6. Руководящие принципы ВОЗ по надлежащей практике культивирования и сбора /GACP/ лекарственных растений. Всемирная организация здравоохранения. Женева 2003.
7. European Pharmacopeia. – 4th ed.- 2416 s.

SUMMARY

PHARMACOGNOSTIC ANALYSIS OF SOME MEDICINAL HERBS CULTIVATED IN HYDROPONIC CONDITIONS

Chichoyan N.B, Galstyan H.M, Asatryan A.Z., Ghazanjyan M.M., Altunyan A.A., Ghukasyan N.H., Shaboyan N.K.
YSMU, Department of Pharmacognosy

Keywords: *hydroponics, herbal raw materials, standardization*

The objects of this study were the raw materials obtained from the plants cultivated in hydroponic conditions: Motherwort herb (*Leonurus quinquelobatus*), Sage leaves (*Salvia officinalis*), Bur-marigold herb (*Bidens tripartite*), Peppermint leaves (*Mentha piperita*), Coltsfoot leaves (*Tussilago farfara*), Saint John's wort herb (*Hypericum perforatum*).

The results of pharmacognostic analysis showed that the level of accumulation of biological active substances in some of the studied raw materials (Saint John's wort herb, Motherwort

herb) was higher compared with the species cultivated in common conditions. The same conformity occurred with the raw materials containing volatile oil, especially the peppermint leaves, where the amount of volatile oil exceeded the indices of European pharmacopeia. It proves the beneficial effect of hydroponic cultivation on the process of accumulation of volatile oil. Other indices - the content of polysaccharides and extractive substances, that were obtained when studying some officinal species (Bur-marigold herb, Coltsfoot leaves), can be used for further standardization of the raw materials cultivated in hydroponic conditions.

РЕЗЮМЕ

ФАРМАКОГНОСТИЧЕСКИЙ АНАЛИЗ НЕКОТОРЫХ ЛЕКАРСТВЕННЫХ РАСТЕНИЙ, КУЛЬТИВИРУЕМЫХ В УСЛОВИЯХ ГИДРОПОНИКИ

Чичоян Н.Б, Галстян А.М, Асатрян А.З., Казанджян М.М., Алтунян А.А., Гукасян Н.О., Шабоян Н.К..
ЕГМУ, кафедра фармакогнозии

Ключевые слова: *гидропоника, лекарственное растительное сырье, стандартизация*

Объектом данного исследования послужило растительное сырье, полученное из лекарственных растений, культивированных в условиях гидропонии: трава пустырника (*Herba Leonuri quinquelobatus*), листья шалфея (*Folia Salviae officinalis*), трава череды (*Herba Bidentis tripartite*), листья мяты (*Folia Menthae piperita*), листья мать и мачехи (*Folia Farfarae*), трава зверобоя (*Herba Hyperici perforatum*).

В результате фармакогностического анализа отмечается интенсивное накопление биологически активных веществ у некоторых лекарственных растений, культивированных в условиях гидропонии (Пустырник пятилопастный, Зверобой

продырявленный), по сравнению с растениями, произрастающими в обычных условиях. Та же закономерность наблюдается при изучении сырья, содержащего эфирные масла. К примеру, содержание эфирного масла в листьях перечной мяты превышает показатели, указанные в Европейской фармакопее (Ph.Eur). Последнее доказывает положительное воздействие гидропонических условий на процесс накопления эфирных масел. Показатели, полученные при изучении остальных лекарственных растений (Череда, Мать и мачеха), а именно – содержание полисахаридов и экстрактивных веществ, могут быть использованы в процессе дальнейшей стандартизации лекарственного сырья, культивированного в условиях гидропонии.

ՀՏԴ: 616.831-002

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ՆՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԼԱՅՄԻ ՀԻՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավագյան Գ.Ա., Խաչատրյան Է.Ա., Սահակյան Ա.Ե., Սարկիսյան Ռ.Տ., Կոչտոյան Յ.Յ., Եղոյան Կ.Ն., Խաչատրյան Լ.Ռ., Ալեքսանյան Ա.Մ., Ավետիսյան Ա.Ե., Կարապետյան Ա.Յ., Մանվելյան Յ.Մ.

ԵՊԲՀ, Նյարդաբանության ամբիոն

Բանալի բառեր՝ Լայմի հիվանդություն, նեյրոբորելիոզ, ախտորոշման չափանիշներ, Էնցեֆալիտ

Ներածություն


Լայմի հիվանդությունը տզերով փոխանցվող բազմահամակարգային բորբոքային հիվանդություն է: ԱՄՆ-ում հիվանդությունների հսկման կենտրոնի կողմից տարեկան գրանցվում է Լայմի հիվանդության ավելի քան 200 հազար նոր դեպք [1]: Լայմի հիվանդության տարածվածությունը ԱՄՆ-ում տատանվում է ըստ աշխարհագրական վայրի և սեզոնայնության [1, 2], իսկ հիվանդացությունը կազմում է 9,7 դեպք 100 հազար բնակչի հաշվով [1]: Սկսած 1991 թվականից, երբ Լայմի հիվանդությունը հայտնի է դարձել բնակչությանը, ԱՄՆ-ում դեպքերի թիվը առավել քան կրկնապատկվել է [1, 2]: ԱՄՆ-ի վերջին վիճակագրական տվյալների համաձայն՝ Լայմի հիվանդությունը տզերով փոխանցվող ամենատարածված հիվանդությունն է [1, 2]: Եվրոպայում ևս նկատվում է Լայմի հիվանդության նոր դեպքերի աճ: Որոշ հետազոտողների կարծիքով այս փաստը հիմնականում պայմանավորված է կլիմայական փոփոխություններով, ինչը նկատվում է նաև Հյուսիսային Ամերիկայում [2]:

Լայմի հիվանդությունը հարուցում են սպիրոխետները՝ *Borrelia burgdorferi sensu strict* Հյուսիսային Ամերիկայում, *Borrelia garinii* և *Borrelia afzelii* Եվրոպայում: Բորելիաները փոխանցվում են վարակված տզի խայթոցով, որը հիմնականում *Ixodes scapularis*-ն է Հյուսիսային Ամերիկայում և *Ixodes ricinus*-ը՝ Եվրոպայում (Նկ. 1) [3, 4]: Մանրէների հիմնական կրողներ են հանդիսանում դաշտային մկները և եղնիկները: Շները, կատուները, թռչունները և ջրառքերը նույնպես կարող են բորելիաների կրողներ լինել [2]:

Լայմի հիվանդության կլինիկական դրսևորումները բազմազան են: Ամերիկյան և եվրոպական պոպուլյացիաներում դրանք, որպես կանոն, տարբեր են լինում [1, 2]: Պատճառը հավանաբար տարբեր տեսակի մանրէներով վարակումն է:

Լայմի հիվանդության առաջին դրսևորումներն են երիթեմա միգրասը (Նկ. 2, 3), մենինգոպոլինարիտը, քրոնիկ ատրոֆիկ ակրոդերմատիտը [5]: Առաջին ան-

գամ այս ախտանիշները նկարագրվել են 20-րդ դարի կեսերին Եվրոպայում և ավելի ուշ 1976 թվականին ԱՄՆ-ում՝ Քոննեքթիկուտ նահանգի Հին Լայմ բաղաբույս [6, 7]: Չնայած այն փաստին, որ ներկայումս առկա են ախտորոշման համար նախատեսված թեստեր և սահմանված են ապացուցողական բժշկության վրա հիմնված հավաստի բուժման ուղեցույցներ, բազմաթիվ բժիշկների, ինչպես նաև առողջապահական մարմինների համար այս հիվանդությունը դեռևս մնում է անհայտ:



Նկ. 1. Համեմատական կարգով նկարում ցուցադրված է տզերի տարբեր տեսակները՝ հասուն եւ թրթուրային ձևերը

Դժբախտաբար, ինչպես այլ երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) այս հիվանդությունը, որպես առողջապահական խնդիր, դեռևս բացահայտված չէ թե՛ բժիշկների, թե՛ առողջապահական մարմինների, և թե՛ հիվանդների կողմից, հետևաբար, վիճակագրական պաշտոնական տվյալները բացակայում են: Դեռևս մեկ տարի առաջ, մեր երկրում՝ ՀՀ-ում, որևէ բժշկի մտքով անգամ չէր անցնի Լայմի հիվանդության վերաբերյալ քննարկումների կամ հատուկ հետազոտությունների հարց առաջադրել: Սակայն մեր երկիրը զերծ չի մնացել ինչպես բազմաթիվ այլ հիվանդությունների, այնպես էլ Լայմի հիվանդության ներթափանցու-

միջ: ԵՊԲՀ-ի նյարդաբանության ամբիոնի կլինիկական տվյալների՝ ներկայումս առկա են Լայմի հիվանդության կլինիկորեն և լաբորատոր հաստատված դեպքեր, ինչը խոսում է այն մասին, որ Հայաստանը, ինչպես տարածաշրջանի ցանկացած այլ երկիր, կարող է Էնդեմիկ գոտի լինել՝ հանդիսանալով ահագանգ համապատասխան քայլեր ձեռնարկելու համար: Քանի որ այս հիվանդությանը բնորոշ կլինիկական նշանները, ախտորոշման եղանակները և բուժման մոտեցումները անձանոթ են ՀՀ բժիշկների լայն շերտերի համար, ուստի անհրաժեշտ ենք համարում բարձրացնել բժիշկ-մասնագետների և ընդհանուր հանրության տեղեկացվածության մակարդակը: Միևնույն ժամանակ ակնկալում ենք, որ հետագարձ կապի պահպանման միջոցով հնարավոր կլինի բացահայտել հիվանդության բազմաթիվ նոր դեպքեր: Այդ իսկ նպատակով, սույն աշխատանքը ներկայացնում է Լայմի հիվանդության պատճառագիտության, ախտորոշման և բուժման առկա հիմնահարցերին վերաբերող ամփոփիչ տվյալներ:

Լայմի հիվանդության ախտորոշումը

Կլինիկական դրսևորումները

Լայմի հիվանդության վերջնական ախտորոշման համար հիմք են հանդիսանում անամնեզում տզի խայթոցի առկայությունը, համաճարակաբանական տվյալները, կլինիկական ախտանիշները և դրսևորումները, ինչպես նաև շճաբանական հետազոտությունները [2]:

Աշխարհում Լայմի հիվանդության դրսևորումները տարբեր են, քանզի տարբեր են հարուցիչների ենթատեսակների ֆունկցիաները: Սակայն, բոլոր դեպքերում, կախված հարուցչի տարատեսակից, մաշկը, նյարդային համակարգը, սիրտը և մկանահոդային համակարգը կարող են ընդգրկվել պրոցեսի մեջ [1, 2, 4]: Լայմի հիվանդության ժամանակ կարող են դիտվել այնպիսի ախտանիշներ, ինչպես օրինակ՝ հիշողության խանգարում, ուշադրության կենտրոնացման խանգարում, թռչող բնույթի հոդացավեր, դող, սրտխփոց, հոգնածություն, տարօրինակ ծակծկոցներ դեմքի շրջանում կամ մարմնի այլ հատվածներում և մի շարք այլ ախտանիշներ այլ օրգան-համակարգերի կողմից: Այդ իսկ պատճառով հաճախ Լայմի հիվանդությունը սխալմամբ ախտորոշվում է որպես ցրված սկլերոզ, արթրիտի տարբեր տեսակներ, ֆիբրոմիալգիա, քրոնիկական գերհոգնածություն, սրտային պաթոլոգիաներ, համակարգային կարմիր գայլախտ, հոգեբուժական բնույթի խանգարումներ, վաղաժամ կողմնային ամիոտրոֆիկ սկլերոզ, Շյոգրենի համախտանիշ, վաղաժամ Ալցհեյմերի հիվանդություն, գրգռված աղու համախտանիշ, Կրոնի հիվանդություն և այլ հիվանդություններ:

Հյուսիսային Ամերիկայում Լայմի հիվանդության առավել տարածված դրսևորումներն են ցանը՝ Էրիթեմա միգրանս, արթրիտները, սրտաբորբը: Եվրոպայում և Ասիայում առավել տարածված կլինիկական դրսևորումներն են ռադիկուլիտները և քրոնիկական ատրոֆիկ ակրոդերմատիտը [2]:

Որպեսզի տեղի ունենա բորելիայի տրանսմիսիա, անհրաժեշտ է, որ տիզը 24-ից 48 ժամ ամրացած լինի մարդու մաշկին [8]: Այնուհետև, եթե վարակումը տեղի է ունենում, Լայմի հիվանդությունը, ինչպես մյուս սպիրոխետային ինֆեկցիաները, օրինակ՝ սիֆիլիսը, ևս ընթանում է փուլերով, կլինիկական նշանների լայն սպեկտրով:

Ինկուբացիոն շրջանը տատանվում է 3-32 օր: Որպես կանոն, նյարդաբանական ախտանիշները ի հայտ են գալիս տզի խայթոցից 1 - 12 (առավել հաճախ 4-6) շաբաթ հետո: Հիվանդների միայն 40 - 50%-ն են կարողանում մտաբերել տզի խայթոցի փաստը, և 20 - 30%-ը նշում են մաշկի տեղային ինֆեկցիայի առկայությունը: Այս շրջանը հանդիսանում է հիվանդության առաջին փուլը [9, 10]: Դեպքերի առավել քան 95%-ը կարող են դասվել վաղ Լայմի նեյրոբորելիոզի (ԼՆԲ) շարքին՝ հայտնի որպես հիվանդության երկրորդ փուլ, որը բնորոշվում է նշանների և ախտանիշների դրսևորմամբ 6 ամսից պակաս տևողությամբ: Ուշ ԼՆԲ-ն հանդիպում է 5%-ից պակաս դեպքերում (երրորդ փուլ) և կարող է տևել վեց ամսից մինչև մի քանի տարի [11]:

Վաղ ԼՆԲ-ի բնական ընթացքը, որպես կանոն, արագ սահմանափակվող է, մինչդեռ ուշ ԼՆԲ-ն ունի քրոնիկ ընթացք, ինչը հավանաբար հանդիսանում է նյարդային հյուսվածքում մանրէի մշտական առկայության արդյունք [12]:

Բնորոշ Էրիթեմա միգրանսը, որի տրամագիծը մեծ է 5 սմ-ից, առավելապես դրսևորվում է Հյուսիսային Ամերիկայում՝ հանդիսանալով այս հիվանդության ախտորոշման ամենակարևոր չափանիշներից մեկը (նկ.2,3): Առհասարակ այն բարձրացող է, երբեմն էլ ցանավորված: Օղակաձև կամ էլիպսաձև կարմիր դաշտը կենտրոնախույս կերպով է տարածվում՝ արտացոլելով սպիրոխետների շարժումը մաշկի լիմֆատիկ համակարգով: Հյուսիսային Ամերիկայում նեյրոբորելիոզը սովորաբար արտահայտվում է ենթասուր մենինգիտով, որին նախորդում է Էրիթեմա միգրանսը [12]:

Ավելի հաճախ առաջանում է գանգուլեդային նյարդի միակողմանի ախտահարում: Ընդ որում, դիմային՝ յոթերորդ գանգուլեդային նյարդը ավելի հաճախ է ներգրավվում պրոցեսի մեջ, քան մնացածները:

Հետազոտությունները ցույց են տվել, որ Էնդեմիկ վայրերում 25% դեպքերում նեյրոբորելիոզը կարող է հանդիսանալ իզոլացված դիմային պարալիչի պատճառ

[2]:



Նկ. 2. Պատկերված է տիպիկ ցան տզի կծելուց հետո՝ երիթեմա միգրանս՝ կարմիր կենտրոնախույս օղակներով:



Նկ. 3. Պատկերված է տիպիկ ցան տզի խայթոցից հետո՝ երիթեմա միգրանս՝ կարմիր կենտրոնախույս օղակներով

Ի տարբերություն Յյուսիսային Ամերիկայի, Եվրոպայում վաղ ԼՆԲ-ի առավել տարածված դրսևորումը ցավային մենինգոռադիկուլիտն է՝ հայտնի որպես Բանվարթի համախտանիշ, որը կարող է լինել հիվանդության միակ կլինիկական նշանը: Նեյրոբորելիոզի այս ձևը հազվադեպ կարելի է տեսնել հյուսիսային Ամերիկայում: Բանվարթի համախտանիշի հիմնական կլինիկական դրսևորումները արմատիկային ցավերն են (86%) և պարեզները (61%) [11]: Որպես կանոն, հիվանդների մոտ ցավի ուժգնությունը նույնիսկ չի կարող համեմատվել նախկինում ունեցած որևէ զգացողության հետ:

Ցավի ուժգնությունը և տեղակայումը կարող է օրեցօր տատանվել՝ առավելապես ուժգնանալով գիշերային ժամերին: Պարեզի կարող են ենթարկվել գանգուղեղային նյարդերի՝ առավելապես դիմային նյարդի, ավելի հազվադեպ՝ զատիչ կամ ակնաշարժ նյարդերի կողմից նյարդավորվող մկանները: Յիվանդների 43%-ը նշում է գլխացավի առկայություն: Բանվարթի համախտանիշից և լիմֆոցիտար մենինգիտից զատ ԼՆԲ-ի՝ ծայրամասային նյարդային համակարգը ներառող այլ դրսևորումներն են հյուսակային նևրիտը և բազմակի մոնոնևրիտը [12]:

Տզի խայթելուց հետո *Borrelia*-ի տեսակները կենտրոնական նյարդային համակարգ (ԿՆՀ) են անցնում հեմատոգեն կամ ռետրոգրադ ճանապարհով՝ ծայրամասային նյարդերի միջոցով [2]:

Յյուսիսային Ամերիկայում հիվանդության տարածումը առավելապես իրագործվում է հեմատոգեն ճանապարհով՝ հանգեցնելով մենինգոէնցեֆալիտի զարգացմանը: Ի տարբերություն Յյուսիսային Ամերիկայի, հարուցիչի Եվրոպական ենթատեսակի դեպքում տարածումը տեղի է ունենում ծայրամասային նյարդերի միջոցով, որի արդյունքում զարգանում է Բանվարթի համախտանիշը: Նեյրոբորելիոզի ժամանակ կենտրոնական նյարդային համակարգի վնասման մեխանիզմը ներառում է վասկուլիտ, ցիտոտոքսիկ ազդեցություն, նեյրոտոքսիկ միջնորդանյութերի ազդեցություն կամ աուտոիմուն ռեակցիաներ՝ մոլեկուլար միմիկրիայի ճանապարհով [2]:

Կենտրոնական նյարդային համակարգի ախտանիշները շատ տարբեր են՝ տատանվելով թեթև կոնֆուզիոն վիճակից մինչև սուր Էնցեֆալիտ: Նեյրոբորելիոզի հետ կարող են կապված լինել այնպիսի կլինիկական դրսևորումներ, ինչպիսին են կոնֆուզիան, ուղեղիկային ատաքսիան, օպսկլոնուս – միոկլոնուսը, նիստազմը, ապրաքսիան, հեմիպարեզը կամ պարկինսոնատիպ ախտանիշները [13]: Պոլիոմիելիտանման համախտանիշները և ինսուլտին նմանվող ախտանիշները կարող են գլխուղեղի վասկուլիտի հետևանք լինել, ինչը սակայն հազվադեպ հանդիպող երևույթ է և հայտնաբերվել է միայն եզակի դեպքերում [14]:

Հազվադեպ հանդիպող ակնային նեյրոբորելյոզը կարող է սկսվել հիվանդության ցանկացած փուլում: Ուլեիտը և օպտիկ նևրիտը հանդիսանում են ամենատարածված ակնային բարդությունները [2]:

Կոնյունկտիվիտը և էպիսկլերիտը առավել հաճախ հանդիպում են վաղ փուլում:

Նեյրոօֆթալմոլոգիական խանգարումները և ուլեիտը դիտվում են երկրորդ փուլում, իսկ կեռատիտը, քրոնիկական ներակնային բորբոքումը և ակնակապճային միոզիտը, դիտվում են Լայսի հիվանդության եր-

որոգ փուլում:

Լայմի հիվանդության ակնակապիճային միոզիտի կլինիկական և սկանավորման նշանները նմանակում են ակնակապիճային կեղծ ուռուցքին:

Տարբերակիչ ախտորոշումը ներառում է լիմֆոմա կամ վահանագեղձի հնարավոր դիսօրբիտոպաթիան: Այստեղ՝ որպես Լայմի հիվանդության չափանիշներ են դիտվում այլ հիվանդությունների բացակայությունը, Էնդեմիկ գոտում լինելու փաստը, դրական սերոլոգիան և բուժման նկատմամբ դրական արդյունքները:

Լայմի հիվանդությունը 30% դեպքերում հանդիպում է երեխաների մոտ: Երիթեմա միգրանսի առկայությունը դիտվում է 89% երեխաների մոտ, ինչը զգալիորեն դուրսի է դարձնում կլինիկական ախտորոշումը: Գլխացավը հանդիսանում է հաճախ հանդիպող նյարդաբանական ախտանիշ: Դիմային նյարդի պարալիզը և մենինգիտը մասնական նեյրոբորելիոզի ժամանակ դիտվում են՝ համապատասխանաբար 3-5% և 1% դեպքերում [1, 2, 4, 6]:

Առավել քիչ տարածված դրսևորում է հանդիսանում քնի խանգարումը և տեսողական նյարդի սկավառակի այտուցը՝ կապված ներգանգային ճնշման բարձացման հետ:

Ատաքսիան, խորեան, միելիտը, ուղեղի կեղծ ուռուցքը, մենինգիտը, Էնցեֆալիտը, ծայրամասային նեյրոպաթիան, ռադիկուլոպաթիան և Բանվարթի համախտանիշը հանդիպում են բավականին հազադեպ [12]:

Լաբորատոր-գործիքային ախտորոշում

Նեյրոբորելիոզը ունի կլինիկական միանման նշաններ մի շարք այլ հիվանդությունների հետ, այդ իսկ պատճառով մեծ նշանակություն ունի լաբորատոր-գործիքային ախտորոշումը: Բորելիան կարող է հայտնաբերվել հյուսվածքի բիոպտատում մանրէաբանական եղանակով և կուլտիվացիայի ժամանակ, սակայն այս մեթոդները ամենօրյա նշանակվող հետազոտությունների շարքին չեն դասվում: Ուղեղ-ողնուղեղային հեղուկի և արյան պոլիմերազային շղթայացված ռեակցիան (ՊՇՌ) ցածր զգայունություն ունի, սակայն օգտակար է Լայմի արթրիտով հիվանդների մոտ սինովյալ հեղուկի դեպքում:

Լայմի հիվանդության ենթադրյալ ախտորոշմամբ շատ հիվանդների մոտ կատարվում է բորելիայի նկատմամբ հակամարմինների թեստավորում, ինչն իրենից ներկայացնում է սովորական իմունոֆերմենտային (ԻՖԱ) անալիզ, որը ցույց է տալիս արյան մեջ հակամարմինների մակարդակը: Եթե ԻՖԱ-ն սահմանային է կամ դրական, ապա կատարվում է հաջորդ փուլը՝ վեսթերն բլոթ տվյալ հակածնի հայտնաբերման նպատակով:

Այս երկփուլանի մեթոդն ունի որոշակի առավելություններ ՊՇՌ-ի նկատմամբ՝ մասնավորապես առավել հեշտ թեստավորում, ստանդարտացում և բարձր զգայունություն: Միաժամանակ պետք է նշել այն փաստը, որ հիվանդության սկզբնական փուլերում զգայունությունն ավելի ցածր է [2, 8, 12]:

Ընդհանրացնելով վերոնշյալ տվյալները և փաստերը՝ կարող ենք թվարկել Լայմի հիվանդության ախտորոշման վերջերս ընդունված չափորոշիչները. զգայուն ԻՖԱ, որին հետևում է վեսթերն բլոթը: Վերջինս պետք է հայտնաբերի ոչ նորմալ IgM և IgG հակամարմիններ: Եթե հիվանդի մոտ կա նեյրոբորելիոզի կասկած, ապա պետք է առկա լինի IgG սինթեզ բորելիայի դեմ ուղեղ-ողնուղեղային հեղուկում և բորբոքման բջիջների քանակի աճ՝ սովորաբար լիմֆոցիտներ, մոնոցիտներ կամ պլազմատիկ բջիջներ, սպիտակուցի քանակի աճ, բորելիա-սպեցիֆիկ ինտրատեկալ հակամարմիններ կամ ՊՇՌ-ով հայտնաբերված հակածիններ՝ վաղ Լայմի ժամանակ: Լայմի հակամարմինների՝ IgG, IgM առկայությունը ուղեղ-ողնուղեղային հեղուկում, բորբոքման բջիջների բացակայության պայմաններում վկայում է նախկինում կրած վարակի մասին: Լայմի հիվանդության ախտորոշման համար թեստերը, որոնք մշակվել են Եվրոպայում, չեն հայտնաբերում հակամարմինների բարձր տիտր ԱՄՆ-ում վարակվածների մոտ և հակառակը [2, 8, 12]:

Նեյրոբորելիոզի ժամանակ չկան հստակ սահմանված մազնիսառեզոնանսային տոմոգրաֆիական (ՄՌՏ) հետազոտության նշաններ և պատկերը շատ հաճախ նման է լինում ցրված սկլերոզին: Մի շարք հետազոտություններում նկարագրվում են գանգուղեղային նյարդերի՝ մասնավորապես 3-րդ, 5-րդ, 7-րդ, ՄՌՏ պատկերի ուժեղացում: Բանվարթի համախտանիշի ժամանակ նկարագրվում է պարանոցային, կրծքային և գոտկային նյարդերի արմատների կոնտրաստային ուժեղացում:

Բուժում

Աշխարհի տարբեր երկրներում Լայմի հիվանդության արդյունավետ բուժման հայտնաբերման նպատակով անցկացվել են բազմաթիվ հետազոտություններ: Ներկայումս արդեն գոյություն ունեն Լայմի հիվանդության բուժման հստակ սահմանված սխեմաներ: Հետազոտությունները ցույց են տվել, որ *Borrelia burgdorferi*-ն խիստ զգայուն է բետա-լակտամների և տետրացիկլինների նկատմամբ, զգալի հակամանրեային կայունություն չի ցուցաբերում [15]: Եթե հասուն հիվանդների մոտ առկա են վաղ ԼՆԲ-ի ախտանիշներ, որոնք սահմանափակվում են ուղեղաթաղանթներով, գանգուղեղային նյարդերով, նյարդարմատներով կամ ծայրամասային նյարդերով (Բանվարթի համախտանիշ), ապա պետք է

առաջարկել հակաբիոտիկոթերապիայի 14-օրյա կուրս: Պրոսպեկտիվ հետազոտությունները ցույց են տվել, որ ավելի երկարատև բուժումը չունի որևէ առավելություն կարճատև բուժման նկատմամբ: Այն կարող է նույնիսկ վնասակար ազդեցություն ունենալ հիվանդի առողջական վիճակի վրա: Օրալ դոքսիցիկլինը, ներերակային (և/ե) ցեֆտրիաքսոնը, և/ե պենիցիլինը կամ և/ե ցեֆոտաքսիմը հանդիսանում են բուժման արդյունավետ և անվտանգ դեղամիջոցներ [12]:

Հետազոտությունները ցույց են տվել, որ օրալ դոքսիցիկլինը՝ օրական 200մգ և և/ե ցեֆտրիաքսոնը՝ օրական 2գ, 14 օրվա ընթացքում ունեն նույն արդյունավետությունը: Օրալ դոքսիցիկլինը ունի բարձր թափանցելիություն և ուղեղ-ողնուղեղային հեղուկում առաջացնում է նվազագույն արգելակող կոնցենտրացիայից բարձր բաղադրություն: Դոքսիցիկլինի առավելությունը նշանակման օրալ ձևն է, բացի դրանից, այն ավելի մատչելի է: Սակայն դոքսիցիկլինի հարաբերական հակացուցումներն են հղիությունը և կրծքով կերակրումը:

Երեխաների մոտ, որոնք ունեն հաստատված կամ հնարավոր վաղ ԼԼԲ՝ ուղեղաթաղանթների, գանգուղեղային նյարդերի, նյարդաբանությունների կամ ծայրամասային նյարդերի (Բանվարթի համախտանիշ) ներգրավման համապատասխան ախտանիշներով, առաջարկվում է նշանակել հակաբիոտիկոթերապիայի եզակի 14-օրյա կուրս, որն ընդգրկում է վերոհիշյալ դեղամիջոցներից որևէ մեկը: Օրալ դոքսիցիկլինը՝ օրական 200մգ և և/ե ցեֆտրիաքսոնը՝ օրական 2գ, 14 օրվա ընթացքում ունեն նույն արդյունավետությունը: Դոքսիցիկլինի կիրառությունը սահմանափակ է՝ մինչև 8, որոշ երկրներում 9 տարեկան երեխաների շրջանում, ինչը պայմանավորված է ատամների ախտահարմամբ [12]:


Եթե երեխաների մոտ առկա են կենտրոնական նյարդային համակարգի ախտահարման դրսևորումներ՝ միելիտ, Էնցեֆալիտ, վասկուլիտ, ապա բուժումը առաջարկվում է կատարել և/ե ցեֆտրիաքսոնով՝ օրական 2 գ դեղաչափով 14 օր շարունակ:

Ըստ մի շարք եվրոպական հետազոտությունների, չափահաս հիվանդների համար, ովքեր ունեն հաստատված կամ հնարավոր ուշ Լայմի հիվանդություն, ծայրամասային նեյրոպաթիա և քրոնիկ ատրոֆիկ ակորոդերմատիտ, առաջարկվում է բուժել օրալ դոքսիցիկլինով՝ օրական 200մգ, կամ և/ե ցեֆտրիաքսոնով՝ օրական 2գ, 3 շաբաթ: ԿԼՀ-ի ախտահարումների դեպքում (միելիտ, Էնցեֆալիտ, վասկուլիտ) առաջարկվում է բուժվել և/ե ցեֆտրիաքսոնով (օրական 2 գ) 3 շաբաթ: Սակայն ելևելով գրականության տվյալներից՝ հակաբիոտիկային թերապիան խորհուրդ չի տրվում անցկացնել պոստ-Լայմ հիվանդության համախտանիշի ժամա-

նակ, որը բնորոշվում է որպես մի վիճակ, երբ սուբյեկտիվ գանգատները կամ սիմպտոմները, ինչպիսիք են հոգևածությունը, պարեսթեզիաները, քնի խանգարումները, կոգնիտիվ խանգարումները, գլխացավը, արթնալգիան և միալգիան պահպանվում են ԼԼԲ-ի ստանդարտ բուժումից 6 ամիս հետո:


Հաստատված կլինիկական դեպքերը ՀՀ-ում

Համաձայն վերոնշյալի՝ տվյալ տեղեկատվական հրապարակման անհրաժեշտությունն արդարացված է 2010թ.-ի ընթացքում մեր կողմից բացահայտված նեյրոբորելիոզով հիվանդների 6 դեպքով, որոնցից մեկը Պարսկաստանի բաղաբացի է՝ Թավրիզից: Ախտորոշումը կատարվել է կլինիկական և հարկլինիկական տվյալների, ինչպես նաև ՊՇՌ-ի արդյունքների հիման վրա: Ինչպես հայտնի է, վերջինս ունի բարձր սպեցիֆիկություն, սակայն ցածր զգայնություն: Այս մեթոդի միջոցով երեք հիվանդի մոտ արձանագրվել է դրական պատասխան: Երիթեմա միգրանսի առկայությունը նշվել է չորսի մոտ: Տգի խայթման փաստը գրանցվել է ընդամենը երեքի մոտ: Երկու հիվանդ նշել են վերքի առկայություն, որը բացառված չէր, որ զարգացել էր միջատի խայթելուց հետո: Հիվանդներից մեկը, որի մոտ հիվանդության պատմությունը կազմում էր ութ տարի, նշում էր երկարատև չլավացող վերքի առկայության մասին: Ընդ որում, այս հիվանդը լրացուցիչ հետազոտվել է Շվեյցարիայում, որտեղ ախտորոշումը կրկին հաստատվել է (նկ. 4):



Նկ. 4. 8 տարի պատմություն ունեցող հիվանդի գլխուղեղի T1 և T2 ռեժիմով կատարված պատկերներ: Առկա են բազմաթիվ մանր և խոշոր օջախներ, որոնք նկարագրվել են որպես գլխուղեղի ցրված սկլերոզ: Տեղակայումն և օջախների չափերը ցրված սկլերոզին բնորոշ չեն

Ամենակարճատև ընթացք ունեցող դեպքը արձանագրել ենք 40 տարեկան տղամարդու մոտ, որի անամնեզում առկա էր միջատի խայթելու փաստը և դրանից հետո մաշկի վրա զարգացած մեծ օջախային ցանավորում՝ էրիթեմա միգրանս, ևս մեկ ամիս անց դիմային նյարդի ծայրամասային ախտահարում, որը կայուն էր բուժման նկատմամբ: Հիվանդի վիճակը դինամիկ վատացել էր, զարգացել էր ուղեղաբնային Էնցեֆալիտի պատկեր, որն ի դեպ գնահատվել էր որպես կամուրջ – ուղեղիկային անկյան Նորագոյացություն: Հիվանդը մահացավ սրտի կանգից՝ հարաճող շլչառական անբավարարության ֆոնի վրա, ինչը բացատրվում է հարաճող Էնցեֆալիտով: Պաթոմորֆոլոգիական հետազոտությունը տեղային փոփոխությունները գնահատեց որպես տեղային բորբոքային-անոթային մալացիայի ենթարկված օջախներ:



Նկ. 5. Առաջնային ուղեղաբնային Էնցեֆալիտի դրսևորումներով ընթացող ՄՌՏ պատկեր: Կամուրջի ստորին հատվածում ձախից և ուղեղիկի ու ուղեղաբնի ամբողջ երկայնքով առկա է գլխուղեղի օջախային ախտահարում

Այդ հիվանդի մոտ առկա էր արյան շիճուկի բացասական ՊՇՌ: Չնայած դրան, կլինիկական ընթացքը և անամնեստիկ տվյալները թույլ են տալիս մտածել նեյրոբորելիոզի մասին:

Հիվանդի գլխուղեղի ՄՌՏ պատկերը արտացոլված է Նկ. 5-ում: Ի դեպ նմանատիպ ՄՌՏ պատկեր ներկայացված է Ռուսական Ազգային Ձեռնարկում: Հատկանշական է այն, որ մեր երկրում նմանատիպ հիվանդների գլխուղեղի բազմօջախային ախտահարումը գնահատվում է որպես ցրված սկլերոզ:

Եզրակացություն

Մեր կողմից նկարագրված կլինիկական դեպքերը ապացուցում են, որ Հայաստանում արդեն ունենք Լայմի հիվանդության հստակ դեպքեր, որքան էլ այն անհնարին թվա:

Արդի պայմաններում գոյություն ունեցող հստակ սահմանված ախտորոշիչ չափանիշները և բուժման ուղեցույցները համապատասխանում են ապացուցողական բժշկության պահանջներին՝ լայնորեն կիրառում գտնելով բազմաթիվ արևմտյան երկրներում: Այդ ամենը մանրակրկտորեն ներկայացված է սույն հոդվածում՝ ապահովելով բժիշկներին բավարար տեղեկատվությամբ և ընձեռնելով ճշգրիտ ախտորոշման և բուժման հնարավորություն Լայմի հիվանդության դեպքում:

Հայաստանի Հանրապետությունում Լայմի հիվանդության բացահայտումն, ինչպես նաև հիվանդության հարուցիչի փոխանցողի, բնական ռեզերվուարների ու հնարավոր Էնդեմիկ օջախների հայտնաբերման խնդիրները դեռևս մնում են չլուսաբանված: Այդ պատճառով կոչ ենք անում բոլոր մասնագետներին կապ հաստատել մեր Նախաձեռնող խմբի հետ հետագա ուսումնասիրությունները կատարելու նպատակով: Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում կազմակերպել տեղեկատվական միջոցառումներ բժիշկ-մասնագետների, ինչպես նաև հանրությանը իրազեկելու նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Centers for Disease Control and Prevention (CDC). Lyme disease: United States, 2003–2005. MMWR Morb Mortal Wkly Rep 2007;56:573–76
- Hildenbrand P., Craven E, Jones R, Nemeskal P. Lyme Neuroborreliosis: Manifestations of a rapidly emerging zoonosis. AJNR Am J Neuroradiol 30:1079–87
- Jensenius M, Parola P, Raoult D. Threats to international travellers posed by tick-borne diseases. Travel Med Infect Dis 2006;4:4–13. Epub 2004 Dec 20
- Aberer E. Lyme borreliosis: an update [in English, German]. J Dtsch Dermatol Ges 2007;5:406–14
- Hengge UR, Tannapfel A, Tying SK, et al. Lyme borreliosis. Lancet Infect Dis 2003;3:489–500
- Burgdorfer W, Barbour AG, Hayes SF, et al. Lyme disease: a tick-borne spirochetosis? Science 1982;216:1317–19
- Steere AC, Grodzicki RL, Kornblatt AN, et al. The spirochetal etiology of Lyme disease. N Engl J Med 1983;308:733–40
- Halperin JJ. Nervous system Lyme disease. J R Coll Physicians Edinb 2010; 40:248–55
- Ljostad U, Skogvoll E, Eikeland R, et al. Oral doxycycline versus intravenous ceftriaxone for European Lyme neuroborreliosis: a multicentre, non-inferiority, double-blind, randomised trial. Lancet Neurol 2008; 7: 690–695
- Oschmann P, Dorndorf W, Hornig C, Schafer C, Wellensiek HJ, Pflughaupt KW. Stages and syndromes of neuroborreliosis. J Neurol 1998; 245: 262–272
- Kruger H, Kohlhepp W, König S. Follow-up of antibioticly treated and untreated neuroborreliosis. Acta Neurol Scand 1990; 82: 59–67
- Mygland A., U. Ljostada, V. Fingerled, T. Rupprechte, E. Schmutzhardf and I. Steiner. EFNS guidelines on the diagnosis and management of European Lyme neuroborreliosis. European Journal of Neurology 2010, 17: 8–16
- Kohlhepp W, Oschmann P, Mertens HG. Treatment of Lyme borreliosis. Randomized comparison of doxycycline and penicillin G. J Neurol 1989; 236: 464–469
- Topakian R, Stieglbauer K, Nussbaumer K, Aichner FT. Cerebral vasculitis and stroke in lyme neuroborreliosis. Two case reports and review of current knowledge. Cerebrovasc Dis 2008; 26: 455–461
- Karlsson M, Hammers S, Nilsson-Ehle I, Malmberg AS, Wretling B. Concentrations of doxycycline and penicillin G in sera and cerebrospinal fluid of patients treated for neuroborreliosis. Antimicrob Agents Chemother 1996; 40: 1104–1107

SUMMARY

LYME DISEASE: A NEW HEALTHCARE ISSUE IN ARMENIA

Avagyan G.A., Khachatryan E.A., Sahakyan A.E., Sargsyan R.T., Koshtoyan H.O., Eghoyan K.N., Khachatryan L.R., Aleksanyan A.M., Avetisyan A.E., Karapetyan A.H., Manvelyan H.M.

YSMU, Department of Neurology

Lyme disease is an emerging infectious disease with a high prevalence and distribution in the Northern Hemisphere and accounting for 200000 cases annually in the US. There are several reports from the counties of Western Europe (Germany, Switzerland, Austria, Northern Italy, Czech Republic) about increasing evidence of the spread of Lyme disease. Precise diagnostics and treatment criteria are developed worldwide.

During the year of 2010 we diagnosed or had clinical im-

pression of Lyme disease in six patients in Armenia. This proves the presence of Lyme disease in our region. Thus, the necessity for further development of awareness programs for medical professionals is justified. Therefore, creation of a national program aimed at unveiling natural reservoirs, carriers, clinical presentation and introducing the criteria of precise diagnostics with effective treatment is essential.

РЕЗЮМЕ

БОЛЕЗНЬ ЛАЙМА: НОВАЯ ПРОБЛЕМА ЗДРАВООХРАНЕНИЯ В АРМЕНИИ

Авакян Г.А., Хачатрян Э.А., Саакян А.Е., Саркисян Р.Т., Коштойан Г.О., Егоян К.Н., Хачатрян Л.Р., Алексанян А.М., Аветисян А.Е., Карапетян А.Г., Манвелян О.М.

ЕГМУ, Кафедра неврологии

Болезнь Лайма представляет собой инфекционное заболевание с высокой распространенностью и встречаемостью в Северном полушарии. Только в США ежегодно регистрируются 200000 новых случаев. За последние годы отмечается увеличение как количества случаев, так и распространенности данной болезни в странах Западной Европы (Германии, Швейцарии, Австрии, Польше, северной части Италии и Чехии).

Во всем мире разработаны и успешно применяются четкие критерии диагностики и лечения болезни Лайма. В 2010 году мы установили диагноз или имели клинически обоснованное предположение о наличии болезни Лайма у шести пациентов в Армении, что доказывает наличие этого заболевания в нашем регионе.

Таким образом, обучение основным симптомам данного заболевания и дальнейшее повышение знаний медицинских работников для обеспечения своевременной диагностики и назначения целенаправленного лечения является оправданной необходимостью.

Максимальное распространение информационной осведомленности о болезни Лайма в нашей стране позволит создать национальную программу, направленную на выявление природных резервуаров, переносчиков, характерной клинической картины болезни и внедрение в ежедневную практику критериев диагностики с эффективным лечением.

ՀՏԴ: 616-056.7- 036.22 (479.25)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆ- ԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այվազյան Ա.Ա.¹, Եզանյան Գ.Ա.²¹ ԵՊԲՀ, թերապիայի թ.2 ամբիոն, ² ԵՊԲՀ, թերապիայի թ.1 ամբիոն

Պարբերական հիվանդությունը (ՊՀ) միագենային ժառանգական հիվանդություն է, ժառանգման աուտոսոմ-ռեցեսիվ ձևով [1]: Լինելով ժառանգական հիվանդություն՝ զարմանալիորեն տարածված է հայերի մոտ, ախտահարելով Երևանի բնակչության մոտ 1-2% [2, 3]: Եթե այս տեմպերով շարունակվի հիվանդացության աճը, ապա, ըստ մոտավոր հաշվարկների, շուրջ մեկ դար հետո հայ էթնոսի ներկայացուցիչների մոտ 30%-ը կարող է հիվանդ լինել ՊՀ-ով [4]: Բացի ՊՀ հիվանդացության աճի այս տեմպերը բացատրող մեխանիզմների հայտնաբերումից, արդեն իսկ այսօր խիստ այժմեական են դասական ժառանգաբանական կանխարգելման մեթոդների կիրառումը: Այդ գործընթացում անհրաժեշտ է գործի դնել ազգի ողջ ներուժը, որպեսզի խուսափենք գալիք դարի համազգային ժառանգաբանական աղետից: Այս առողջապահական հիմնահարցը լուծելիս շատ կարևոր է նաև հանրապետության տարբեր հատվածներում ուսումնասիրել հիվանդության տարածվածությունը, որպեսզի ավելի ռացիոնալ բաշխվի համապատասխան բուժկանխարգելիչ ծառայությունների ուժերը և ավելի ճիշտ հունով տարվի ժառանգաբանական հետազոտությունները: ՊՀ-ով հիվանդների բժշկական օգնության դիմելիության գնահատումը նույնպես խիստ կարևոր է սանիտարական-լուսավորչական աշխատանքների առավել ռացիոնալ կազմակերպման համար:

Նույնիսկ ճիշտ բուժման պայմաններում Հայաստանի Հանրապետությունում միայն դեղորայքային բուժման ամենամյա ծախսերը պետք է կազմեն մոտ 600 000 000 դրամ: Սխալ բուժման պայմաններում ամիլոիդոզով և այլ հիվանդություններով բարդանալու դեպքում տարեկան ունենում ենք բազմաթիվ կյանք-տարիների կորուստ, դրան գումարած զգալի ֆինանսական ծախսերը՝ կապված հեմոդիալիզի և երիկամային փոխպատվաստման հիմնահարցերի հետ: Ժառանգաբանական կանխարգելման և սան. լուս. աշխատանքների վրա ծախսելով համեմատաբար շատ ավելի քիչ միջոցներ, մենք կարող ենք նույնիսկ այսօր զգալիորեն թեթևացնել ազգի վրա ծանր Նստած այդ հոգսը, չխոսելով հաջորդող սերունդներին մեր զգալի օգնության մասին: Այդ աշխատանքներում անհրաժեշտ թվով մասնագետներ ներգրավելու համար խիստ անհրաժեշտ են լայնածա-

վալ համաճարակաբանական հետազոտությունները:

Այս առումով որոշակի աշխատանքներ արդեն կատարված են: Օրինակ, պրոֆ. Վ.Ա. Աստվածատրյանի ղեկավարած մանկական կլինիկայի աշխատակիցները կատարել են Երևանում բնակվող իրենց ծանոթ բժիշկների անկետային հարցում: Ըստ այդ տվյալների՝ ՊՀ-ով ախտահարված է Երևանի բնակչության մոտ 1%-ը: Սակայն այս աշխատանքում հաշվի չի առնված, որ նույնիսկ Երևանի տարբեր վայրերում ծնված հիվանդների մոտ խիստ տարբեր են ժառանգության օրինաչափությունները, և, բնականաբար, տարբեր կլինի և ՊՀ համաճարակաբանությունը [5]: Բացի այդ, հաշվարկները կատարված են ոչ թե ընդհանուր բնակչության, այլ սոցիալապես առանձին խմբաբանակի մոտ: Հանրապետության մասշտաբով այդ կլինիկայի կողմից կատարված աշխատանքները հիմնված են հիմնականում մանկական կլինիկաների և պոլիկլինիկաների տվյալների վրա, ինչը բնականաբար չի կարող արտահայտել հանրապետության իրական պատկերը: Այդ առումով նույնպես խիստ հնացած և թերի են Ս.Գ. Վարդանյանի տվյալները [6, 7], որոնք հիմնված են միայն 1-ին քաղաքային կլինիկական հիվանդանոցի արխիվային նյութերի վրա, ինչը տալիս է ՊՀ-ի զգալիորեն ավելի քիչ տարածվածության պատկեր, քան իրականում է: Ըստ 2000թ. մեր տվյալների՝ հիվանդացության թվերը նույնպես հեռու էին իրականից, տատանվելով Նախկին վարչատարածքային շրջաններում 0,0033-0,584% սահմաններում, ողջ հանրապետությունում կազմելով 0,209, իսկ Երևանում՝ 0,269% [9]: Մոտավորապես գնահատելու համար, թե որքանով են այդ տվյալները տարբերվում իրական պատկերից, Երևանի տարբեր հատվածների 7 պետական շենքերում, ինչպես նաև Երևանի հարակից 4 գյուղերում կատարվեց բնակիչների տուն առ տուն հարցում: Այդպիսի հարցման միջոցով պարզեցինք, որ մեր բնակչությունը ՊՀ եղած հիվանդներից ինֆորմացիա է տալիս միայն 22% դեպքերում: Մյուս կողմից այն ժամանակվա մեր կողմից կազմած ռեգիստրում ներկայացված էին այդ «բացահայտվող» հիվանդներից միայն 61%-ը: Մենք առաջարկել էինք մինչև ավելի մանրամասն համաճարակաբանական տվյալների ստանալը ղեկավարվել այդ հոդվածում բերված աղյուսակով, բազմապատկելով ստացված տվյալները հինգի [9]:


Տվյալ աշխատանքում մենք փորձել ենք հաշվարկել Հայաստանում ՊՅ-ով տառապող հիվանդներին՝ հիմնվելով ինչպես ստացիոնարների, այնպես էլ առողջապահության առաջին օղակներից ստացված տվյալների հիման վրա, դրանց գումարելով նաև առանձին բժշկների անհատական տվյալները:

Կազմվել է Երևանի ՊՅ հիվանդների ռեգիստր՝ ըստ Երևանի I քաղաքային կլինիկական հիվանդանոցի ռեմատաբանական և աղեստամոքսաբանական բաժանմունքների, 8-րդ կլինիկական հիվանդանոցի թերապևտիկ բաժանմունքի, «Էրեբունի» կլինիկական հիվանդանոցի, ներկայումս նույնանուն բժշկական կենտրոնի ռեմատաբանական, երիկամաբանական և աղեստամոքսաբանական բաժանմունքների, շտապ օգնության քաղաքային կլինիկական հիվանդանոցի, հետագայում «Շտապ օգնություն» գիտաբժշկական կենտրոնի, ներկայումս «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի երիկամաբանական բաժանմունքի, 4-րդ քաղաքային մանկական կլինիկական հիվանդանոցի սոմատիկ բաժանմունքի, Հանրապետական կլինիկական հիվանդանոցի, ներկայումս «Արմենիա» բժշկական կենտրոնի գերմշումային թթվածնաբուժության, երիկամաբանական և աղեստամոքսաբանական բաժանմունքների, Հանրապետական զինվորական հոսպիտալի թերապևտիկ բաժանմունքի 1972-2008 թթ. ստացիոնար մատյանների տվյալների, պարբերական հիվանդության հանրապետական նախկին գիտագործնական կենտրոնի կոլիսիցիների բաշխման մատյանների, Երևանի և մարզերի բժշկական կենտրոնների և պոլիկլինիկաների պաշտոնական տվյալների, հանրապետական զինվորական պոլիկլինիկայի, ինչպես նաև Երևանի պետական բժշկական հանալսարանի մանկաբուժության թ. 1 ամբիոնի կողմից տրամադրած տվյալների հիման վրա: Ռեգիստրում ընդգրկվել են նաև պրոֆ. Ա.Ա. Այվազյանի, պրոֆ. Գ.Ա. Եգանյանի, պրոֆ. Ա.Ա. Այվազյանի մոտ անհատական կոնսուլտացիայի համար դիմած հիվանդները, ինչպես նաև կատամետստիկ հետազոտությունների ժամանակ հիվանդների կողմից նշված ՊՅ-ով տառապող բարեկամները:


Ստացված տվյալները բերված են ստորև, չնայած, պետք է նշել, որ նույնիսկ այս թվերը զգալիորեն գիջում են ՊՅ-ի իրական տարածվածությանը [8]: Բնակչության թիվը վերցված է ըստ ՀՀ 2001 թ. մարդահամարի և բնակչության պայմանների հաշվառման արդյունքների տվյալների: Ռեգիստրում գրանցված ՊՅ անձանց թիվը տրված է 2008-2009 թ.թ. դրությամբ (աղ. 1, նկարներ 1 և 2):

Այս տվյալների հիման վրա կազմվել է ՊՅ տարածվա-


ծության բարտեզը (նկ. 3):



Նկ. 1 ՊՅ անձանց բաշխումը ՀՀ-ի մարզերով (բացարձակ թվերը)



Նկ. 2 ՊՅ տարածվածությունը (%) ՀՀ-ի մարզերում



Նկ. 3 Հայաստանում ՊՅ տարածվածության բարտեզ

Ինչպես երևում է բերված տվյալներից, ՊՅ ամենաբարձր հիվանդացությունը դիտվում է Երևանում, ինչպես նաև Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում, չնայած դա կարող է լինել նաև ի հաշիվ երևանում ախտորոշման ավելի բարձր տոկոսի կամ

Աղյուսակ 1

ՊՀ տարածվածությունը Հայաստանի առանձին մարզերում

Մարզի հ/հ	Մարզի անվանումը	Բնակչության թիվը	Գրանցված ՊՀ հիվանդների թիվը	%	m _p
1	Երևան	1091235	5951	0,55	0,007
2	Արագածոտն	126278	379	0,30	0,015
3	Արարատ	252665	707	0,28	0,011
4	Արմավիր	255861	830	0,32	0,011
5	Գեղարքունիք	215371	997	0,46	0,015
6	Լոռի	253351	722	0,28	0,011
7	Կոտայք	241337	1019	0,42	0,013
8	Շիրակ	257242	976	0,38	0,012
9	Սյունիք	134061	230	0,17	0,011
10	Վայոց Ձոր	53230	180	0,34	0,025
11	Տավուշ	121963	219	0,18	0,012
12	ՀՀ	3002594	12210	0,41	0,004

P	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	#	***	***	***	***	***	***	***	***	***	***
2		#	NS	NS	***	NS	***	***	***	NS	***
3			#	*	***	NS	***	***	***	*	***
4				#	***	*	***	***	***	NS	***
5					#	***	**	***	***	***	***
6						#	***	***	***	*	***
7							#	*	***	**	***
8								#	***	NS	***
9									#	***	NS
10										#	***
11											#

Ծանոթագրություն՝ ք. Երևանի (1) և մարզերի (2-11) միջև տարածվածության տարբերության հավաստիության աստիճանը՝ ***-P<0,001; ** - P<0,01; *-P<0,05; NS - P>0,05:

բուժփնմարկներ դիմելիության ավելի բարձր մակարդակի: Համեմայն դեպս բերված տվյալները կարող են

օգնել ՀՀ-ի մարզերում բուժօգնության կազմակերպման հարցերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Pras E., Aksentijevich I., Levy E., Gruberg L., Prosen L., Dean M., Pras M., Kastner D.L. The gene causing familial Mediterranean fever maps to the short arm of chromosome 16 in Druze and Moslem Arab families. Human Genetics 1994; 94(5): 576-577.
- Аствацатрян В.А., Торосян Е.Х., Оганян Н.А. Исследование популяционной частоты периодической болезни в условиях г. Еревана. В сб.: Материалы научно-практической конференции педиатров (14-15 окт. 1993 г.), Ереван, 1994, 31.
- Аствацатрян В.А., Саргсян С.Г. Некоторые клинико-эпидемиологические особенности периодической болезни у детей. В сб.: Материалы научно-практической конференции педиатров (14-15 окт. 1993 г.), Ереван, 1994, 37.
- Հարությունյան Վ.Մ. Պարբերական հիվանդության գիտական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում և նրա ախտածագման ժամանակակից ուղղությունները, Երևան, 1998, 30 էջ.
- Նազարբեյան Է.Ե., Այվազյան Ա.Ա., Ոսկանյան Ա., Նահապետյան Կ.Մ., Եմիլյան Մ.Բ. Պարբերական հիվանդության հաճախականությունը Երևանի տարբեր հատվածներում ծնված պարբերական հիվանդությամբ տառապողների թույլների և եղբայրների մոտ. Մեդիցինական Վեստնիկ Էրեբունի 2000; 1(1): 24-28.
- Вартанян С.Г. Влияние некоторых факторов внешней среды на возникновение и течение периодической болезни. Дисс. ... канд. Мед. Наук, Ереван, 1987.
- Вартанян С.Г. Распространение периодической болезни в Армянской ССР. В кн.: Вопросы диагностики и лечения периодической болезни, Ереван, 1987, 141-145.
- Торосян Е.Х. Периодическая болезнь в Армении. форма наследования и концепция этиопатогенеза, моделирование клинического течения и классификация у детей. Автореф. ... докт.мед.наук, Ереван, 1996.
- Նազարբեյան Է.Ե., Այվազյան Ա.Ա., Ոսկանյան Ա.Գ., Եղյան Ա.Գ., Սևոյան Մ.Կ. Հայաստանում պարբերական հիվանդության տարածվածության մասին. Տեսական և կլինիկական բժշկության հարցեր 2000; 3(3): 6-9:

SUMMARY

PREVALENCE OF FAMILIAL MEDITERRANEAN FEVER IN ARMENIA

Ayvazyan A.I.A.¹, Yeganyan G.A.²¹ YSMU, Department of Therapy No. 2, ² YSMU, Department of Therapy No. 1

Familial Mediterranean Fever (FMF) is hereditary disease with autosomal-recessive form of inheritance and with expressed ethnic (Armenians, Jews, Arabs) predisposition to affection. It is spread among 1-2% of residents of Yerevan. The quantity of patients in recent years shows an obvious tendency towards increasing and it partly speaks about better detectability, but on the other hand – about natural accumulation of mutant genes in the Armenian population. Despite it, no precise data about prevalence of FMF in different regions of Armenia are available till

now either in the RA Ministry of Health, or in any other scientific institution or its division that is engaged in studying of this problem. According to the objectives and problems of the thematic plan of the scientific works for 2008-2010, financed by the RA Ministry of Education and Science, research of FMF prevalence in different regions of Armenia and Artsakh (Nagorno-Karabakh Republic) has been carried out. The results of the comparative research, their analysis and the map of FMF prevalence in Armenia are presented in the given work.

РЕЗЮМЕ

О РАСПРОСТРАНЕННОСТИ ПЕРИОДИЧЕСКОЙ БОЛЕЗНИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Айвазян Ал.А.¹, Еганян Г.А.²¹ ЕГМУ, кафедра Терапии №2, ² ЕГМУ, кафедра Терапии №1

Ключевые слова: периодическая болезнь, карта распространенности болезни по регионам Армении.

Периодическая болезнь (ПБ) является наследственным заболеванием с аутосомно-рецессивной формой передачи и с выраженной этнической (армяне, евреи, арабы) предрасположенностью к поражению. Она встречается у 1-2% жителей Еревана. Количество больных последние годы проявляет явную тенденцию к росту, и это отчасти объясняется лучшей выявляемостью, но с другой стороны - естественным накоплением мутантных генов в армянской популяции. Несмотря

на это, точные данные о распространенности ПБ в разных регионах Армении до сих пор не имелись ни в МЗ РА, ни в каком-либо научном учреждении или его подразделении, занимающихся данной проблемой. В соответствии с целью и задачами тематического плана научных работ на 2008-2010 гг., финансируемых Министерством Образования и Науки РА, было проведено исследование распространенности ПБ по отдельным марзам Армении и в Арцахе. Результаты сравнительного исследования, их анализ и карта распространенности ПБ в Армении представлены в данной работе.

ՀՏԴ: 616.61-056.7-091

ԵՐԻԿԱՄՆԵՐԻ ՈՉ ԱՄԻԼՈՒԴԱՅԻՆ ԱՆՏԱՅԱՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Խոստիկյան Ն.Գ., Եզանյան Գ.Ա., Համբարձումյան Ս.Վ.

ԵՊԲՀ, ախտաբանական անատոմիայի ամբիոն, թերապիայի թիվ 1 ամբիոն

Բանալի բառեր՝ պարբերական հիվանդություն, երիկամախտային ամիլոիդոզ, ներմազանոթային և արտամազանոթային գլոմերուլոնեֆրիտ, հյուսվածաբանական ախտորոշում

Արդիականությունը

Պարբերական հիվանդությունը (ՊՀ), որը կլինիկորեն արտահայտվում է պարբերական տենդի նոպաներով և շճաթաղանթների բորբոքումով, հաճախ բարդանում է երկրորդային ամիլոիդոզով [1, 2, 3, 4, 6, 12]: Երիկամների ամիլոիդային ախտահարումը պարբերական հիվանդության հաճախակի և առավել ծանր բարդություններից է: Այն հանգեցնում է երիկամային անբավարարության և մահվան՝ համեմատաբար երիտասարդ տարիքում կամ անհրաժեշտ է լինում հիվանդի ամբողջ կյանքի ընթացքում պահպանողական բուժում իրականացնել հեմոդիալիզի միջոցով [8]:

Երիկամների ամիլոիդոզի վաղ հայտնաբերման և ճիշտ ժամանակին բուժման դեպքում հնարավոր է դանդաղեցնել ամիլոիդային դեպոզիտների կուտակումը հյուսվածքում կամ ընդհանրապես այն կասեցնել: Ամիլոիդը նույնիսկ մասնակիորեն կարող է ռեգրեսիայի ենթարկվել: Ապացուցված է, որ որքան վաղ է սկսվում ամիլոիդոզի բուժումը, այնքան այն արդյունավետ է [5, 11]:

Աշխատանքում իրականացված է ՊՀ օրգանային ախտահարումների և մասնավորապես երիկամների ձևաբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն՝ դիախեռման և պունկցիոն-բիոպսիոն նյութի վերլուծության հիման վրա, երիկամների ամիլոիդոզի և ոչ ամիլոիդային ախտահարումների, ինչպես նաև տանտոզենեզում գերակայող այլ ամիլոիդային ախտահարումների բացահայտում և գնահատում:

Հետազոտության նյութը և մեթոդները

Այդ նպատակով կատարվել է բազմաօրգանային կլինիկաձևաբանական վերլուծություն, որի համար որպես ուսումնասիրման նյութ ծառայել են պարբերական հիվանդության բարդություններից մահացածների 45 դիակ (սեկցիոն նյութ): Ուսումնասիրվել է նաև ՊՀ կրծքային, որովայնային և խառը ձևերով տառապող 20 հի-

վանդների երիկամների պունկցիոն-բիոպսիոն նյութը:

Ուսումնասիրման նյութը բաշխվել է ըստ հիվանդության կլինիկական ախտորոշման, շրջանների, տարիքային խմբերի, մանիֆեստացիայի տարիքի: Սեկցիոն նյութում 32 դեպքերում կլինիկորեն ախտորոշված է եղել ՊՀ խառը, 10 դեպքերում՝ որովայնային, 3 դեպքում՝ կրծքային ձևը: Հիվանդության մանիֆեստացիայի տարիքը 16 դեպքերում եղել է մինչև 5 տարեկան, 22 դեպքերում՝ մինչև 20, 7 դեպքերում՝ 20 տարեկան և ավելի: Ըստ գենետիկական վերլուծության տվյալների, որը կատարված էր ընդամենը 23 դեպքում, 9 դեպքում հայտնաբերված է M694V հոմոզիգոտ մուտացիա, 6 դեպքում՝ M694V/V726A, 3 դեպքում՝ M694V/M680I, 2 դեպքում՝ M680I/V726A, և 3 դեպքում՝ այլ մուտացիաներ:

Երիկամները մակրոսկոպիորեն պինդ էին և մեծացած, իսկ որոշ դեպքերում սովորական չափերի կամ մի քիչ փոքրացած, մակերեսին՝ սպիական ներանկումներով: Հյուսվածաբանական նյութը վերցվել է երիկամների կեղևային և միջուկային շերտերից: Հյուսվածքային կտորները ֆիքսվել են 10% ֆորմալինի լուծույթում, ենթարկվել են պարաֆինային ներծծման, այնուհետև պատրաստվել են հատածներ՝ 3-4 միկրոն հաստությամբ: Պարաֆինային հատածները ներկվել են հեմատոքսիլին եոզինով, կոնգո կարմիրով, մեթիլ վիոլետով (Sigma Aldrich, Գերմանիա):


Արդյունքների քննարկումը

ՊՀ-ի բարդություններից մահացածների դիախեռման տվյալները վկայել են, որ հաճախ համակարգային ամիլոիդոզը ներքին օրգաններում բնորոշվել է ամիլոիդի առավել արտահայտված կուտակումներով երիկամներում, փայծաղում, էնդոկրին գեղձերում, ավելի նվազ՝ լյարդում, աղիներում, սրտում, թոքերում, ենթամաշկային ճարպաբջջանքում:


Երիկամային ամիլոիդոզը որպես ՊՀ-ի առավել հաճախ հանդիպող բարդություն, հանգեցրել է երիկամների ամիլոիդային կնճռոտման և երիկամային անբավարարության, որն էլ մեր կողմից ուսումնասիրված դեպքերում ՊՀ-ով հիվանդների մեծամասնության (84%) մահվան պատճառ է հանդիսացել:

Նեֆրոլոգիայի համաշխարհային կոնգրեսում հաստատված դասակարգման համաձայն՝ (Սինգապուր-2007) երիկամային ամիլոիդոզի դասակարգումը սկզբունքորեն պայմանավորված է կծիկներում ամիլոիդային դեպոզիտների քանակական գնահատականով: Այս համակարգը տարիների ընթացքում որոշակի փոփոխությունների է ենթարկվել և ներկայումս հայտնի դասակարգման համաձայն, երիկամային ամիլոիդոզի ախտորոշման համար առաջարկվել և կիրառություն է գտել “Scoring and grading system”-ը (2010), ըստ որի առանձնացնում են երիկամային ամիլոիդոզի 6 դաս [10]: Մեր կողմից ուսումնասիրված սեկցիոն նյութում երիկամների ամիլոիդոզը բնորոշվել է փոփոխություններով, որոնք ըստ նշված դասակարգման, ընդգրկված են III-VI դասերում: Երիկամների պունկցիոն- բիոպսիոն նյութում փոփոխությունները դասակարգվել են I-VI դասերում:


Հյուսվածաբանական ուսումնասիրությամբ երիկամներում հայտնաբերվել են ամիլոիդի կուտակումներ բրգերում՝ ուղիղ անոթների և հավաքող խողովակների ուղղությամբ, կծիկներում՝ մեզանգիոմում, Էնդոթելի տակ, անոթների պատերում, խողովակների սեփական թիթեղի ուղղությամբ (նկ. 1-4): Մոտակա և հեռակա խողովակներում հայտնաբերվել է էպիթելի արտահայտված հիալինակաթիլային և վակուոլային դիստրոֆիա: Խողովակների լուսանցքներում առկա են սպիտակուցային զանգվածներ, հիալինային գլաններ, պոկված էպիթելիային բջիջներ: Նշված փոփոխություններն ուղեկցվել են երիկամների միջանկյալ հյուսվածքի լիմֆո- հիստիոցիտային և լեյկոցիտային ներսփռանքներով: Որոշ տեղամասերում աչքի է ընկել երիկամի միջուկային շերտում անգիոմատոզը՝ Էնդոթելի պրոլիֆերացիայով:




Նկ. 1. Ամիլոիդ երիկամի կծիկներում և անոթների պատերում, կոնգր կարմիր x400, VI դաս



Նկ. 2. Ամիլոիդ երիկամի կծիկներում և անոթների պատերում, մեթիլ վիոլետ, x400, VI դաս



Նկ. 3. Կծիկներն ամբողջովին զբաղեցված են ամիլոիդ նյութով, խողովակների լուսանցքում առկա են հիալինային գլաններ, մեթիլ վիոլետ, x400, VI դաս




Նկ. 4. Ամիլոիդ տուբուլոիդներ ստիգիալ հյուսվածքում, հեմատոքսիլին Էոզին, x100, IV դաս

Երիկամների ամիլոիդային ախտահարումը կլինիկորեն արտահայտվել է սպիտամիզությամբ, նեֆրոտիկ համախտանիշով և երիկամային անբավարարությամբ:

Սակայն հստակ փոխկապակցվածություն կլինիկական ախտանիշների և ձևաբանական փոփոխությունների՝ մասնավորապես ամիլոիդային դեպոզիտների արտահայտվածության միջև չի դիտվել:

Մի շարք դեպքերում երիկամներում հայտնաբերվել են ֆոկալ մեզանգիոմազանոթային ամիլոիդային դեպոզիտներ (սկ. 5) հանգուցավոր ամիլոիդոզի ձևով (III դաս՝ կծիկում մազանոթային հանգուցների 26-50%-ի ընդգրկումով): Այն երբեմն ուղեկցվել է մեզանգիոցիտների չափավոր կամ լավ արտահայտված պրոլիֆերացիայով:




Նկ. 5. Կծիկներում ամիլոիդի լոբուլյար, օջախային կուտակումներ, հեմատոքսիլին եռգին, x400, III դաս

Հայտնաբերվել է նաև փոխկապակցվածություն ամիլոիդային կուտակումների տարածվածության, միջանկյալ հյուսվածքի ֆիբրոզի և բորբոքային ռեակցիայի միջև:


Երիկամների ախտահարումը մեր կողմից ուսումնասիրված նյութում կրել է նաև ոչ ամիլոիդային բնույթ: Վերջիններս, ըստ մեր կողմից կատարված դիախեռմաների տվյալների, հայտնաբերվել են 7 ՊՀ-ի բարդություններից մահացածների մոտ (15,5%): Այն արտահայտվել է ներմազանոթային կամ արտամազանոթային պրոդուկտիվ գլոմերուլոնեֆրիտի ձևով: Ներմազանոթային գլոմերուլոնեֆրիտը միկրոսկոպիորեն արտահայտվել է կծիկների խոշոր չափերով, նրանց գերբջջայնությամբ, մեզանգիոցիտների պրոլիֆերացիայով (սկ. 6):

Որոշ դեպքերում ՊՀ-ով պայմանավորված երիկամների ամիլոիդոզն ուղեկցվել է գլոմերուլոնեֆրիտով: Ներմազանոթային գլոմերուլոնեֆրիտը 3 դեպքերում զուգակցվել է ամիլոիդոզով, որն արտահայտվել է առանձին մազանոթային հանգուցներում ամիլոիդի փոքր լոբուլյար կուտակումներից մինչև կծիկների մեծ մասի ամիլոիդով տեղակայումով: Արտամազանոթային պրոդուկտիվ գլոմերուլոնեֆրիտը, որն արտահայտվել է կիսալուսինների տեսքով նեֆրոթելի պրոլիֆերա-

ցիայով, 2 դեպքերում զուգակցվել է երիկամային կծիկային հանգուցների ամիլոիդոզով (սկ. 7):



Նկ. 6. Մեզանգիոպրոլիֆերատիվ գլոմերուլոնեֆրիտ, հեմատոքսիլին եռգին, x400



Նկ. 7. Արտամազանոթային պրոդուկտիվ գլոմերուլոնեֆրիտ՝ ուղեկցված կծիկային հանգուցների ամիլոիդոզով, հեմատոքսիլին եռգին, x400

Այսպիսով՝ մեր կողմից ուսումնասիրված բոլոր ՊՀ բարդություններից մահացածների մոտ առկա է եղել երիկամների ախտահարում, որը, սակայն, տարբեր դեպքերում տարբեր բնույթ և արտահայտվածություն է ունեցել: Այն դրսևորվել է ամիլոիդոզի և գլոմերուլիտի ձևով: Վերջինս որոշ դեպքերում որպես ֆոն է հանդիսացել և ուղեկցել է երիկամի ամիլոիդոզը: Կամ էլ, հնարավոր է, որ ձևավորվել է՝ ի պատասխան օտար նյութի հանդիսացող ամիլոիդի կուտակումին: Իսկ մյուս դեպքերում գլոմերուլիտը հանդես է եկել որպես ինքնուրույն ձև, բնորոշվել խրոնիկ ընթացքով՝ հանգեցնելով երիկամի կնճռոտման և երիկամային անբավարարության:

Մեծ հետաքրքրություն է առաջացնում նաև այն փաստը, որ երիկամների ոչ ամիլոիդային բնույթի ախ-

տահարումները, կամ դրանք՝ զուգակցված առանձին կծիկների ոչ մեծ ամփոփոյին կուտակումներով, հաճախ ուղեկցվել են ՊՅ-ին համեմատաբար քիչ բնորոշ ախտահարումներով, ինչպես օրինակ՝ սրտի ամփոփոյով:

Ամփոփում

Այսպիսով՝ կլինիկական և սեկցիոն նյութի համատեղ վերլուծությունից պարզվել է, որ ուսումնասիրված դեպքերի մեծամասնությունում կլինիկորեն գերակայել է երիկամախտային (սեֆրոպաթիկ) ամփոփոյով, և երիկամների այս կամ այն չափով դրսևորված ախտահարումներ հայտնաբերվել են բոլոր սեկցիոն դեպքերում: Երիկամների ախտահարումները կրել են ոչ միայն ամփոփոյին, այլև ոչ ամփոփոյին բնույթ: Վերջինս հյուսվածաբանորեն արտահայտվել է ներմազանոթային, իսկ երբեմն էլ՝ արտամազանոթային պրոդուկտիվ գլոմերուլոնեֆրիտի ձևով:

Որոշ դեպքերում երիկամային ամփոփոյով բավականաչափ արտահայտված չի եղել և աչքի են ընկել միայն կծիկների մազանոթների բազալ թաղանթների հաստացումը և մեզանգիոցիտների պրոլիֆերացիան և միայն առանձին կծիկներում հայտնաբերվել են ամփոփոյին նուրբ դեպոզիտներ կամ փոքր հանգուցավոր

կուտակումներ: Երիկամների ոչ ամփոփոյին ախտահարումները և ամփոփոյով ուղեկցված գլոմերուլիտը դրսևորվել են երիկամային համեմատաբար արագ զարգացող անբավարարությամբ: Երիկամների ոչ ամփոփոյին ախտահարումները պոնկցիոն-բիոպսիոն նյութում ոչ միշտ են հայտնաբերվել և գնահատվել են որպես ամփոփոյով բացակայություն երիկամներում:

Многочисленные исследования показали эффективность самолигирующих брекетов при смене ортодонтической дуги. В своем исследовании Shivapuja и Berger [30] выявили, что по сравнению с традиционными брекетами, меньше рабочего времени требуется для извлечения и постановки ортодонтической дуги. В противоположность этому, Harradine [18] обнаружил незначительные различия при использовании самолигирующих и традиционных брекетов. В своем исследовании Turnbull и Birine [31] выявили, что при использовании самолигирующих брекетов лигирование дуг осуществляется примерно в два раза быстрее, особенно эта разница увеличивается на поздних стадиях лечения, когда используются дуги большего диаметра.

Общеизвестно, что дискомфорт является одной из потенциальных проблем при использовании несъемной ортодонтической техники и может стать причиной отказа от соответствующего лечения [32-36]. Важным фактором является величина силы, применяемой к зубному ряду посредством дуги. Как известно, легкие силы более эффективны и менее травматичны [37]. Было выявлено, что пик боли длится при первичной постановке дуги примерно 24 часа, а потом начинает ослабевать. В своем исследовании Miles [19] оценивал различия степени дискомфорта при использовании традиционных и самолигирующих пассивных брекетов в первые несколько дней после постановки дуги, а также после ее смены.

Также были оценены: комфорт губ, их предпочтительное положение и недостатки при фиксации брекетов. Традиционные брекеты менее комфортны при использовании начальной дуги. Однако, после 10 недель больше пациентов жаловалось на дискомфорт при использовании брекетов Damon2. Автор сделал выводы, что на начальном этапе Damon2 менее болезненны, но при постановке второй дуги они становятся более болезненными, наверное, исходя из более выраженного неправильного положения зубов на данном этапе использования пассивных самолигирующих брекетов. Альтернативно, дискомфорт со второй дугой был оценен сразу после постановки дуги, процесс лигирования и опыт оператора, который ставит дугу также может оказать влияние на полученные результаты. Вышеполученные результаты совпадали с результатами другого *in vitro* исследования, где моменты, генерируемые в процессе постановки 0,014" x 0,025" медно-никелево-титановой дуги, намного превышали таковые при использовании брекетов Damon2, по сравнению с традиционными и интерактивными In-Ovation R брекетами. Это объясняется тем фактом, что для того, чтобы закрыть паз брекета Damon, необходимо чтобы дуга полностью находилась в пазах брекета, в то время как в двух других случаях эластичность "О" колец и никель-титановая клипса допускают определенный момент диссипации. В своем исследовании Fleming et al. [38] оценил разницу степени возникновения боли при извлечении и постановке ортодонтической дуги между самолигирующимися брекетами SmartClip и традиционными брекетами Victory. После фиксации брекетов и постановки дуги Ni-Ti 0,016", боль регистрировалась через 4, 24, 72 часов и 7 дней с использованием VAS (visual analogue scale) опросника. Боль регистрировалась также на более поздних этапах лечения при постановке дуги 0,019" x 0,025". Авторы выявили, что при использовании дуги Ni-Ti 0,016" отсутствовали различия в степени боли в каком-либо временном промежутке. Однако, значительно больший дискомфорт наблюдается при постановке и снятии дуги 0,019"x0,025" с использованием брекетов SmartClip. В своем исследовании Scott et al. [39] сравнил степень возникновения дискомфорта в период начального ортодонтического перемещения зубов при использовании самолигирующих брекетов Damon3 и традиционных брекетов Synthesis. Дискомфорт оценивался на начальном этапе при использовании медно-никелево-титановой дуги 0,014", с применением опросника VAS (visual analogue scale) в различных временных интервалах. Авторами не было выявлено каких-либо различий. Здесь следует учитывать тот факт, что срав-

нения были проведены только на стадии использования круглой Ni-Ti дуги 0,014".

Итак, вышеперечисленные исследования выявили, что отсутствуют конкретные данные, утверждающие, что самолигирующие брекеты более эффективны, чем традиционные, в то время как в некоторых случаях полученные статистически достоверные различия клинически не столь важны. Даже результаты идентичных исследований в этой области зачастую противоречат друг другу, что препятствует созданию целостного представления о проблеме, усложняя полноценное ориентирование в показаниях выбора оптимальной несъемной техники при лечении различных зубочелюстных аномалий, для достижения высокого конечного морфофункционального и эстетического результата. Кроме того, количество

публикаций в настоящее время лимитировано и доступные данные для некоторых брекет-систем в литературе отсутствуют, что также указывает на необходимость для дальнейших сравнительных оценок различных брекет-систем. В связи с этим представляется уместным проведение исследований, направленных на изучение влияния самолигирующих брекетов на определенные аспекты морфологии, функции и эстетики зубочелюстной системы.

В заключение, хотелось бы отметить, что еще многое предстоит изучить в аспекте более эффективного использования самолигирования. Несмотря на это, очевидно, что роль данных "умных" брекетов при ортодонтическом лечении еще больше возрастет в ближайшем будущем.

ЛИТЕРАТУРА

- Harradine NW. Self-ligating brackets: where are we now? *J Orthod* 2003; 30: 262-273
- Berger JL. The SPEED System: an overview of design and clinical performance. *Semin Orthod* 2008; 14: 54-63
- Khambay B, Millett D, McHugh S. Evaluation of methods of archwire ligation on frictional resistance. *Eur J Orthod* 2004; 26: 327-332
- Cacciafesta V, Sfondrini MF, Ricciardi A, Scribante A, Klersy C, Auricchio F. Evaluation of friction of stainless steel and esthetic self-ligating brackets in various bracket-archwire combinations. *Am J Orthod Dentofac Orthop* 2003; 124: 395-402
- Griffiths HS, Sherriff M, Ireland AJ. Resistance to sliding with 3 types of elastomeric modules. *Am J Orthod Dentofac Orthop* 2005; 127: 670-675
- Thomas S, Sherriff M, Birnie D. A comparative in vitro study of the frictional characteristics of two types of self-ligating brackets and two types of preadjusted edgewise brackets tied with elastomeric ligatures. *Eur J Orthod* 1998; 20: 589-596
- Hain M, Dhoptkar A, Rock P. The effect of ligation method on friction in sliding mechanics. *Am J Orthod Dentofac Orthop* 2003; 123: 416-422
- Pizzoni L, Ravnholt G, Melsen B. Frictional forces related to self-ligating brackets. *Eur J Orthod* 1998; 20: 283-291
- Shivapuja PK, Berger J. A comparative study of conventional ligation and self-ligation bracket systems. *Am J Orthod Dentofac Orthop* 1994; 106: 472-480
- Berger JL, Byloff FK. The clinical efficiency of self-ligated brackets. *J Clin Orthod* 2001; 35: 304-308
- Sims AP, Waters NE, Birnie DJ, Pethybridge RJ. A comparison of the forces required to produce tooth movement in vitro using two self-ligating brackets and a pre-adjusted bracket employing two types of ligation. *Eur J Orthod* 1993; 15: 377-385
- Eliades T, Brantley WA, Eliades G. Orthodontic brackets. In: Brantley WA, Eliades T (eds) *Orthodontic Materials: Scientific and Clinical Aspects*. Stuttgart: Thieme, 2001: 143-172
- Blake M, Woodside DG, Pharoah MJ. A radiographic comparison of apical root resorption after orthodontic treatment with the edgewise and SPEED appliances. *Am J Orthod Dentofac Orthop* 1995; 108: 76-84
- Kula K, Phillips C, Gibilaro A, Proffit WR. Effect of ion implantation of TMA archwires on the rate of orthodontic sliding space closure. *Am J Orthod Dentofac Orthop* 1998; 114: 577-580
- Kusy RP, Whitley JQ. Effects of sliding velocity on the coefficients of friction in a model orthodontic system. *Dent Mater* 1989; 5: 235-240
- Eliades T, Eliades G, Athanasiou AE, Bradley TG. Surface characterization of retrieved NiTi orthodontic archwires. *Eur J Orthod* 2000; 22: 317-326
- Eberting JJ, Straja SR, Tuncay OC. Treatment time, outcome, and patient satisfaction comparisons of Damon and conventional brackets. *Clin Orthod Res* 2001; 4: 228-234
- Harradine NW. Self-ligating brackets and treatment efficiency. *Clin Orthod Res* 2001; 4: 220-227
- Miles PG, Weyant RJ, Rustveld L. A clinical trial of Damon2 versus conventional twin brackets during initial alignment. *Angle Orthod* 2006; 6: 480-485
- Pandis N, Polychronopoulou A, Eliades T. Selfligating vs conventional brackets in the treatment of mandibular crowding: a prospective clinical trial of treatment duration and dental effects. *Am J Orthod Dentofac Orthop* 2007; 132: 208-215
- Henao S, Kusy R. Frictional evaluations of dental typodont models using four self-ligating designs and a conventional design. *Angle Orthod* 2004; 75: 75-85
- Scott P, DiBiase A, Sherriff M, Cobourne M. Alignment efficiency of Damon3 self-ligating and conventional orthodontic bracket systems: a randomized clinical trial. *Am J Orthod Dentofac Orthop* 2008; 134: 470.e1-8
- Fleming P, DiBiase AT, Sarri G, Lee RT. A comparison of the efficiency of mandibular arch alignment with two preadjusted edgewise appliances. *Am J Orthod Dentofac Orthop* 2009; 135:597-602
- Franchi L, Baccetti T, Camporesi M, Lupoli M. Maxillary arch changes during leveling and aligning with fixed appliances and low-friction ligatures. *Am J Orthod Dentofac Orthop* 2006; 130: 88-91
- Germane N, Lindauer SJ, Rubenstein LK, Revere JH, Isaacson RJ. Increase in arch perimeter due to orthodontic expansion. *Am J Orthod Dentofac Orthop* 1991; 100: 421-427
- Pandis N, Strigou S, Eliades T. Maxillary incisor torque with conventional and self-ligating brackets: a prospective clinical trial. *Orthod Craniofac Res* 2006; 9: 193-198
- Miles PG. Self-ligating vs conventional twin brackets during en-masse space closure with sliding mechanics. *Am J Orthod Dentofac Orthop* 2007; 132: 223-235
- Bokas J, Woods M. A clinical comparison between nickel titanium springs and elastomeric chains. *Aust Orth J* 2006; 22: 39-46
- Southard TE, Marshall SD, Grosland NM. Friction does not increase anchorage loading. *Am J Orthod Dentofac Orthop* 2007; 131: 412-414
- Shivapuja PK, Berger J. A comparative study of conventional ligation and self-

- ligation bracket systems. Am J Orthod Dentofac Orthop 1994; 106: 472–480
31. Turnbull NR, Birnie DJ. Treatment efficiency of conventional vs self-ligating brackets: effects of archwire size and material. Am J Orthod Dentofac Orthop 2007; 131: 395–399
32. Kvam E, Bondevik O, Gjerdet NR. Traumatic ulcers and pain in adults during orthodontic treatment. Comm Dent Oral Epidemiol 1989; 17: 154–157
33. Scheurer PA, Firestone AR, Bürgin WB. Perception of pain as a result of orthodontic treatment with fixed appliances. Eur J Orthod 1996; 18: 349–357
34. Oliver RG, Knapman YM. Attitudes to orthodontic treatment. Br J Orthod 1985; 12: 179–188
35. Sergl HG, Klages U, Zentner A. Functional and social discomfort during orthodontic treatment – effects on compliance and prediction of patients' adaptation by personality variables. Eur J Orthod 2000; 22: 307–315

36. Patel V. Non-completion of active orthodontic treatment. Br J Orthod 1992; 19: 47–54
37. Reitan K. Selecting forces in orthodontics. Transaction of the European Orthodontic Society 1956; 108–125
38. Fleming PS, DiBiase AT, Sarri G, Lee RT. Pain experience during initial alignment with a self-ligating and a conventional fixed orthodontic appliance system: a randomized controlled clinical trial. Angle Orthod 2009; 79: 46–50
39. Scott P, Sherriff M, DiBiase AT, Cobourne MT. Perception of discomfort during initial orthodontic tooth alignment using a self-ligating or conventional bracket system: a randomized clinical trial. Eur J Orthod 2008; 30: 227–232
40. Fleming P.S, Di Biase A.T, Lee R.T. Randomized clinical trial of orthodontic treatment efficiency with self-ligating & conventional fixed orthodontic appliances American Journal of Orthodontics & Dentofacial Orthopaedics 2010; 137: 738–42

SUMMARY

COMPARATIVE ASSESSMENT OF CONTEMPORARY BRACKET SYSTEMS EFFICIENCY IN ORTHODONTIC TREATMENT OF DENTOFACIAL ANOMALIES

Ter-Poghosyan H.Yu.², Papazyan A.T.¹, Ghazaryan E.R.¹

¹ YSMU, Department of Pediatric Dentistry and Orthodontics, ² Dental Clinic “Alfastom”

Keywords: *treatment efficiency, dentofacial anomalies, self-ligating brackets, traditional brackets, active ligation, passive ligation, friction*

Self-ligating brackets have a long history of sporadic development which has culminated in a recent explosive proliferation of bracket types. After many years of existence as a category of orthodontic bracket, they have finally come of age in terms of design, understanding and popularity.

The related literature has demonstrated that there is no concrete evidence to support the notion that self-ligating brackets are more efficient, than traditional brackets, whilst in some cases where statistical significance was reached the difference was clinically unimportant. Even results of identical investigations

in this area are contradictory. In addition, the number of publications is currently limited, and for some bracket systems there is no data available in the literature, indicating the need for further comparative evaluation of the various bracket systems, directed on observation of influence of self-ligating brackets on certain aspects of morphology, function and esthetics of dentofacial system.

In conclusion, whilst the core advantages of self-ligation are now well established, the proposals that self-ligation provides more rapid or qualitatively different treatment results are exciting and important, but are yet to be supported by formal investigations. We still have much to learn about the best use of self-ligation, but these “intelligent” brackets are clearly set to play a major role in orthodontic treatment for the foreseeable future.

ԱՄՓՈՓՈՒՄ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՐԵԿԵՏ-ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԷՖԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԱՏԱՄԱԾՆՈՏԱՅԻՆ ԱՆՈՄԱԼԻԱՆԵՐԻ ՕՐԹՈՂՈՆՏԻԿ ԲՈՒԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Տեր-Պողոսյան Հ.Յու.², Փափազյան Ա.Թ.¹, Ղազարյան Է.Ռ.¹

¹ ԵՊԲՀ, մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոն, ² «Ալֆաստոմ» ստոմատոլոգիական կլինիկա

Բանալի բառեր՝ բուժման արդյունավետություն, ատամնածնոտային անոմալիաներ, ինքնակապվող բրեկետներ, ակտիվ հակաբրեկետներ, ակտիվ կապում, պասիվ կապում, շփում

Ինքնակապվող բրեկետներն (self-ligating brackets) առաջին անգամ ի հայտ են եկել դեռևս 1935թ.-ին և անցնելով զարգացման երկարատև ուղի՝ լայն տարածում գտել միայն վերջին տարիներին:

Չնայած այս ոլորտում իրականացված բազմաթիվ հետազոտությունների, այսօր դեռևս դժվար է հստակ պատկերացում կազմել այս կամ այն բրեկետ-համակարգի կիրառման արդյունավետության մասին:

Հրատարակված աշխատանքները բացահայտեցին, որ նույնիսկ իդենտիկ հետազոտությունների արդյունքները հա-

ճախ հակասում են միմյանց: Բացի այդ, գրականության մեջ գրեթե չկան մատչելի տվյալներ որոշ տեսակի բրեկետ-համակարգերի մասին: Այս ամենը վկայում է տարբեր բրեկետ-համակարգերի ազդեցության ուսումնասիրման նպատակով ատամնածնոտային համակարգի մորֆոլոգիայի, ֆունկցիայի և էսթետիկայի հետագա համեմատական վերլուծության անցկացման անհրաժեշտության մասին:

Վերջում նշենք, որ ինքնակապվող բրեկետների վերաբերյալ դեռևս շատ հարցեր ու խնդիրներ պետք է ուսումնասիրվեն և լուսաբանվեն, բայց, այնուամենայնիվ, անհերքելի է մնում այն փաստը, որ օրթոդոնտիկ բուժման մեջ վերոհիշյալ «խելացի» բրեկետների դերն էլ ավելի կկարևորվի մոտ ապագայում:

ԱՆՇԱՐԺ ՊՐՈԹԵԶԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՂԿԱԾ ԱՏԱՄՆԵՐԻ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂԱԾ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Մաշինյան Կ.Ա.¹, Պետրոսյան Մ.Ս.¹, Հովհաննիսյան Ս.Ռ.¹, Տիգրանյան Խ.Ռ.²

¹ ԵՊԲՀ, օրթոպեդիկ ստոմատոլոգիայի ամբիոն, ² ՌԺԲՀ, օրթոպեդիկ ստոմատոլոգիայի ամբիոն

Բանալի բառեր՝ ատամնահղկում, ամորֆ շերտ, «վեր-բային մակերեսի» պաշտպանություն, պոլիմերային թասակներ, ժամանակավոր պսակներ, ժամանակավոր կամրջածն պրոթեզներ, ժամանակավոր ցեմենտներ

Օրթոպեդիկ ստոմատոլոգիայում կիրառվող պրոթեզավորման նոր եղանակների հետ մեկտեղ արդիական է մնում ատամնահղկմամբ իրականացվող պրոթեզավորման պրակտիկան:

Անշարժ պրոթեզավորման համար իրականացվող ատամնահղկումը կատարվում է ատամների կարծր հյուսվածքների զգալի հղկմամբ՝ պսակային հատվածին անհրաժեշտ ձև հաղորդելու նպատակով, ինչը հաճախ հանգեցնում է կակղանում ախտաբանական փոփոխությունների զարգացմանը:

Բուժման հաջողությունը մեծ մասամբ կախված է ատամների հղման որակից և նրա հետագա պաշտպանությունից:

Հղման ժամանակ առաջացող վնասակար գործոնները (բարձր ջերմաստիճան, ջրազրկում, թրթռում, պտտվող գործիքի ճնշում) [6] ատամի կարծր հյուսվածքներում և կակղանում առաջացնում են ախտաբանական փոփոխություններ (մազանոթների կտրուկ արյունալեցում, արյունազեղման օջախների առաջացում, նյարդային տարրերում նկատվող դեստրուկտիվ փոփոխություններ, ներկակղանային պսակոկիստների առաջացում և այլն) [9]: Մանրամասն կանգ չառնելով վերոնշյալի վրա՝ առավել հանգամանալից քննարկենք հղված ատամների պաշտպանությանն ուղղված միջոցների և միջոցառումների էվոլյուցիան: Այս միջոցառումների թվում են դենտինային խողովակների (ԴԽ) խցանմանը, կակղանի ռեցեպտորների զգայության նվազեցմանը, հղման հետևանքով գրգռված կակղանի վերականգնմանն ու հղված ատամների մակերեսի և պարօդոնտի պաշտպանությանն ուղղված մի շարք միջոցներ:

ԴԽ խցանումը կարող է լինել ուղղակի և անուղղակի: Առաջին դեպքում կիրառվում են լաթեր ու մածուկներ: ԱՊ բուժման համար հեղինակները առաջարկում են մածուկ, որը պարունակում է 15% ուլտրամանր հիդրօքսիապատիտ (ՈՒՄՀԱ): Անուղղակի խցանման հա-

մար կիրառվում են ստրոնցիումի աղեր, արծաթի նիտրատ, կալցիումի հիդրօքսիդ:

Կակղանի վերջավորությունների զգայունությունը կարելի է նվազեցնել կալիումի նիտրատի ապլիկացիայի միջոցով: Կալիումի իոնները թափանցում են դենտինային խողովակներով մինչև նյարդային վերջավորությունները և արգելափակում են կալիում-նատրիումային անցումները թաղանթների վրա, ինչն անհնար է դարձնում նյարդային ազդակի փոխանցումը:

Սակայն KNO_3 կլինիկայում չի օգտագործվում բարձր տոքսիկության պատճառով: ԱՊ նվազեցման համար պատրաստուկներում կիրառվում է KHNO_3 , այն 30% բանակությամբ պարունակվում է Microap (Իտալիա) գելային նյութում, որը պարունակում է նաև 30% կալցիումի կարբոնատ և ավելացվում է ժամանակավոր ցեմենտներին՝ 1:5 հարաբերակցությամբ [3]:

Անհրաժեշտ է նշել, որ ԱՊ նվազեցման մեխանիզմը, այսպես թե այնպես, ուղղված է արծնի ու դենտինի վնասված մակերեսի հերմետիկացմանը կամ ԴԽ խցանմանը՝ դրանց տարբեր խորություններով [3, 8]:

Դենտինի գերզգայունության (ԴԳ) նվազեցման համար առաջարկվում է օգտագործել նատրիումի ֆտորիդ, նատրիումի մոնոֆոսֆատ, ստրոնցիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, կալիումի օքսալատ: Այլ հեղինակներ նշում են երկաթի քլորիդի լուծույթների զուգորդմամբ ռոդանիդներով դենտինի մշակման արդյունավետությունը, ինչով հասնում են ԴԽ խցանմանը [24]:

Առաջարկվել է ատամի վզիկի գերզգայունության բուժում՝ արծնհերմետիկացնող կամ դենտինհերմետիկացնող հեղուկի օգնությամբ: Մեթոդի էությունը կայանում է խորը ֆտորացման մեջ: Հեղինակին հաջողվել է ստեղծել երկու պատրաստուկ, որոնց փոխազդեցությունը հաջորդաբար քսելու դեպքում հասցնում է կալցիումի ֆտորիդի բյուրեղների գոյացմանը: Առաջին պատրաստուկը մագնեզիումի ֆտորային սիլիկատն է, երկրորդը կալցիումի բարձրդիսպերսային հիդրօքսիդն է: Դրանց միջև ռեակցիայի արդյունքում արծնի մակերեսի ու ձագարափոսերի խորություններում գոյանում է ֆտորային սիլիկատ, որը տրոհվում է ֆտորային կալցիումի, ֆտորային մագնեզիումի և սիլիցիումաթթվի գելի: Այդ մանրաբյուրեղային ֆտորիդները լավ լուծվող են, ինչը

պայմանավորում է ֆտորի իոնների բարձր խտության առկայությունը և պայմաններ է ստեղծում արծնի ձագարափոսերի ներսում հիդրոքսիապատիտի գոյացման համար:

Ֆտորային միացություններ պարունակող դեղաձևերը տարբեր են՝ լուծույթներ, գելեր, մածուկներ, լաթեր: Ատամի մածուկները, լաթերը, ապլիկացիաները բավականաչափ անկայուն են բերանային հեղուկի ազդեցության, առավել ևս օկլյուզիոն ծանրաբեռնվածության հանդեպ: Շատ ավելի արդյունավետ է ֆտորային միացությունների կիրառումը կոշտ կամ էլաստիկ կապաների տեսքով կամ էլեկտրաֆորեզի մեթոդով:

Ֆտորի իոնների ու հիդրոքսիապատիտի փոխազդեցությունից CaF_2 -ի առաջացման մասին եզրակացությունը վիճարկելի է: Հիդրոքսիապատիտի հիդրոքսիլ խումբը փոխարինվում է ֆտորի իոններով՝ առաջացնելով հիդրոքսիֆտորապատիտ՝ $\text{Ca}_{10}(\text{PO}_4)_6(\text{OH})\text{F}$ կամ ֆտորապատիտ՝ $\text{Ca}_{10}(\text{PO}_4)_6\text{F}_2$: Հիդրոքսիապատիտի ֆտորային փոխարինումները հանգեցնում են ատամների կարծր հյուսվածքների լուծելիության նվազեցմանը, ինչը և ընկած է դրանց կանխարգելիչ ազդեցության հիմքում:

Այսպիսով, ատամնահղկումից հետո արտաքին գործոններից դենտինի մեկուսացման անհրաժեշտությունը ընդունված է բոլորի կողմից: Վնասված ԴԽ խցանման նպատակահարմարության հարցի շուրջ հայացքները նույնպես համընկնում են:

Սակայն ԴԽ-ում իրական «տեղի համար պայթարը» սկսվեց կոմպոզիտային ատամնալիցքային նյութերի «սենդվիչ» տեխնիկայի մեջ՝ դենտինային հարակցանյութերի ներդրմամբ: Ի սկզբանե խնդիրը կայանում էր կոմպոզիտի ու դենտինի լավ հարակցության հասնելու, ինչպես նաև ատամնալիցքից հետո գերզգայունության վերացման մեջ: Այս խնդիրների լուծման ընթացքում բացվում էին դենտինային հարակցանյութերի (ադհեզիվ) կիրառման նաև այլ ասպեկտներ:

Առաջինը, ինչի վրա ուշադրություն դարձրեցին հետազոտողները, ատամնահղկումից (ԱՀ) հետո դենտինի մակերեսի վրա ամորֆ (լոզված, կաչուն, անգլ. – «smear layer») շերտի առկայությունն էր: Շերտի կառուցվածքը, կազմը և խտությունը որոշվում են գչիրի տեսակով, դրա պտտման արագությամբ և դենտինի գոտիով [25]:

Ամորֆ շերտը բաղկացած է դենտինային և ոչ դենտինային ծագման բաղադրամասերից՝ պրոտեիններով ամրացված հիդրոքսիապատիտի բյուրեղներ, կոլագեն, գլիկոպրոթեոգլիկաններ, պրոտեոգլիկաններ, բնագրված սպիտակուցներ, բակտերիաներ, բջջային տարրեր (արյուն, էպիթել): Շերտի հաստությունը կազմում է 0,5-ից մինչև 15 մկմ: Վնասված հյուսվածքները նույնպես

հայտնվում են դենտինի խողովակներում մինչև 40 մկմ խորությամբ [4]:

Այլ հեղինակներ կարծում են, որ smear layer-ը ունի 0,5-ից մինչև 5 մկմ հաստություն և խցանում է դենտինային խողովակների անցքերը: Նշվում է, որ փառը «դիֆուզիոն արգելապատի» դեր է կատարում, որը նվազեցնում է դենտինի թափանցելիությունը և արգելում է պլաստմասսայի ֆիքսացիան՝ ենթադրելով դենտինային հիմքին [23]:

Փառի մշակման հանդեպ մոտեցումները (այսինքն՝ հեռացումը կամ դրա ձևափոխումը) տարբեր են: Որոշ հեղինակներ այն կարծիքին են, որ փառը կակղանի համար ապահովում է բնական արգելապատ, մյուսները գտնում են, որ այն պետք է հեռացնել կամ քայքայել՝ նախքան դենտինի վրա պրոթեզի կամ ատամնալիցքի ամրացումը:

Առանձնացվում են տարբեր համակարգերում փառի մշակման մի քանի տարբերակներ, որոնք առաջարկվել են դենտինի վրա ամրացման (հարակցման) համար՝ ոչ մի մշակում, լուծում, հեռացում, ձևափոխում, հեռացում+ձևափոխում:

Հղկված դենտինի վրա 2% կիտրոնաթթվի ազդեցությունը հասցնում է ամորֆ շերտի (ԱՇ) լուծմանը և ԴԽ լուսանցքի լրիվ մերկացմանը, ինչը ավելացնում է դենտինի թափանցելիությունը: Կալիումի օքսալատի լուծույթներով մշակումը ԱՇ-ը ձևափոխում է կազմավորված թթվակայուն բյուրեղային շերտի: Կալցիումի հիդրօքսիդի լուծույթով մշակման ժամանակ մակերեսի վրա գոյանում է պրեցիպիտատ, որը չունի բյուրեղային կառուցվածք, հաճախ տեղակայվում է ԴԽ լուսանցքում, սակայն չի խցանում այն ամբողջովին իր փոքր չափսի պատճառով: Կալիումի նիտրատի հազեցած լուծույթով մշակումը առաջացնում է խոշոր պրիզմաձև բյուրեղների առաջացում, ԱՇ-ը կորցնում է միասեռությունը դենտինային տաշեղների խառնակույտի գոյացման հաշվին:

Հայտնվում է, որ ինչպես 10% կիտրոնաթթվի և 3% երկաթի բլորիդի խառնուրդը, այնպես էլ 10% էթիլենդիամինտետրաբացախաթթուն (ԷԴՏԶ) կարող են դենտինի ներքին կարիոզ շերտից հեռացնել կեղտոտված շերտը, դրանով իսկ թույլ տալ բոնդինգային նյութերին (հարակցանյութերին) ազատորեն թափանցելու մաքրված դենտինի մեջ՝ կազմավորելով կիպ հարակցում ատամի թթվամշակված հյուսվածքների հետ և ապահովել կոմպոզիտի որակյալ ամրացում: ԷԴՏԶ-ն չի քայքայում կոլագենը և ցուցաբերում է շատ աննշան ազդեցություն կակղանի վրա [3]:

Բացահայտվել է մարդու կենսունակ դենտինի խեժ-դենտին հիբրիդային շերտի առաջացումը: Առավել մեծ կապակցող ուժ ստացվում էր 10% կիտրոնաթթվով և

3% երկաթի քլորիդով 10-30 վայրկյանի ընթացքում ԱՇ-ը հեռացնելու դեպքում՝ 5%-ոց 4-methacryloxyethyl trimellitate anhydride (4-META) in methylmethacrylate (MMA), initiated by partially oxidized tri-n-butyl borane (TBB)-ով հետագա մշակումով: 4-META/MMA-TBB և 10-3 լուծույթը գրանցված են Super-Bond C&B և C&B Meta-bond կոմերցիոն անվանումներով:

N. Nakabayashi-ի համակարգում առանձնացվում է երեք բաղադրամաս. սկզբնական (որակավորիչ), նախապատրաստական (պրայմեր) և բուն՝ հարակցանյութը: Չորրորդ սերնդի հարակցանյութերը կազմում են հիբրիդ շերտ, որը ապահովում է մեծ ուժով հարակցում և ծառայում է որպես արդյունավետ պաշտպանիչ արգելապատ՝ ընդդեմ դենտինային խողովակներով կակղանի մեջ միկրոորգանիզմների ու քիմիական նյութերի ներթափանցմանը: Հիբրիդային շերտը փակում է հեղուկի ճանապարհը դեպի ԴԽ և արգելում է հետվիրահատական գերզգայունության զարգացումը:

90-ական թվականների սկզբին ստացված IV սերնդի կապակցող համակարգերին են պատկանում Gluma 2000, All-Bond 2, Clearfill Bond System և այլն: Դենտինի թթվամշակման հարցում կան զգալի տարածայնություններ: Այդ նպատակով օգտագործում են թթվային գելեր կամ ԷԴՏԶ աղեր [4]:

V սերնդի կապակցող համակարգերը մինչև ատամի հիմնական կոմպոզիտային նյութով շերտապատումը նախատեսում են ոչ թե երեք, այլ երկու փուլ: Այսպես՝ «Прайм & Бонд 2.0» միաժամանակ պրայմեր և հարակցանյութ է, ինչը, արտադրող ֆիրմայի տվյալներով, 97,5% դեպքերում ապահովում է հոյակապ եզրային հպում:

Այնպիսի համակցանյութային համակարգերի պրայմերները, ինչպիսիք են Scotchbond Multi-Purpose և Clear Liner Bond II, նվազեցնում են ԴԽ թափանցելիությունը, ինչի շնորհիվ դենտինային հարակցանյութերի կիրառումը կարող է դառնալ դենտինի գերզգայունության արդյունավետ բուժամիջոց:

Կարծիք կա, որ հարակցային ագենտները, ինչպիսիք են One-Step-ը, մեխանիկորեն խցանում են բաց դենտինային խողովակները պոլիմերի օգնությամբ՝ պահպանելով դրանք շրջակա միջավայրի ազդեցությունից [23]: Gluma Desensitizer տիպի դենտինային պրայմերները նույնպես կարող են նվազեցնել ատամի զգայունությունը դենտինային խողովակների խցանման հաշվին՝ դենտինային հեղուկում նստեցնելով սպիտակուցները:

Համարվում է, որ Seal & Protect-ը՝ արմատի մերկացած դենտինի համար առաջին հերմետիկը, փակում է բաց ԴԽ-ները՝ վերացնելով կամ նվազեցնելով գերզգայունությունը [8]:

Առաջարկվել է «Gluma desensitizer» պատրաստվել, որը 36% HEMA և 5% Glutardialdehyd (GA) պարունակող ջրային լուծույթ է: Ընդգծելով Desensitizer-ի մեկուսիչ հատկությունները՝ խորհուրդ է տրվում կակղանին մոտ գտնվող դենտինի հատվածները պատել պաշտպանիչ պատրաստուկներով: Դրանով ընդունվում է GD որոշակի տոքսիկությունը:

Եզրակացություն է արվում այն մասին, որ Gluma 3 պրայմերը Gluma 2 մաքրող նյութի (որակավորիչի) նախնական կիրառման դեպքում հասցնում է ԴԽ «ներքին փակմանը»՝ մինչև 200 մկմ խորության վրա [7]: GA-ի այդքան խորը ԴԽ մեջ ներթափանցմանը հասնելու համար ամորֆ շերտի հեռացումը անհրաժեշտ նախապայման է: Այս դեպքում կակղանի վրա տոքսիկաքիմիական ազդեցության մասին հարցը դառնում է առաջնահերթ:

Այսպիսով, ատամնափոխումից հետո դենտինի ռեզիստենտության բարձրացման խնդրի լուծման ժամանակ Smear layer-ի հանդեպ վերաբերմունքը կարելի է համարել միանշանակ. այն պետք է հեռացվի կամ ձևափոխվի չլուծվող ու անթափանցելի կառուցվածքի:

Երկրորդը, ինչում համամիտ են հետազոտողները և կլինիկական բժիշկները, մերկացած դենտինի մակերեսի վրա, այսպես կոչված, հիբրիդ շերտի ստեղծման անհրաժեշտությունն է: Այդ շերտը խցանում է ԴԽ և արգելում է ԴԽ և կակղանի մեջ քիմիական գրգռիչների և միկրոորգանիզմների ներթափանցումը:

Երրորդ պնդումը, որը ենթակա չէ վիճարկման, հղված դենտինի մակերեսի պաշտպանության առավել արդյունավետությունն է, եթե զուգորդվում է ներխողովակային խցանման հետ:

Այդ պահանջներին համապատասխանում են IV և V սերնդի հարակցային համակարգերը: Սակայն այս համակարգերն ունեն էական թերություն. այն է՝ կենդանի հյուսվածքի վրա ազդման ոչ կենսաբանական մեխանիզմը: Այդ պատճառով կարելի է եզրակացնել, որ ձևավորվում է բացառապես պոլիմերային պաշտպանիչ արգելապատ, որի կազմում չկան դենտինում վերականգնողական պրոցեսները խթանող բաղադրիչներ: Չի կարելի հաշվի չառնել նաև V սերնդի հարակցային համակարգի կիրառման ժամանակ հղկված ատամի մակերեսի ուրվագծերի հնարավոր ձևափոխումները:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ արդիական է դառնում տարբեր տեսակի ժամանակակից մշտական ֆիքսող ցեմենտների, այդ թվում նաև երկակի կարծրացման ցեմենտների՝ հղկված ատամի կակղանի վրա ազդեցության վերաբերյալ հետազոտությունները:

Հարկ է նշել, որ կարծր հյուսվածքների վնասումից մշտապես զարգանում է կակղանի գրգռում: Հետազոտողները նկարագրում են ատամի խոռոչի ու պա-

րողոնսի հյուսվածքների սուր ասեպտիկ բորբոքման պատկեր նույնիսկ նախազգուշական բոլոր միջոցների պահպանման դեպքում: Միջամտությունից հետո կակղանի խոռոչի վրա կարծր հյուսվածքների շերտը երբեմն 1 մմ-ից բարակ է մնում, և ատամը հայտնվում է մերկացած ու դյուրընկալ՝ արտաքին ֆիզիկական, քիմիական և կենսաբանական գործոնների նկատմամբ: Այդ պատճառով հետազոտողների ուշադրությունն ուղղված է «վիրավոր» մակերեսի պաշտպանությանը:

Հիմնավորված է ԱՅ-ից հետո ատամի հյուսվածքների և ընդհանուր օրգանիզմի վիճակի գնահատման համար «հետատամնահղկման սինդրոմ» ախտորոշման կիրառումը [2]:

Բուժկանխարգելիչ միջոցառումների շարքում այս սինդրոմի ժամանակ կարևոր տեղ է գրավում ատամի կճատի մակերեսի պաշտպանումը դեղամիջոցով լցված թասակներով կամ կապայով:

ԱՅ-ից հետո բարդությունների կանխարգելման նպատակով պաշտպանիչ ծածկույթների կիրառումը առաջարկվում են շատ հեղինակների աշխատանքներում [1, 6]:

Մի շարք հեղինակներ առաջարկում են հղկված ատամները ծածկել հատուկ լաբերով կամ սոսնձային բաղադրանյութերով: Այսպես, մշակված են մի բանի պատիճներ բւեկնախեժի, ցելլոիդինի, ցիակրիլի և ԲՖ-6 սոսնձի հիման վրա: Առաջարկվում է ԲՖ-6 սոսնձի և ցիտրալի համակցումը [12]: «Ցիտրոն» պատիճի մշակման համար օգտագործվել է ցիանակրիլատների խառնուրդ: Խորհուրդ է տրվում նաև պաշտպանել կճատը պրոպոլիսի խեժի հենքի վրա պատրաստված հեղուկով [6]: Առաջարկվել է օգտագործել ԿԼ-3 բժշկական սոսինձը՝ Նատրիումի ֆտորիդով: Մետաղակերամիկական կոնստրուկցիաների համար հղկված ատամների ծածկման համար մշակվել է լաբ-հարակցանյութի յուրահատուկ բաղադրատոմս: Այն բաղկացած է պոլիվինիլպիրոլիդոնից, շելլակից, կալցիումի հիդրօքսիդից, աերոսիլից, դիօքսիդինից և սպիրտի ու եթերի խառնուրդից [5]: Հայտնում են միկրոպրոթեզների և պսակների ֆիքսացիայից առաջ լաբերի ու ենթաշերտերի կիրառման մասին: Դրանք անհրաժեշտ են կակղանի գրգռումը նվազեցնելու և այն թեփց ու ֆիքսող ցեմենտի թեփից մեկուսացնելու համար: Բաղադրանյութերի հիմքում ընկած է կալցիումի հիդրօքսիդը և բարիումի սուլֆատը: Ivoclar ֆիրմայի մասնագետները առաջարկում են ուրեթանի միացություններից կազմված Dentin Protector բաղադրանյութը՝ դենտինի հետվիրահատական զգայունության նվազեցման, բակտերիալ ու քիմիական գրգռման կանխարգելման համար: Նշված հատկություններով է օժտված Butler ֆիրմայի (Իտա-

լիա, 1994թ.) «Protect» միջոցը: Կալցիումի օքսալատի հիման վրա ստացված հեղուկը խթանում է վնասված հյուսվածքների գերհանքայնացումը և ստեղծում է թաղանթ՝ արտաքին գրգռիչներից պաշտպանելու համար:

Այնպիսի սոսնձային ծածկանյութեր, ինչպիսիք են ֆտորային մածուկը, բւեկնախեժը, ցելլոիդինը, ցիակրիլը, հասու են, կիրառման մեջ պարզ և զգալիորեն նվազեցնում են արտաքին գրգռիչներից առաջացած ցավի ինտենսիվությունը: Սակայն դրանք բոլորը նախատեսված են միայն այն ատամների համար, որոնք նախապատրաստված են դրոշմված պսակների տակ լինելու համար: Մետաղակերամիկական պրոթեզների տակ հղկումից հետո դրանք անբավարար արդյունավետ են: 3-4 օր անց քերամաշվում կամ ճաքում են: Սոսնձային կոմպոզիցիաները, որպես կանոն, իրենց բաղադրություններում չպարունակելով դեղամիջոցներ՝ վիրավոր մակերևույթի վրա երկարատև բուժիչ ազդեցություն չեն ցուցաբերում: Սոսնձանյութերի ատամի կարծր հյուսվածքներին բարձր կաչողականությունը դժվարացնում է դրանցից ատամի հետագա մաքրումը և ճշգրիտ դրոշմի ստացումը: Բարակ թաղանթը չի վերականգնում գեղագիտական թերությունը և չի կանխում ուղղահայաց և մեզիոդիստալ ուղղություններով ատամների տեղաշարժը: Լաբերի բաղադրությունում ագրեսիվ հեղուկների՝ սպիրտի և եթերի առկայությունը կարող է հանգեցնել ատամի կակղանի գրգռմանը [5, 13]:

Ատամների մշակումից հետո հյուսվածքների ավելի հուսալի պաշտպանություն են ապահովում գործարանային եղանակով կամ էլ ատամնատեխնիկական լաբորատորիայում պոլիպրոպիլեն, պոլիստիրոլ կամ ցելլուլոզի տիպի պոլիմերներից պնևմոկաղապարման մեթոդով պատրաստված ժամանակավոր թասակները [1]: Սակայն ունենալով 0,3-0,4մմ հաստություն և ոչ բնական գույն՝ դրանք կարող են կիրառվել շտամպված պսակների պատրաստման համար մշակված ատամների պաշտպանության նպատակով: Առաջարկվում է նաև անմիջապես բերանի խոռոչում պլաստմասե պսակների պատրաստման եղանակ՝ կիրառելով պոլիկարբոնատային նախապատրաստվածք կամ բարակապատ պոլիմերային թասակներ, որոնք լցվում են ինքնակարծրացող պլաստմասայով [18]: Kerr Dental, Frasco ֆիրմաներն առաջարկում են տարբեր ձևի ու չափերի ստանդարտ թասակների լայն տեսականի, սակայն դրանք կիրառվում են միայն առանձին պսակների վերականգնման ժամանակ:

Այժմ լայն տարածում է գտել ժամանակավոր պրոթեզներով մետաղակերամիկական կոնստրուկցիաների տակ հղկված ատամների մակերեսի պաշտպանման մեթոդը [15]: Ժամանակավոր պսակները ատամը

հուսալիորեն պաշտպանում են արտաքին գրգռիչ ազդակներից, վերականգնում են ատամնաշարի ամբողջականությունը և օկյուզիոն հարաբերությունները, նպաստում են բուժիչ մածուկի երկարաժամկետ պահպանվելուն (ընդ որում, նրա բաղադրությունը կարելի է փոփոխել՝ ելնելով բուժման ժամկետներից): Ատամների հղկումից հետո օկյուզիոն (ատամնահպման) մակերևույթի դեֆորմացիաների կանխման նպատակով առաջարկվում է հատուկ բուժկանխարգելիչ ժամանակավոր կապպա [13]:

Ժամանակավոր պսակները թույլ են տալիս ոչ միայն վերականգնել գեղագիտական տեսքը, այլ նաև հնարավորություն են տալիս մոդելավորել մշտական պրոթեզների ատամների ձևը, չափերը, գույնը և դասավորությունը, ժամանակին իրականացնել ֆոնետիկ ուղղումները, վերահսկել հղկման ադեկվատությունը, արագացնել այցելուի ադապտացիան մշտական պրոթեզներին [17, 19]:

Վերը նշված պահանջներին լիովին համապատասխանում են ակրիլային պլաստմասե պսակները, սակայն այդ նպատակների համար մշակված են նաև պոլիմերների այլ խմբեր [11, 14]:

Առաջարկվում է «Scutan» ինքնապոլիմերացվող իներտ իմինային պլաստմասան: Հետազոտվել և գործնականում ներդրված է օլիգոկարբոնատմետակրիլատի հիմքի վրա «Ցիադենտ» նյութը՝ ժամանակավոր կոնստրուկցիաների կլինիկական եղանակով պատրաստման համար: Առաջարկվում է կիրառել Էպիմինային պլաստմասաներ, քիմիական, լուսային և կրկնակի կարծրացման հիբրիդային և միկրոլցված կոմպոզիտներ: Palavit (Septodont), Provilink (Ivoclar) նյութերի, հատկապես ֆոտոպոլիմերների կիրառումը, ըստ հեղինակների կարծիքի, թույլ է տալիս զգալիորեն խնայել բժշկի ժամանակը, նվազեցնել մոնոմերով կակղանի գրգռման ռիսկը և հասնել գեղագիտական լավ արդյունքների [17]:

Մի շարք դեպքերում խորհուրդ է տրվում կողմնային ատամները պաշտպանել ոչ թե պլաստմասե, այլ մետաղական թասակներով, այդ թվում՝ բարակ պատերով տիտանե պսակներով:

Գոյություն ունեն ժամանակավոր պրոթեզների պատրաստման շատ եղանակներ: Պայմանականորեն դրանք բաժանվում են լաբորատոր և կլինիկական եղանակների: Վերջիններս թեպետ հնարավորություն են ընձեռում պացիենտին 1 այցի ընթացքում հղկել ատամները և անմիջապես ծածկել ժամանակավոր պրոթեզով, սակայն ունեն մի շարք լուրջ թերություններ: Դրանցից են բժշկի ժամանակի ծախսի զգալիորեն ավելացումը, հիվանդի տիպիկ գագաղությունները, պլաստմասի մոնոմերով կակղանի քիմիական և թերմիկ գրգռման հնա-

րավորությունը: Նկարագրված են ժամանակավոր պրոթեզների նյութերի հանդեպ ալերգիայի դեպքեր ինչպես բժշկի, այնպես էլ հիվանդի մոտ [14, 16]: Նոր նյութերի, այդ թվում նաև լուսակարծրացող՝ Dentalon plus (Septodont), Protent (ESPE), Trim, Tab 2000 (Kerr), նյութերի մշակումը թույլ է տալիս լուծել ժամանակավոր պսակների անմիջական պատրաստման շատ խնդիրներ:

Որոշ հետազոտողներ այն կարծիքին են, որ լաբորատոր եղանակով արտաբերանային պատրաստված կոնստրուկցիաները գերծ են վերը նկարագրված թերություններից [21]: Մի շարք հեղինակներ առաջարկում են լաբորատոր և կլինիկական եղանակների համակցումը՝ նախօրոք պատրաստված ժամանակավոր կոնստրուկցիայի կապպա-հենքը լցնելով պլաստմասայով [13]:

Ատամների հղկումից հետո ժամանակավոր պսակները ֆիքսվում են բուժիչ մածուկով: Բացի ցինկի օքսիդ-էվգենոլային մածուկներից և կալցիումի հիդրօքսիդի պատրաստուկներից՝ առաջարկվում է կիրառել արհեստական դենտինի և էթնիկումի խառնուրդ, ZnO, MgO, ֆոսֆորաթթվային մագնեզիում, օսլա և սպիտակ կավ պարունակող «խթանող մածուկ» [10]: Նշվում է քսիդիֆոնի լուծույթով և ջրային դենտինով ժամանակավոր պրոթեզների ֆիքսման մասին: Առաջարկվում է նաև մինչև 2 ամիս ժամկետով մետաղակերամիկական պրոթեզներն ամրացնել ցինկի օքսիդից, ցինկի սուլֆատից, վազելինային յուղից, թվին 80-ից, բլեկնախեցից, կաոլինից և ամֆոդապիրինից պատրաստված մածուկով: Ատամների գերզգայունության նվազեցման համար որոշ հեղինակներ առաջարկում են ժամանակավոր պսակները ֆիքսել տերակարտիլային քսուքով: VOCO Chemie GmbH ֆիրման ժամանակավոր պսակների, պրոթեզների և ներդիրների համար մշակել է Provicol ժամանակավոր ցեմենտ՝ կալցիումի հիդրօքսիդի հիման վրա:

Dental Products report International (1990) ամսագրում նշվում է պոլիկարբոնատային պսակների ամրացման համար ուրեթանակրիլատից, սիլիցիումի երկօքսիդից և պոլիմերից լուսակարծրացող ժամանակավոր ցեմենտի վերաբերյալ: Այդ նպատակով առաջարկվում է կիրառել պոլիկարբոքսիլատային ցեմենտը՝ որպես կակղանի համար առավել չեզոք նյութ, սակայն այն ունի թերություն՝ բարձր ամրությունը [15]:

Էվգենոլի կանխարգելիչ արդյունքը ի հայտ է գալիս 14 և հատկապես 30 օր անց: Մեխանիկ յուղի և կալցիումի հիդրօքսիդի պատրաստուկները կակղանի վրա կարող են գրգռիչ ազդեցություն թողնել [14, 20, 22]: Ի պատասխան հղկմանը՝ զարգանում է ատամի կակղանի ասեպտիկ բորբոքում կամ «գրգռում» և հարց է առաջանում ընդամենը 0,5-1,0մմ հաստությամբ թողնված դենտինի դեպքում pH=12 միավոր ռեակցիայով կալցիումի

հիդրօքսիդի հիմնային պատրաստուկների կիրառման նպատակահարմարության վերաբերյալ: Առաջարկվող բուժիչ մածուկները ազդում են կարծր հյուսվածքների վնասված հանքային բաղադրության վրա և խթանում են վարման հեռավոր ժամկետներում երկրորդային դենտինի կուտակման ընթացքը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է փաստել, որ մետաղակերամիկական կոնստրուկցիաներով օրթոպեդիկ բուժման փուլերում ատամի կակղանի տարաբնույթ վնասումների կանխարգելման խնդիրը մնում է թերի լուծված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Алмаев В.П. Временная защита зубов, препарированных под несъемные протезы: Дис. ...канд. мед. наук. – Казань, 1987. – 153 с.
2. Большаков Г.В. Возможности клинической оценки зуба после препарирования // Зубной техник. – 1999, №2 (14). – С. 16
3. Гаража С.Н. Повышение резистентности тканей препарированных зубов с помощью новых гидроксипатитсодержащих комплексов (эксперим.-клинич. исслед.): Дис. ... д-ра мед. наук. – М., 2000. – 248 с.
4. Ёдковская Э., Трыковская Я., Вагнер Л. Развитие и настоящее состояние материалов, соединяющих пломбы с тканью зуба // Стоматология соврем. мира. – 1996. – С. 71-121
5. Емгахов В.С. Пути уменьшения недостатков протезирования металлокерамическими конструкциями зубных протезов: Дис. ... канд. мед. наук. – СПб., 1994. – 125 с.
6. Кузнецов О. Е. Защита препарированных зубов при фиксации зубных протезов: Дис. ...канд. мед. наук. – М., 1993. – 123 с.
7. Лютц Праймер Gluma//Новое в стоматологии. – 1999, №4. – С. 70-71
8. Новиков В.С. Seal & Protect – герметик для корневого дентина // Новости Dent-sply. – 1999, №3. – С. 8-11
9. Постолаки И.И. Закономерности и возможности стимулирования защитно-компенсаторной реакции зубных тканей при ортопедических вмешательствах (эксперим.-клинич. исслед.): Дис. ...д-ра мед. наук. – Киев, 1982. – 226 с.
10. Постолаки И.И., Макеев Г.А., Варес Э.Я. и др. Защита поверхности дентина при препарировке зубов под коронки // Стоматология. – 1983, №1. – С. 49
11. Поюровская И.Я., Сутугина Т.Ф. Лабораторно-клиническое исследование материала для изготовления временных коронок и мостовидных протезов на препарированные зубы // Стоматология. – 1987, №6. – С. 26-27
12. Рахленко А.Г. Клиническая оценка эффективности защитного покрытия препарированного под искусственную коронку зуба // Стоматология. – 1985, №9. – С. 57-58
13. Чистяков Б.Н. Обоснование и разработка методики лечебно-профилактической защиты твердых тканей и зубных рядов после одонтопрепарирования: Автореф. дис. ...канд. мед. наук. – М., 1994. – 19 с.
14. Широков Ю.Е. Разработка материалов и методов для временной защиты препарированных зубов: Дис. ...канд. мед. наук. – М., 1987. – 118 с.
15. Bell J.W. Temporary coverage of teeth prepared for full Crowns // J. N.Z. Soc. Periodont. – 1978, №45. – P. 19-22
16. Campbell T.M., Nagy W.M. A vinyl polysiloxane die used to make interim restorations // J. Prosthet. Dent. – 1992. – Vol. 68, №1. – P. 201-203
17. Chalifoux P.R. Temporary crown and fixed partial dentures: new methods to achieve esthetics // J. Prosthet. Dent. – 1989. – Vol. 61, №4. – P. 411-414
18. Frencz J.L. Fabrication of provisional crown and fixed partial dentures utilizing a "Shell" technique // N. Y. J. Dent. – 1981. – Vol. 51, №7. – P. 201-208
19. Hummert T., Barghi N., Berry T. Postcementation marginal fit of new ceramic foil crown system // J. Prosthet. – 1992. – Vol. 65, №5. – P. 755-770
20. Minagawa M. Clinico-pathological studies on the effects of calcium hydroxide eugenol preparations to the human vital pulp tissues // Shikwa-Garuho. – 1989. – Vol. 89, №5. – P. 889-930
21. Monday J.J.L., Blais D. Marginal adaptation of provisional acrylic crowns // J. Prosthet. Dent. – 1985. – Vol. 54, №2. – P. 194-197
22. Schoroder V. Effects of calcium hydroxide containing pulpcapping agents on pulp cell migration, proliferation and differentiation // J. Dent. Res. – 1985, Vol. 64 (Spec. issue). – P. 541-548
23. Swift E.J., Lloyd A.H., Felton D.A. The effect of resin desensitizing agents on crown retention // J. Am. Dent. Assoc. – 1997. – Vol. 128, №2. – P. 195-200
24. Tany Y., Togaya T. Dentin surface treatment without acids // Dent. Mater. J. – 1995. – Vol. 14, №1. – P. 58-69
25. Yu X.Y., Joynt R.B., Davis E.L. et al. Adhesion to dentin // CDA J. – 1993. – Vol. 21, №6. – P. 23-29

SUMMARY

THE EVOLUTION OF THE MATERIALS AND METHODS DIRECTED TO PRESERVATION OF TOOTH TISSUES AFTER PREPARATION FOR FIXED PROSTHESES: CONTEMPORARY APPROACHES

Mashinyan K.A.¹, Petrosyan M.S.¹, Hovhannisyan S.R.¹, Tigranyan Kh.R.²

¹ YSMU, Department of Prosthodontics, ² PFUR, Department of Prosthodontics

The article discusses pathological processes undergoing in the pulp as a result of tooth preparation for fixed prostheses. The evolution of materials and methods directed to protect prepared teeth is discussed in details. These methods include a variety of materials used to protect prepared surfaces of abutment teeth and periodontium, to decrease pulp receptors sensitivity, to rehabilitate irritated pulp after tooth preparation and to seal dentinal tubules.

Direct sealing of dentinal tubules can be achieved by using gels and varnishes containing hydroxyapatite, silver nitrate and calcium hydroxide. Potassium nitrate is recommended to be used as a dentinal desensitizer. Potassium ions penetrate into dentinal tubules and block repolarization of the sensory receptors of neu-

ron's dendrites of the pulp transmitting the pain impulse to the central nervous system.

Removal or transformation of the smear layer, which is formed after tooth preparation and sealing of the exposed dentin with various bonding agents, protects the pulp effectively. The usage of glues forms a protective layer. It protects the pulp from mechanical trauma, thermal stimuli, and bacterial invasion.

Nowadays protection of the prepared teeth by using various provisional fixed prostheses has got a broad popularity. Being fixed with temporary cements, these provisional restorations restore the natural appearance and function of abutment teeth, prevent their movement, etc.

РЕЗЮМЕ

ЭВОЛЮЦИЯ СРЕДСТВ И МАТЕРИАЛОВ, НАПРАВЛЕННЫХ НА ЗАЩИТУ ТКАНЕЙ ЗУБОВ, ОБТОЧЕННЫХ С ЦЕЛЬЮ НЕСЪЕМНОГО ПРОТЕЗИРОВАНИЯ: СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ*Машинян К.А.¹, Петросян М.С.¹, Ованнисян С.Р.¹, Тигранян Х.Р.²**¹ ЕМГУ, Кафедра ортопедической стоматологии, ² РУДН, Кафедра ортопедической стоматологии*

В данной статье обсуждаются патологические процессы, протекающие в пульпе после обточки зубов при несъемном протезировании. Более подробно рассматривается эволюция средств и мероприятий, направленных на защиту обточенных зубов, в число которых входит ряд средств, обеспечивающих защиту обточенной поверхности зуба и пародонта, снижение чувствительности рецепторов пульпы, восстановление раздраженной пульпы зуба после обточки и obturирование дентиновых канальцев.

С целью прямого obturирования дентиновых канальцев были предложены лаки и пасты, содержащие гидроксиапатит, нитрат серебра, гидроксид кальция.

Для снижения гиперчувствительности зубов есть также опыт применения KNO_3 , калиевые ионы которого проникают через дентиновые канальцы, доходя до нервных окончаний, блокируют калий-натриевые каналы на их мембранах и прекращается возможность передачи нервного импульса.

Известно, что удаление или видоизменение аморфного слоя на поверхности зуба при препарировании зубов, а также дальнейшая obturация дентиновых канальцев при помощи разных бондинговых средств обеспечивают эффективную защиту пульпы.

Применение специальных клеев на поверхности обточенного зуба создает защитную пленку, защищающую препарированную поверхность от неблагоприятных внешних раздражителей.

В настоящее время широко распространен метод защиты обточенной поверхности зуба путем покрытия их временными конструкциями.

Фиксируя эти временные конструкции временными цементами, восстанавливается эстетический вид, жевательная эффективность, предотвращается перемещение зубов до изготовления окончательной конструкции и т.д.

ՀՏԴ: 614.2:616-08-039.57

ԲԱԶՄԱԴՐՈՑԻԼ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԲՈՒԺՊՐՈՑԻԼԱԿՏԻԿ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ («ՄԱԼԱԹԻԱ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Մարդիյան Մ.Ա., Սահակյան Կ.Ռ.

ԵՊԲՀ, հանրային առողջության ամբիոն, «Մալաթիա» ԲԿ

Բանալի բառեր. բազմապրոֆիլ հիվանդանոց, բուժօգնության արդյունավետություն, մահճակալային ֆոնդ:

A "Green room" with specially selected houseplants was created in the Pediatric Endocrinology Department of "Mouratsan" Hospital in Yerevan. Under the guidance of a specially instructed healthcare worker the children were spending time there in-between hospital procedures; they could care about the plants or just play in the room. The psycho-emotional status of 2 groups of children from the same department was tested using the "Wonderland of feelings" method by Grabenko and colleagues. Evaluation of a child's psycho-emotional status was based on the Luscher color test interpreting method.

Inpatient children were tested on the first and repeatedly on

the 10th day of the therapy. Test results of 21 randomly selected children participating in the experiment were compared to the test results of the same number of randomly selected children from the same department not visiting the "Green room" (control group).

The comparison of the test results of the experimental and control groups of children demonstrated statistically significant difference.

The second parameter was the adequacy of feelings towards the choice of colors that didn't show significant difference in 2 groups.

The third measurement regarded the degree of filling a man's silhouette with colors that was significantly improved in the experimental group: before therapy the children were painting only some parts of body, whereas after the therapy in the "Green room" children were painting the whole silhouette that could be interpreted as getting to know and accepting the body.

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀՈԳԵՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՆԱՅԻՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴՈՎՎարդանյան Կ.Կ.¹, Ղազարյան Գ.Ա.², Հայրապետյան Ա.Կ.³, Նարիմանյան Մ.Չ.¹ԵՊԲՀ,¹ ընտանեկան բժշկության, ² բժշկական հոգեբանության և ³ հանրային առողջության ամբիոն

Ներկայացված հետազոտության նպատակն է երկարատև բուժում ստացող երեխաների հոգեհուզական վիճակի վրա հիվանդանոցների կանաչապատման ազդեցության ուսումնասիրությունը:

Երևանի «Մուրացան» հիվանդանոցում մեր կողմից ստեղծվել է հատուկ ընտրած բույսերով «կանաչ սենյակ», որտեղ բուժաշխատողների հսկողության տակ երեխաներն անցել են արտթերապիա: Ցանկության դեպքում երեխաներին հնարավորություն է տրվել խնամելու բույսերը: Երկու խումբ երեխաների հոգեհուզական վիճակը ուսումնասիրելու և ստուգելու համար օգտագործվել է «Չգացմունքների հրաշալի աշխարհ» թեստային մեթոդը, որը տալիս է երեխաների գույ-

ների գերադասությունների նկարագիրը: Երեխաները հետազոտվել են առաջին և տասներորդ օրերը: Փորձին մասնակցող թվով 21 երեխաների ստուգման արդյունքները համեմատվել են թվով 21 այլ՝ «կանաչ սենյակ» չայցելող երեխաների արդյունքների հետ:

Գնահատվել է երկու խմբերի երեխաների նկարներում գույների արտահայտման հաճախականությունը բուժումից առաջ և հետո: Համեմատությունների համար օգտագործվել է Մանն - Ուիլքոքի մեթոդը (Ս-չափորոշիչ):

Չգացմունքային վիճակի մակարդակի տարբերությունը բուժման ընթացքում «կանաչ սենյակ» այցելող և չայցելող երեխաների միջև նշանակալի է:

УДК: 613.5

ИЗУЧЕНИЕ ОПРОСНЫХ ДАННЫХ МЕДПЕРСОНАЛА ПО ОЦЕНКЕ РЕОРГАНИЗАЦИИ ОЗЕЛЕНЕНИЯ КЛИНИЧЕСКИХ БОЛЬНИЦ ЕГМУ

*Варданян К.К.**ЕГМУ, кафедра семейной медицины*

Ключевые слова: озеленение больниц, озеленение и здоровье, зеленые насаждения в больнице, больничный парк, гигиена больниц.

Актуальность

Оздоровление окружающей среды является одной из серьезных задач современного здравоохранения. Одним из эффективных средств оздоровления городской среды, как по результатам и срокам осуществления, так и по стоимости, является озеленение [4].

Особую актуальность вопросы озеленения приобретают в отношении лечебно-профилактических учреждений, поскольку между гигиеническим благоустройством больницы и состоянием здоровья пациентов существует непосредственная связь [6]. Гигиенический фактор в современном представлении является неотъемлемой частью всего комплекса лечебно-профилактических мероприятий. Глубокого научного обоснования требует разработка норм проектирования больничной среды. Нормативы должны разрабатываться с учетом профиля больницы и исходя из естественных запросов человека к большему комфорту [5].

В настоящее время, в связи с новыми тенденциями в градостроительстве – повышением плотности застройки и уменьшением озелененных площадей, нивелируется санитарно- и психо-гигиеническое значение озеленения для обеспечения здоровья человека. Так, при норме озеленения на одного человека для резко-континентального климата г. Еревана в 24,4 м², показатель составляет всего лишь 4,5 м² [3].

Больничному парку отводится ведущая роль в формировании “психологического” климата больницы. Эмоциональный статус человека является важным звеном патогенеза психо-соматических заболеваний. Зрительные и тактильные контакты с растительным миром помогают человеку понять свое место в мире посредством рефлексии, направленной как на себя, так и на окружающие растения. Современные медицинские исследования подтверждают, что именно зеленый цвет растений благоприятно влияет на нервную систему, уменьшает усталость, восстанавливает работоспособность [2].

Учитывая все вышеизложенное, с 2007 по 2010 гг. в клиниках ЕГМУ проведена широкомасштабная реорганизация озеленения. В результате комплексной оценки физических, химических, микробиологических, архитектурно-планировочных, социально-гигиенических факторов в условиях больничной среды нами разработаны и внедрены новые принципы озеленения больниц, направленные на оздоровление и эстетизацию больничной среды.

Настоящая работа является одним из фрагментов научного проекта по оценке реорганизации озеленения, проведенной в клинических больницах ЕГМУ.

Материал и методы

В одномоментном исследовании методом случайной выборки приняли участие 528 медработников, что составило 88,4% от общего числа врачей и медсестер, работающих в клинических больницах ЕГМУ согласно штатному расписанию. Анкетным опросом был охвачен медперсонал университетского первого клинического больничного комплекса, клиники “Мурацан” и поликлиники “М. Гераци”. Из общего числа работающих в исследуемых клиниках врачей и медсестер в исследовании приняли участие 219 врачей из 348 (62,9%) и 309 медсестер из 398 (77,6%). Исследование поперечное, одномоментное, выборочное, время проведения – с мая по октябрь 2010 года.

Для проведения исследования нами была использована специально разработанная анкета, состоящая из трех частей. Первая часть включала паспортные данные участников, сведения о месте, стаже работы и специальности. Вторая часть состояла из 16 вопросов, касающихся мнения медицинского персонала о характере психо-гигиенического влияния озеленения на их здоровье, а также оценку эффективности реорганизации озеленения клинических больниц ЕГМУ. Третья часть - адресована лечащим врачам и направлена на выявление степени значимости озеленения больничной среды, а также его влияния на течение, исход заболеваний и длительность пребывания больного в лечебном учреждении. Каждому участнику была разъяснена цель исследования и принцип добровольного участия в нем.

Полученные данные заносились в компьютерную базу данных, а статистическая обработка проводилась с использованием пакетов программ Excel 2007 и XLSTAT 2009. Статистическая значимость результатов до и после реорганизации озеленения оценивалась с применением критерия Манна-Уитни.

Результаты и обсуждение

Результаты опроса показали, что 87,9% (464) из числа опрошенных – женщины, а 12,1% (64) – мужчины. Средний возраст сотрудников клиник ЕГМУ составил 40 лет. Самому старшему сотруднику 67 лет, а самому младшему – 19. Каждый второй респондент или 50% из числа опрошенных являлся сотрудником Первого клинического больничного комплекса.

Подавляющее большинство опрошенных или 86,2% (455) высказалось, что садово-парковая зона клинических больниц нуждалась в реорганизации и благоустройстве, не согласились с ними 8,1% (43) опрошенных, затруднились ответить – 5,7% (30).

Изменения в уровне озеленения больниц и прибольничных территорий, произошедшие в результате его реорганизации, отмечены значительной частью опрошенных. Из числа опрошенных 94,5% (495) высказались, что за последние годы уровень озеленения больницы и прибольничной территории улучшился, не согласились с ними 1,7% (9) респондентов, а 3,8% (20) из числа опрошенных затруднились ответить.

Большинство респондентов указало, что положительное влияние озеленения стало результатом его реорганизации, а благотворное влияние, по мнению опрошенных, проявилось в оздоровлении окружающей среды 89% (470), снижении уровня шума 74,4% (393) и запыленности 87,7% (463) на территории больничного участка, а также в повышении декоративно-эстетической привлекательности больничных участков 95,1% (502).

Сравнение данных опроса до и после реорганизации озеленения клинических больниц ЕГМУ показало, что до реорганизации озеленения более половины респондентов – 67,4% (356), оценивали состояние садово-парковой зоны больницы как неудовлетворительное, в то время как после его реорганизации – всего лишь 1,7% (9) опрошенных сохранили прежнее мнение. До реорганизации удовлетворительно оценивали состояние озеленения исследуемых больниц 13,4% (71) респондентов, тогда как после реализации проекта, значительное число респондентов или 93,8% (495) изменили свое мнение на противоположное. До реорганизации

озеленения затруднились ответить 19,1% (101) респондентов из числа опрошенных, после реорганизации – 4,5% (24) (рис. 1).




Рис. 1. Оценка состояния озеленения до и после реорганизации садово-парковой зоны (% от общего числа респондентов)

Важным средством профилактики утомления и условием поддержания высокой работоспособности является установление рационального режима труда и отдыха. Режим труда формируется чередованием периодов работы и отдыха. После создания условий для полноценного отдыха в садово-парковой зоне клинических больниц ЕГМУ, большинством опрошенных респондентов – 79,4% (419), было отмечено увеличение интенсивности использования больничного сада, причем как пациентами и сотрудниками клиник, так и посетителями. Кроме того, поскольку исследуемые клиники являются учебными базами ЕГМУ, то необходимо создание надлежащих условий отдыха и для студентов университета. По данным опроса, реорганизация озеленения изменила режим труда и отдыха медперсонала и значительное число респондентов из числа опрошенных – 48,1% (254), с целью отдыха чаще стали бывать в больничном саду. Реже стали отдыхать в садово-парковой зоне больницы – 5,5% (29) респондентов, проводят в нем столько же времени, сколько до реорганизации озеленения – 26,7% (141), а 19,7% (104) – затруднились ответить.

Анализ данных анкетного опроса относительно наличия аллергических реакций среди медицинского персонала больниц до и после реорганизации озеленения показал, что до реорганизации наличие аллергии отметили 18,4% (97) респондентов, тогда как после реорганизации аллергия встречается у 7,8% (41) опрошенных, т.е. на 10,6 % (56) меньше, чем до реорганизации ($p=0,001$) (рис. 2). Это может расцениваться, как результат реорганизации озеленения, в процессе

Таблица 1.

Благотворное влияние вследствие пребывания в озелененной зоне

Проявления благотворного влияния	Да		Нет		Затрудняюсь ответить	
	п	%	п	%	п	%
1. эстетическое удовольствие	465	88,1	12	2,3	51	8,7
2. положительные эмоции	480	90,9	10	1,9	38	7,2
3. повышение настроения	452	85,6	13	2,5	63	11,9
4. облегчение преодоления стрессовой ситуации	410	77,7	34	6,4	84	15,9
5. душевное удовлетворение	445	84,3	22	4,2	61	11,6
6. улучшение самочувствия	451	85,4	11	2,1	66	12,5
7. чувство покоя	475	90,0	10	1,9	43	8,1

которой изменился породный состав деревьев (на больших участках удалено более 30% (45) деревьев с ярко выраженными аллергенными свойствами, которые были заменены более ценными породами, без подобных свойств), а также снизилась запыленность больницы территории за счет созданных газонных участков (9800м²).




Рис. 2. Аллергические реакции до и после озеленения (% от общего числа респондентов)

Озеленение окружающей среды имеет большое оздоровительное значение, поскольку правильно организованный ландшафт оказывает положительное влияние на психо-эмоциональную сферу человека, что в свою очередь способствует повышению работоспособности. На вопросы, которые касались влияния озеленения на психо-эмоциональное состояние респондентов, мнения распределились следующим образом: пребывание в садово-парковой зоне больниц сказывается положительно – 91,9% (485), никак не сказывается – 3,2% (17), сказывается отрицательно – 0,6% (3), затруднились ответить – 4,4% (23) респондентов.

Результаты опроса показали, что пребывание в садово-парковой зоне больниц положительно сказывается на общем самочувствии у 87,7% (463) респондентов,

отрицательно – у 0,2% (1), никак не сказывается - у 8,3% (44), а 3,8% (20) затруднились ответить. Разнообразие и гармоничность цветовой гаммы больничного сада и, что особенно важно, необходимость его сохранения в течение всего года была отмечена 88,3 % (466) респондентами. Различные проявления благотворного влияния вследствие пребывания в озелененной зоне представлены в таблице 1.

Отмечая положительное влияние озеленения, мнения респондентов распределились следующим образом: в озелененной зоне воздух свеж и чист – 88,3% (466); в жаркую погоду - в саду прохладно – 81,6% (431), менее ветренно – 79,7% (421), тихо и спокойно – 82,8% (437); в ясную солнечную погоду зеленые насаждения защищают от ослепляющего солнечного света – 74,1% (391).

При прочих равных условиях, в случае выбора лечебно-профилактического учреждения, 77,7% (410) респондентов предпочли бы лечиться в больнице с должным уровнем озеленения, тогда как для 10,2% (54) опрошенных озеленение не имеет никакого значения, 12,1% (64) из числа опрошенных затруднились ответить.

На вопрос чувствуют ли опрошенные внутреннее удовлетворение, что работают в лечебно-профилактическом учреждении с должным уровнем озеленения – абсолютное большинство респондентов или 92,2% (482) ответили положительно, 1,1% (6) – отрицательно, 6,6% (35) опрошенных - затруднились ответить.

Последняя часть опросника обсуждалась только с врачами. Она состояла из 6 вопросов, которые касались профессионального отношения лечащих врачей к изучаемой проблеме.

Результаты опроса выявили, что подавляющее большинство опрошенных или 91,3% (200) респондентов придерживаются мнения, что озеленение имеет

положительное лечебно-оздоровительное влияние в восстановительном периоде больного. Не согласились с подобным утверждением 1,8% (4) респондентов, затруднились ответить – 6,8% (15) сотрудников.

Что касается влияния озеленения на психо-эмоциональное состояние пациентов, то из числа опрошенных – 90,4% (198) оценили его как положительное, против такого утверждения высказались 1,4% (3) респондентов, затруднились ответить – 8,2% (18) опрошенных.

Кроме того, рассматривался вопрос, касающийся возможной связи между частотой использования садово-парковой зоны больницы пациентами и длительностью их пребывания в лечебном учреждении. Из числа респондентов 77,6% (170) согласились с подобным утверждением, высказались против – 5% (11), затруднились ответить – 17,4% (38) опрошенных.

О возможности использования озеленения в качестве естественного целебного средства высказались положительно 51,1% (112) респондентов, не согласились с подобным утверждением – 27,4% (60), затруднились ответить – 21,5% (47).

Движения в пределах физиологических возможностей, будучи для ребенка оздоровительным фактором, являются частью лечебного процесса. Поэтому именно больничный сад, при правильной его организации, может в психологическом отношении быть средой, смягчающей больничный режим [1, 7].

На вопрос считаете ли Вы, что озелененная должным образом садово-парковая зона больницы имеет особую актуальность для детских клиник, поскольку обеспечивает физическую активность больного ребенка, подавляющее большинство респондентов - 89% (195) ответили положительно, не согласились с подобным утверждением 2,3% (5), а 8,7% (19) респондентов – затруднились ответить.

Результаты опроса выявили, что из числа опрошенных 71,2% (156) считают, что в случае выбора лечебно-профилактического учреждения (ЛПУ), при прочих равных условиях, должный уровень озеленения будет

способствовать увеличению потока пациентов, отрицали подобное утверждение 5,9% (13) респондентов, затруднились ответить - 22,8% (50).

Обеспечение комфортной среды ЛПУ является одной из важнейших санитарно-гигиенических задач, так как состояние болезни вызывает отклонения в психо-физиологическом состоянии больных и обострение реакций на стрессобразующие факторы лечебно-оздоровительного процесса.

На вопрос “считаете ли Вы, что озеленение должно рассматриваться, как обязательная структурная единица лечебно-профилактического учреждения” 90,9% (199) респондентов отозвались положительно, не согласились с подобным утверждением – 0,5% (1) опрошенных, затруднились ответить – 8,7% (19) опрошенных.

Таким образом, использование новых принципов озеленения, направленных на повышение санитарно-гигиенической и декоративно-эстетической значимости больничных территорий, вносит большой вклад в оздоровление больничной среды и создает комфортные условия для лечения больных и работы персонала.

Выводы

1. Озеленение лечебно-профилактических учреждений оказывает положительное влияние на здоровье и психо-эмоциональную сферу медработников.
2. Озеленение лечебно-профилактических учреждений должно рассматриваться в качестве одного из критериев гигиенического нормирования больничной среды.
3. Для создания условий полноценного отдыха пациентов, медработников и посетителей лечебно-профилактических учреждений садово-парковая зона должна быть озеленена должным образом.
4. Качество озеленения больничного сада, как основного места отдыха пациентов, медработников и посетителей, в значительной степени определяет интенсивность его использования.

ЛИТЕРАТУРА

1. Боровик Э.Б., Филипова Н.А. К вопросу об организации территории детских больниц // Гигиена и санитария/ М., Медицина, №3, 1974, стр.15-18.
2. Баран В.И., Никифоров Ю.В. Ландшафтотерапия как один из эффективных методов медико-социальной реабилитации пациентов с психическими расстройствами // Журнал психиатрии и медицинской психологии/ Донецк, №1 (18), 2008, стр. 90-93.
3. Варданян Ж.А., Григорян А.А. Актуальные проблемы озеленения г. Еревана Проблемы современной дендрологии // Материалы международной конференции посвященной 100-летию со дня рождения П.И.Лапина. М., 2009, www.gbsad.ru/lapin/intr_drev_rast.pdf
4. Неверова О.А. Экологическая оценка состояния древесных растений и растений и загрязнения окружающей среды промышленного города (на примере Кемерово): Дис. ... д-ра биол. наук: 03.00.16: Кемерово, 2004, 358стр.
5. Штрейс А.И. Современные проблемы гигиены больничного строительства больниц // Гигиена и санитария / М., Медицина - №4, 1967 г., стр.26-27
6. Vardanyan K.K. Gardening as an Important Condition for Hospital Area Optimization //The New Armenian Medical Journal / Yerevan, Volume 4, №1, March 2010, pp. 141-142
7. William A. Rae and Darlen A. Stieber. Plant Play Therapy: Growth throughout Growth // Journal of Pediatric Psychology, -1976. -Volume 1, N. 4, pp 18-20

SUMMARY

INVESTIGATION OF THE MEDICAL STAFF SURVEY RESULTS ON REORGANISATION OF YSMU CLINICAL HOSPITALS' PHYTODESIGN

Vardanyan K.K.

YSMU, Department of Family Medicine

Keywords: greenery and health, green plantations in the hospital, hospital area, planting of greenery, gardening of clinics, hospital territory

Environment healing is one of the most serious problems of contemporary public health. In regard with the results, realization terms, as well as cost, phyto-design is one of the effective means for improving and healing the municipal environment.

Greenery problems are especially actual for medical and prophylactic institutions. Today hygienic factor is considered to be an integral part of medical and prophylactic measures.

Taking into account the above mentioned, wide-range greenery reorganization activities have been undertaken in YSMU clinics.

This research is part of the program for evaluation of the phyto-design reorganization in YSMU clinical hospitals.

This survey, which was carried out from May to October 2010, involved 528 medical staff members (219 doctors and 309 nurses).

The survey, containing 21 questions, was conducted in YSMU Clinical Hospital N1, "Mouratsan" Clinic and "M. Heratsi" Out-Patient Department at a time.

Due to the investigation results, the following conclusions have been made:

- ◆ Phyto-design of medioprophylactic institutions has a positive influence on the health and emotional state of medical personnel;
- ◆ Phyto-design of medical and prophylactic institutions should be considered as one of the hygienic normalization criteria for hospital environment;
- ◆ For providing patients, medical staff and visitors with nice conditions for rest, garden or park zone should be reasonably designed;
- ◆ Intense use of a hospital garden as a rest place for patients, medical staff and visitors greatly depends on the phyto-design quality.

ԱՄՓՈՓՈՒՄ

ԵՊԲՅ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱԶՄՈՒ ՀԱՐՑԱԽՈՒՅՑԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Վարդանյան Զ.Կ.

ԵՊԲՅ, ընտանեկան բժշկության ամբիոն

Շրջակա միջավայրի առողջացումը ժամանակակից առողջապահության լուրջ խնդիրներից է: Զաղաքային միջավայրի բարեկարգման և առողջացման էֆեկտիվ միջոցներից է հանդիսանում կանաչապատումը՝ ինչպես արդյունքների և իրականացման ժամկետների, այնպես էլ արժեքի տեսակետից: Կանաչապատման հարցերը հատկապես արդիական են բուժ-պրոֆիլակտիկ հիմնարկների համար: Ժամանակակից պատկերացմամբ հիգիենիկ գործոնը բուժական-պրոֆիլակտիկ միջոցառումների անբաժան մաս է համարվում: Հաշվի առնելով վերոհիշյալը, 2007-2010 թթ. ԵՊԲՅ կլինիկաներում կատարվել է կանաչապատման լայնածավալ վերակազմակերպում:

Ներկա գիտական աշխատանքը հանդիսանում է ԵՊԲՅ կլինիկական հիվանդանոցներում անցկացված կանաչապատման վերակազմակերպման գնահատման ծրագրի մեկ հատվածը: Միաժամանակ անցկացված հետազոտմանը մասնակցել են 528 բուժաշխատողներ՝ 219 բժիշկ և 309 բուժքույր: Հետազոտումն անց է կացվել 2010 թ.-ի մայիս-հոկտեմբեր ամիսներին: Հարցաշարային հետազոտումնը մասնակցել են ԵՊԲՅ համալսարանական առաջին կլինիկական հիվանդանո-

ցային համալիրի, «Մուրացան» կլինիկայի և «Մ. Հերացի» պոլիկլինիկայի բուժանձնակազմը՝ հատուկ մշակված, 21 հարց պարունակող հարցաշարի օգնությամբ:

Հետազոտման արդյունքում կատարվել են հետևյալ եզրակացությունները.

- ◆ Բուժական-պրոֆիլակտիկ հիմնարկների կանաչապատումը դրական ազդեցություն է թողնում բուժաշխատողների առողջության և հոգեհուզական ոլորտի վրա:
- ◆ Բուժական-պրոֆիլակտիկ հիմնարկների կանաչապատումը պետք է դիտարկել որպես հիվանդանոցային միջավայրի հիգիենիկ նորմավորման չափանիշներից մեկը:
- ◆ Պացիենտների, բուժաշխատողների և այցելուների լիարժեք հանգստի պայմանների ստեղծման համար այգեպուրակային գոտին պետք է լինի պատշաճ կանաչապատված:
- ◆ Հիվանդանոցային այգու՝ որպես պացիենտների, բուժաշխատողների և այցելուների հանգստի հիմնական վայր, օգտագործման ինտենսիվությունը նշանակալիորեն պայմանավորվում է կանաչապատման որակով:

ՀՏԴ: 613.2-058:378.18(479.25)

ՀՀ ԵՎ ԼՂՀ ԲՈՒՅԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՍՆՆԴԻ ՀԻԳԻԵՆԻԿ ԳՆԱՅԱՏԱԿԱՆԸ

Ավագյան Կ.Կ.

ԵՊԲՀ, դատական բժշկության ամբիոն

Բանալի բառեր՝ ուսանող, փաստացի սնունդ, սննդա-
կյութ

Թեմայի արդիականությունը

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անկախացած Հայաստանի Հանրապետության տնտեսվարման նոր կացութաձևի անցումային փուլում արձանագրվել է բնակչության կենսամակարդակի կտրուկ անկում: Հայտնի է, որ կենսամակարդակի ցանկացած փոփոխություն իր կնիքն է թողնում առաջին հերթին ազգաբնակչության առավել «խոցելի» խմբերի առողջական վիճակի վրա: Ուստի, բնակչության կենսամակարդակի ցանկացած փոփոխության դեպքում անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել նրա առավել «խոցելի» խմբերի առողջական վիճակը և ստացված արդյունքների հիման վրա մշակել առողջական վիճակի բարելավմանն ուղղված գիտակա-
նորեն հիմնավորված միջոցառումներ: Այդ է պատճառը, որ բազմաթիվ երկրներում ազգաբնակչության առավել զգայուն խմբերի առողջական վիճակը մշտապես գտնվում է հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Հանրահայտ է, որ առողջությունը, որը ձևավորվում է մանկական հասակում և ավարտվում է ուսանողական տարիներին, պայմանավորում է ազգի առողջական վիճակը և աշխատանքային ներուժը: Ուսանողությունը հասարակության այն առանձնահատուկ խումբն է, որը բնութագրվում է աճի և զարգացման դեռևս անավարտ պրոցեսներով և բացի շրջակա միջավայրի ընդհանուր գործոնների ազդեցությունից, ենթարկվում է նաև բարձրագույն դպրոցին բնորոշ համալիր գործոնների՝ նոր աշխատանքային գործունեության, մեծ ինֆորմացիոն դաշտի առկայության, սոցիալական միջավայրի, կյանքի պայմանների փոփոխության և այլնի ազդեցությանը [1]: Այս իմաստով բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելն ուղեկցվում է ուսանողների շրջանում հարմարվողական մեխանիզմների լարվածությամբ [2, 3, 4, 8, 12]: Ակնհայտ է, որ ուսանողների առողջական վիճակի հսկողությունը, կապված անցումային շրջանում նոր սոցիալ-տնտեսական պայմանների, ինչպես նաև ուսումնական պրոցեսի վերակառուցման հետ, պետք է գտնվի հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Հայտնի է, որ մարդու առողջությունն ավելի քան 50%-ով պայմանավորված է իր ապրելակերպով, հետ-

ևաբար, աճող սերնդի դրական վերաբերմունքի դաստիարակությունն «առողջ ապրելակերպի» տարբեր բաղադրիչների նկատմամբ կնպաստի ինչպես անհատի, այնպես էլ ամբողջ ազգաբնակչության առողջության պահպանմանը և ամրապնդմանը [1, 9, 14]: Առողջ ապրելակերպի բաղադրիչներից է ռացիոնալ սնունդը, որը ներառում է ինչպես սննդի հաշվեկշռվածությունը, այնպես էլ սննդի ընդունման ռեժիմը: Կասկած չի հարուցում այն փաստը, որ օրգանիզմի բնականոն աճի և զարգացման համար կարևոր գործոն է նաև ռացիոնալ սնունդը, որն օրգանիզմում օպտիմալ ձևով ապահովում է նյութափոխանակությունը: Հավելենք նաև, որ սնունդը չի կարելի դիտարկել միայն որպես էներգիայի և սննդանյութերի աղբյուր [6], քանի որ գրականության բազմաթիվ տվյալներ փաստում են, որ մի շարք ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն հիվանդությունների էթիոպաթոգենեզի հիմքում ընկած է սննդային գործոնը և վերջինի բնույթը փոփոխելով հնարավոր է կանխարգելել բազմաթիվ հիվանդությունների զարգացումը, ինչպես նաև կանխել կամ մեղմացնել օրգանիզմի վրա շրջակա միջավայրի տարբեր վնասակար գործոնների ազդեցությունը [5, 7, 10, 13, 15, 16, 17]: Ուստի կարևորելով սննդային գործոնի դերը առողջության ձևավորման և պահպանման հարցում՝ ակնհայտ է դառնում ՀՀ և ԼՂՀ բուհերում սովորող ուսանողների շրջանում փաստացի սննդի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Նպատակը

Հետազոտության նպատակն էր տալ ՀՀ և ԼՂՀ բուհերում սովորող ուսանողների փաստացի սննդի հիգիենիկ գնահատականը:

Նյութը և մեթոդները

Հետազոտությունն անցկացվել է Երևանի (8 պետական բուհերում), Իջևանի (Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ), Գյումրիի (Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ) և Ստեփանակերտի (Արցախի պետական համալսարան) բուհերում սովորող 3584 ուսանողների շրջանում: Ուսանողների փաստացի սնունդն ուսումնասիրվել և գնահատվել է հարցաթերթային հարցման միջոցով, որի համար հիմք են ծառայել Ռուսաստանի Դաշնության ԲԳԱ սննդի

ինստիտուտի կողմից առաջարկված հարցաթերթերը: Մեր կողմից ուսումնասիրվել է ուսանողների մեկ շաբաթական սննդամթերքի հավաքածուները, որոնց հիման վրա հաշվարկվել է միջին օրական հավաքածուն: Վերջինի քիմիական կազմն ու կալորիականությունը որոշվել է հատուկ աղյուսակների միջոցով [19, 20]: Ստացված տվյալների հիման վրա կատարվել է սննդի հաշվեկշռվածության վերլուծություն, իսկ փաստացի սննդի քիմիական կազմի և էներգետիկ արժեքի տվյալները համեմատվել են համապատասխան նորմերի հետ [18]:

Արդյունքները և քննարկումը

Հաշվեկշռված սնունդը, առաջին հերթին, ենթադրում է հիմնական սննդամթերքի ինչպես որակական, այնպես էլ քանակական բալանսավորվածություն: Տղա-ուսանողների փաստացի սննդի քիմիական կազմի վերլուծությունը ցույց տվեց (աղ. 1), որ հետազոտված բուհերում սովորող տղա-ուսանողների սննդում սպիտակուցի ընդհանուր քանակը գտնվում է 95,2գ-ից 96,9գ-ի սահմաններում, այսինքն ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը այդ քանակը գերազանցում է առաջարկվող հիգիենիկ նորմերին ($P < 0,001$): Սպիտակուցների առավել բարձր քանակ արձանագրվել է Իջևանի տղաների սննդում (որոնք ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը ստացել են 31% հավելյալ սպիտակուց), մինչդեռ մնացած շրջանների բուհերում սովորող տղաների սննդում սպիտակուցի ավելցուկը կազմել է 17,9%-26%:

Հայտնի է, որ օրգանիզմի նորմալ աճի և զարգացման համար կարևոր նշանակություն ունի ոչ միայն սպիտակուցի ընդհանուր քանակը, այլ նաև որակը, քանի որ միայն բուսական սպիտակուցով հնարավոր չէ ապահովել օրգանիզմի էսենցիալ ամինաթթուների անհրաժեշտ պահանջը: Ուսանող տղաների սննդում, նորմերի հետ համեմատած, փոքր ինչ ավել է կենդանական սպիտակուցի քանակը ($P > 0,05$), սակայն կենդանական և բուսական սպիտակուցների փոխհարաբերությունը խախտված է և 55%:45%-ի փոխարեն միջինում կազմում է 48%:52%:

Եթե սպիտակուցի ընդհանուր քանակը տղաների սննդում փոքր-ինչ գերազանցում է առաջարկվող նորմերին, ապա ճարպի ընդհանուր քանակը հավաստի չի տարբերվում հանձնարարվող նորմերից, նկատվում է ոչ մեծ՝ միջինում 5գ. դեֆիցիտ (բացառությամբ Իջևանի բուհում սովորող տղաների, որոնց սննդում ճարպի ընդհանուր քանակը գտնվում է նորմայի սահմանում): Հարկ է նշել, որ բուսական ճարպի քանակը կազմել է մոտ 14%՝ առաջադրվող 30%-ի փոխարեն: Մտահոգիչ է հատկապես վերջինիս դեֆիցիտը, քանի որ այն հիմնական աղբյուր է գերհագեցած ճարպաթթուների համար: Ինչպես հայտնի է, ω ընտանիքի ճարպաթթուներն օժտված են

իմունոկարգավորող ազդեցությամբ, նրանք բարձրացնում են օրգանիզմի դիմադրողականությունը (հատկապես սթրեսային իրավիճակներում) և կարևոր գործոն են առողջության պահպանման հարցում:

Տղա-ուսանողների սնունդը, ընդհանուր ազգաբնակչության սննդի հետ համեմատած, ածխաջրատային միտվածություն չունի: Ճիշտ է առկա է ածխաջրատային ոչ մեծ ավելցուկ (ընդ որում, այն առավել արտահայտված է Իջևանի տղաների սննդում ($P > 0,05$)): Սակայն ածխաջրատային բաղադրիչի դեպքում առավել անհանգստանողը պարզ ածխաջրատների բարձր քանակն է, որը, ինչպես հայտնի է, ռիսկի գործոն է մի շարք ոչ ինֆեկցիոն հիվանդությունների՝ շաքարային դիաբետի, կարիեսի, ճարպակալման, սիրտ-անոթային հիվանդությունների և այլնի զարգացման համար: Միևնույն ժամանակ տղաների սննդին բնորոշ է նաև սննդաթելերի ցածր քանակը, որը ևս մեկ անգամ փաստում է նրանց սննդում դանդաղամարս ածխաջրատներ պարունակող սննդամթերքի ցածր և փոխարենը՝ դյուրամարս և զտված սննդամթերքի բարձր տեսակարար կշռի մասին:

Ուսանողուհիների փաստացի սննդում հիմնական սննդամթերքի ուսումնասիրությունը (աղ. 2) բացահայտեց, որ ինչպես տղաների, այնպես էլ այս դեպքում առկա է սննդի բալանսավորվածության սկզբունքի խախտումը: Այսպես. ընդհանուր սպիտակուցի քանակը 7,9%-12,2%-ով նորմերից բարձր է: Թեև կենդանական սպիտակուցի պարունակության և հանձնարարվող նորմի տարբերությունը հավաստի չի ($P > 0,05$), այնուամենայնիվ, խախտվել է կենդանական և բուսական սպիտակուցի տոկոսային փոխհարաբերությունը՝ կազմելով 51%:49%:

Ճարպային բաղադրիչի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ, թեև ճարպի ընդհանուր քանակը աղջիկների սննդում գրեթե չի տարբերվում առաջարկվող նորմայից ($P > 0,05$), սակայն նրանում կիսով չափ պակաս է կենսաբանական ակտիվությամբ օժտված գերհագեցած ճարպաթթուների աղբյուր հանդիսացող բուսական ճարպի քանակը, ինչը հղի է տարբեր բացասական հետևանքներով:

Ածխաջրատների ընդհանուր քանակը գարնանը Իջևանի և աշնանը Գյումրիի ուսանողուհիների սննդում հավաստի չի տարբերվել համապատասխան նորմից ($P > 0,05$), մինչդեռ մնացած բուհերի ուսանողուհիների սննդում գարնանն արձանագրվել է ածխաջրատների փոքր դեֆիցիտ, իսկ աշնանը, ընդհակառակը, փոքր ավելցուկ ($P < 0,05$): Չնայած այն փաստին, որ ածխաջրատների ընդհանուր քանակի շեղումները զգալի չեն, այդուհանդերձ աղջիկների դեպքում նույնպես մտահոգության առարկա է մոնո- և դիսախարիդների բարձր (մոտ 3-4 անգամ գերազանցում են համապատասխան

Աղյուսակ 1

Տղա-ուսանողների սննդի հիմնական սննդանյութերի քանակները գարնանը և աշնանը

Քաղաք	Տարվա եղանակը	Սպիտակուցներ			Ծարպեր			Ածխաջրատներ		
		Ընդհանուր քանակը (գ) M±m	այդ թվում կենդանական (գ) M±m	կենդանական սպիտակուցի %-ը ընդհանուրի մեջ	Ընդհանուր քանակը (գ) M±m	այդ թվում բուսական (գ) M±m	բուսական ճարպի %-ը ընդհանուրի մեջ	Ընդհանուր քանակը (գ) M±m	այդ թվում սնունդ- և դիտարկումներ (գ) M±m	այդ թվում սննդամթերք (գ) M±m
Երևան n=932	գարուն աշուն	98,0±1,1* 94,4±1,1*	48,6±0,9* 44,6±0,9	49,6* 47,3*	79,2±1,2* 75,6±1,2*	11,3±0,3* 11,2±0,3*	14,4* 14,9*	370,5±3,5* 392,8±4,0*	97,5±1,9 125,9±2,5	6,1±0,1 8,4±0,1
Իջևան n=106	գարուն աշուն	103,4±3,0* 103,5±3,1*	50,6±2,3* 50,4±2,6*	48,9* 48,7*	83,3±3,1* 81,8±3,2*	9,7±0,5* 10,3±0,6*	11,6* 12,6*	403,7±9,8 418,5±10,7	104,1±4,4 136,1±5,7	6,0±0,2 9,3±0,3
Գյումրի n=102	գարուն աշուն	92,5±1,6* 89,9±1,7*	43,7±1,3 41,1±1,3	47,2* 45,7*	75,1±1,8* 72,3±1,7*	10,8±0,5* 9,8±0,4*	14,4* 13,6*	351,2±4,2* 369,8±5,2*	94,5±3,1 118,9±3,8	5,9±0,2 7,4±0,2
Արցախ n=110	գարուն աշուն	94,7±1,5* 92,8±1,5*	44,3±1,2 42,9±1,1	46,8* 46,2*	76,8±1,6* 76,5±1,8*	11,7±0,6* 11,5±0,5*	15,2* 15,0*	373,5±4,9* 398,6±6,3*	100,6±3,3 135,6±4,5	6,3±0,2 9,5±0,2
Ընդամենը n=1250	գարուն աշուն	96,9±1,0* 95,2±1,0*	46,8±0,8* 44,8±0,8	48,3* 47,1*	78,6±1,1* 76,6±1,1*	10,9±0,3* 10,7±0,3*	13,9* 14,0*	374,7±3,5* 395,0±4,1*	99,2±1,9 129,1±2,5	6,1±0,1 8,7±0,1
Նորմեր ՖԱԳ 1.4		72	40	56	81	24	30	358	-	-

Ծանոթություն. * Նորմերի համեմատ տարբերությունը հավաստի է (P<0,05)

Աղյուսակ 2

Աղջիկ-ուսանողների սննդի հիմնական սննդանյութերի քանակները գարնանը և աշնանը

Քաղաք	Տարվա եղանակը	Սպիտակուցներ			Ծարպեր			Ածխաջրատներ		
		Ընդհանուր քանակը (գ) M±m	այդ թվում կենդանական (գ) M±m	կենդանական սպիտակուցի %-ը ընդհանուրի մեջ	Ընդհանուր քանակը (գ) M±m	այդ թվում բուսական (գ) M±m	բուսական ճարպի %-ը ընդհանուրի մեջ	Ընդհանուր քանակը (գ) M±m	այդ թվում սնունդ- և դիտարկումներ (գ) M±m	այդ թվում սննդամթերք (գ) M±m
Երևան n=1843	գարուն աշուն	73,2±0,9* 71,2±0,9*	37,7±0,5* 35,0±0,5	51,5* 49,2*	65,7±0,7* 62,4±0,7*	10,4±0,2* 10,0±0,2*	15,8* 16,0*	275,7±2,6* 292,8±2,9*	88,5±1,1 111,4±1,4	5,7±0,1 7,8±0,1
Իջևան n=166	գարուն աշուն	72,4±3,0 71,5±3,2	36,3±2,3 36,1±2,6	50,1* 50,5*	65,1±3,5* 63,2±3,4*	9,6±0,7* 10,1±0,8*	14,7* 16,0*	283,9±11,2* 303,3±12,3	88,1±5,3 122,4±7,4	5,3±0,3 8,2±0,4
Գյումրի n=145	գարուն աշուն	71,0±1,0* 68,9±1,0*	35,9±0,9* 34,7±0,9	50,6* 50,1*	64,8±0,8* 63,1±0,8*	9,8±0,7* 8,9±0,7*	15,1* 14,1*	265,4±3,2* 283,3±3,8*	88,9±1,6 105,3±2,4	5,9±0,1 7,3±0,1
Արցախ n=180	գարուն աշուն	72,9±0,9* 69,6±0,9*	39,3±0,9* 36,4±0,9	53,9* 52,3*	65,4±1,1* 59,7±1,0*	10,1±0,4* 8,9±0,3*	15,4* 14,9*	274,2±3,1* 301,9±3,4	91,2±1,9 113,4±2,3	5,8±0,1 8,2±0,2
Ընդամենը n=2334	գարուն աշուն	72,4±0,7* 70,3±0,7*	37,3±0,6* 35,6±0,6	51,5* 50,5*	65,3±0,7* 62,1±0,7*	10,0±0,2* 9,5±0,2*	15,3* 15,3*	274,8±2,5* 295,3±2,5*	89,2±1,1 113,1±1,1	5,7±0,1 7,9±0,1
Նորմեր ՖԱԳ 1.4		61	34	56	67	20	30	289	-	-

Ծանոթություն. * Նորմերի համեմատ տարբերությունը հավաստի է (P<0,05)

նորմերը) և սննդաթելերի ցածր (մոտ 4 անգամ պակաս են անհրաժեշտ պահանջից) քանակները:

Ուսանողների սննդի էներգետիկ արժեքի վերլուծությունը ցույց տվեց, որ Գյումրիի տղաների սննդի կալորիականությունը ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը համապատասխանել է նորմերին, հավաստի չեն տարբերվել Երևանի և Արցախի բուհերում սովորող տղաների սննդի էներգետիկ արժեքները հանձնարարվող նորմերից ($P > 0,05$), իսկ մնացած բուհերի տղաների սննդի կալորիականությունը մոտ 200-400 կկալ-ով ավել էր համապատասխան նորմերից ($P < 0,05$): Ուսանողուհիների շրջանում ընդունված սննդի կալորիականությունը հավաստի չի տարբերվել առաջադրվող նորմերից ($P > 0,05$):

Սակայն հայտնի է, որ սննդի էներգետիկ արժեքի նորմերին համապատասխանության հետ մեկտեղ կարևոր է նաև սննդում էներգակիր սննդանյութերի՝ սպիտակուցների, ճարպերի, ածխաջրատների տոկոսային փոխհարաբերությունը (որը ժամանակակից սննդագիտության հիմնական դրույթներին համաձայն կազմում է 12%:30%:58%): Ուստի, մեր կողմից կատարվեց ուսանողների սննդում հիմնական սննդանյութերի տոկոսային փոխհարաբերության վերլուծություն: Պարզվեց, որ ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների սննդում այդ փոխհարաբերությունը խախտվել է և կազմել համապատասխանաբար 14%:27%:59% և 14%:29%:57%:

Հաշվեկշռված սնունդը ենթադրում է ոչ միայն հիմնական սննդանյութերի բալանսավորվածություն, այլ նաև վիտամինների և հանքային աղերի անհրաժեշտ քանակ: Չնայած այն փաստին, որ միկրոնուտրիենտները էներգիայի աղբյուր չեն, այնուամենայնիվ, օրգանիզմի համար նրանք ունեն կարևոր կարգավորիչ նշանակություն, մասնակցում են տարբեր օքսիդավերականգման ռեակցիաներին: Անկասկած մեծ է վիտամինների և հանքային աղերի դերը նաև շրջակա միջավայրի վնասակար գործոնների և, հատկապես, նյարդահոլզական լարվածության բացասական ազդեցությունը վերացնելու կամ մեղմելու, ինչպես նաև օրգանիզմի մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և դիմադրողականությունը բարձրացնելու առումով: Ուստի անհրաժեշտ է ուսանողների սննդում կարևորել ոչ միայն մակրոնուտրիենտների՝ սպիտակուցների, ճարպերի և ածխաջրատների, այլ նաև միկրոնուտրիենտների՝ վիտամինների և հանքային նյութերի դերը:

Մեր կողմից տղաների փաստացի սննդում վիտամինների պարունակության վերլուծությունը (աղ. 3) ցույց տվեց, որ տարվա տարբեր եղանակներին գրանցվում են վիտամինների քանակների տատանումներ. արտահայտված սեզոնայնությունը բնորոշ էր մասնավորապես C, B₁, B₆, PP և A վիտամիններին, որոնց քանակը սննդում աշ-

նանս ավելի բարձր էր, քան գարնանը (զույգ սմուշների t թեսթի համաձայն $P < 0,05$):

Տարվա տարբեր եղանակներին C վիտամինի պարունակության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բոլոր հետազոտված բուհերում սովորող տղաների սննդում գարնանը գրանցվել է ասկորբինաթթվի անբավարար քանակ ($P < 0,05$), որը գտնվում էր 41,7մգ-ից 50,0մգ-ի սահմաններում: Աշնանն այս վիտամինի քանակը հավաստի չի տարբերվել համապատասխան նորմից, բացառությամբ Գյումրիի տղաների սննդի, որտեղ հայտնաբերվել է C վիտամինի անբավարար քանակ ($P < 0,05$):

B խմբի վիտամինների պարունակության վերլուծությունից պարզ դարձավ, որ եթե B₆ վիտամինի և ֆոլաքինի քանակները տղաների սննդում ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը համապատասխանել են առաջադրվող նորմերին, ապա B₁, B₂ և PP վիտամինների դեպքում գրանցվել են անբավարար քանակություն ($P < 0,05$):

A վիտամինի (ներառյալ β կարոտինային ակտիվությունը) քանակը տղաների սննդում ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը բավարարել է հանձնարարվող նորմերը, բացառությամբ գարնանը Գյումրիի տղա-ուսանողների սննդի, որտեղ հայտնաբերվել է ռետինոլի անբավարար քանակ ($P < 0,05$):

Տղաների սննդում E վիտամինի պարունակությունը տարվա երկու եղանակներին էլ համապատասխանել է հիգիենիկ նորմերին և գարնանն ու աշնանը կազմել միջինում համապատասխանաբար 21.4մգ և 20.8մգ՝ հանձնարարված 10մգ-ի փոխարեն ($P < 0,05$):

Ուսանողուհիների փաստացի սննդում վիտամինների պարունակության ուսումնասիրության վերլուծությունից պարզ դարձավ (աղ. 4), որ ինչպես և տղաների դեպքում, մի շարք վիտամինների պարունակությանը բնորոշ է սեզոնայնությունը. եղանակային գործոնի արտահայտված աղդեցությանը ենթակվել են C, B₆ և PP վիտամինները և մասամբ թիամինը (Գյումրիի և Արցախի աղջիկների շրջանում) ու ռետինոլը (Երևանի և Գյումրիի աղջիկների դեպքում), որոնց քանակների դեպքում սննդում աշնանը գրանցվել են ավելի բարձր ցուցանիշներ, քան գարնանը (զույգ սմուշների t թեսթի համաձայն $P < 0,05$):

Ասկորբինաթթվի պարունակության ուսումնասիրությունը ուսանողուհիների սննդում ցույց տվեց, որ գարնանը C վիտամինի քանակը տատանվում է 40,3մգ-ից 52,8մգ-ի սահմաններում, այսինքն ինչպես և տղաների դեպքում, գրանցվել է ասկորբինաթթվի անբավարար քանակ ($P < 0,05$): Աշնանն այս վիտամինի անբավարար քանակ հայտնաբերվել է Երևանի և Գյումրիի ուսանողուհիների սննդում ($P < 0,05$), մինչդեռ Իջևանի և Արցախի բուհերում սովորող աղջիկների օրաբաժիններում այս վիտամինի քանակը հավաստի չի տարբերվել համապա-

Աղյուսակ 3

Տղա-ուսանողների սննդում վիտամինների քանակները գարնանը և աշնանը

Վիտամինները	Տարվա եղանակը	Քաղաքը				Ընդամենը n=1250
		Երևան n=932	Իջևան n=106	Գյումրի n=102	Արցախ n=110	
C (մգ) M±m	գարուն աշուն	46,6±1,1* 68,2±1,4	41,7±2,4* 74,8±3,3	46,9±1,7* 61,8±2,1*	50,0±2,2* 74,8±2,4	46,3±1,1* 69,9±1,4
B ₁ (մգ) M±m	գարուն աշուն	1,0±0,01* 1,1±0,01*	1,0±0,03* 1,2±0,03	0,9±0,01* 0,9±0,02*	0,9±0,02* 1,1±0,02*	1,0±0,01* 1,1±0,01*
B ₂ (մգ) M±m	գարուն աշուն	1,2±0,02* 1,2±0,02*	1,3±0,04 1,4±0,05*	1,2±0,03* 1,1±0,03*	1,2±0,03* 1,3±0,03	1,2±0,02* 1,3±0,02
B ₆ (մգ) M±m	գարուն աշուն	2,5±0,03 2,7±0,03	2,8±0,07 3,1±0,09	2,5±0,04 2,6±0,05	2,6±0,04 2,9±0,05	2,6±0,03 2,8±0,03
PP (մգ) M±m	գարուն աշուն	14,1±0,2* 15,1±0,2*	15,1±0,5* 16,7±0,6	13,4±0,3* 14,1±0,3*	13,5±0,3* 14,8±0,3*	14,0±0,2* 15,2±0,2*
Ֆոլացին (մկգ) M±m	գարուն աշուն	248,5±2,7 247,5±2,7	258,2±6,9 267,3±7,3	234,0±3,8 230,3±4,2	253,8±4,7 255,1±4,3	248,6±2,7 250,1±2,7
A (մգ) M±m	գարուն աշուն	1,0±0,03 1,1±0,03	0,9±0,1* 1,2±0,1	0,9±0,05* 1,0±0,05	1,0±0,06 1,2±0,05	1,0±0,03 1,1±0,03
E (մգ) M±m	գարուն աշուն	20,8±0,2 20,1±0,2	22,5±0,6 22,2±0,7	20,6±0,4 19,2±0,4	21,8±0,4 21,5±0,4	21,4±0,2 20,8±0,2

Ծանոթություն. * Նորմերի համեմատ տարբերությունը հավաստի է (P<0,05)

Աղյուսակ 4

Աղջիկ-ուսանողների սննդում վիտամինների քանակները գարնանը և աշնանը

Վիտամինները	Տարվա եղանակը	Քաղաքը				Ընդամենը n=2334
		Երևան n=1843	Իջևան n=166	Գյումրի n=145	Արցախ n=180	
C (մգ) M±m	գարուն աշուն	50,3±0,9* 62,9±1,2*	40,3±2,6* 66,4±4,2	52,4±1,2* 61,8±1,5*	52,8±2,7* 74,9±3,0	49,0±0,9* 66,5±1,2*
B ₁ (մգ) M±m	գարուն աշուն	0,8±0,01* 0,8±0,01*	0,8±0,03* 0,8±0,03*	0,7±0,01* 0,8±0,01*	0,8±0,02* 0,9±0,02*	0,8±0,01* 0,8±0,01*
B ₂ (մգ) M±m	գարուն աշուն	1,0±0,01* 1,0±0,01*	0,9±0,05* 1,0±0,05*	1,0±0,01* 0,9±0,01*	1,0±0,02* 1,1±0,03	1,0±0,01* 1,0±0,01*
B ₆ (մգ) M±m	գարուն աշուն	2,1±0,02 2,2±0,02	1,9±0,08 2,3±0,09	2,0±0,02 2,1±0,03	2,1±0,04 2,4±0,05	2,0±0,02 2,3±0,02
PP (մգ) M±m	գարուն աշուն	11,2±0,1* 11,4±0,1*	10,6±0,5* 12,2±0,6*	10,9±0,2* 11,0±0,2*	11,2±0,3* 12,1±0,3*	11,0±0,1* 11,7±0,1*
Ֆոլացին (մկգ) M±m	գարուն աշուն	192,5±2,1 185,3±1,9*	186,6±8,7 188,8±8,1	190,3±2,6* 177,2±2,5*	203,4±5,1 205,7±4,3	193,2±2,1* 189,3±1,9*
A (մգ) M±m	գարուն աշուն	0,9±0,03* 0,9±0,03*	0,9±0,07 1,1±0,07	0,9±0,03* 0,9±0,03*	1,0±0,06 1,1±0,07	0,9±0,03* 1,0±0,03*
E (մգ) M±m	գարուն աշուն	16,7±0,2 16,5±0,2	16,9±0,7 16,5±0,7	16,5±0,3 14,9±0,3	17,4±0,5 17,0±0,5	16,9±0,2 16,2±0,2

Ծանոթություն. * Նորմերի համեմատ տարբերությունը հավաստի է (P<0,05)

տասխան նորմից ($P>0,05$):

Վերլուծելով B խմբի վիտամինների պարունակությունը աղջիկների սննդում՝ պարզեցինք, որ այստեղ նույնպես առկա են տղաների սննդում հայտնաբերված շեղումները: Այսպես, ուսանողուհիների օրաբաժիններում ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը B խմբի մի քանի վիտամինների քանակը համապատասխանել է ֆիզիոլոգիական պահանջներին, սակայն B_1 , B_2 և PP վիտամինների դեպքում գրանցվել է անբավարար քանակություն ($P<0,05$):

Անդրադառնալով ճարպալույծ վիտամիններին՝ հարկ է նշել, որ ռետինոլի (ներառյալ β կարոտինային ակտիվությունը) պարունակությունն աղջիկների օրաբաժիններում տարվա 2 եղանակներին Երևանի և Գյումրիի, ինչպես նաև գարնանը Իջևանի ուսանողուհիների սննդում չի համապատասխանել առաջադրվող ֆիզիոլոգիական նորմին ($P<0,05$):

E վիտամինի պարունակության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տարվա երկու եղանակներին էլ այն լիովին բավարարել է օրգանիզմի ֆիզիոլոգիական պահանջները՝ գարնանը և աշնանը միջինում կազմելով համապատասխանաբար 16,9մգ և 16,2մգ հանձնարարված 10մգ-ի փոխարեն ($P<0,05$):

Այսպիսով, ուսանողների (տղաների և աղջիկների) փաստացի սննդում վիտամինների պարունակության ուսումնասիրության վերլուծությունը բացահայտեց, որ օրաբաժիններում ֆիզիոլոգիական նորմերին լիովին համապատասխանել է միայն E վիտամինի և մասամբ B_6 վիտամինի և ֆոլացինի քանակը: Սննդային օրաբաժիններում մնացած վիտամինների (C , B_1 , B_2 , PP, A) քանակների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը առկա են նրանց անբավարար քանակներ: Մտահոգիչ է, որ մրգաշատ Հայաստանում և Արցախում կարող է արձանագրվել նման պատկեր: Այն, հավանաբար, կարելի է բացատրել երկրի ներկայիս սոցիալ-տնտեսական վիճակով: Հավելենք նաև, որ մի շարք վիտամիններին (C , B_6 , PP և մասամբ B_1 և A) բնորոշ է նաև սեզոնայնությունը՝ աշնանը գրանցվել են նրանց ավելի բարձր ցուցանիշներ, քան գարնանը: Ակնհայտ է, որ սննդում վիտամինների պարունակության նման շեղումներն աննկատ չեն կարող մնալ աճի և զարգացման դեռևս անավարտ պրոցեսներով բնութագրվող ուսանողության համար:

Տղաների փաստացի սննդում հանքային տարրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Ca, P և Fe-ի քանակները ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը լիովին համապատասխանել են հիգիենիկ նորմերին ($P<0,001$): Mg-ի պարունակության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ տարվա երկու եղանակներին Երևանի և

Գյումրիի, ինչպես նաև գարնանը Իջևանի և Արցախի բուհերում սովորող տղաների սննդում գրանցվել է նրա անբավարար քանակություն ($P<0,001$):

Կասկած չի հարուցում այն փաստը, որ Ca, P և Mg-ի օպտիմալ ներծծման և յուրացման համար կարևոր նշանակություն ունեն ոչ միայն այս տարրերի քանակները, այլ նաև փոխհարաբերությունը նրանց միջև: Հայտնի է, որ Ca:P օպտիմալ փոխհարաբերությունը պետք է կազմի 1:1,5, իսկ Ca : Mg՝ 1:0,5: Տղաների սննդում այս հանքային տարրերի փոխհարաբերության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ տարվա երկու եղանակներին էլ Ca:P փոխհարաբերությունը կազմել է 1:1,6, իսկ Ca:Mg փոխհարաբերությունը՝ 1:0,4:

Անդրադառնալով ուսանողուհիների փաստացի սննդում հանքային նյութերի պարունակության ուսումնասիրության վերլուծությանը՝ պետք է նշել, որ տարվա երկու եղանակներին էլ Ca, Mg, P և Fe-ի միջին քանակությունը ցածր է եղել համապատասխան ֆիզիոլոգիական պահանջներից ($P<0,003$): Հավելենք նաև, որ մագնեզիումի և երկաթի քանակը վիճակագորեն հավաստի ցածր է եղել բոլոր հետազոտված շրջանների բուհերում սովորող աղջիկների սննդում, իսկ Ca-ի և P-ի առումով վիճակագորեն հավաստի ցածր քանակ գրանցվել է տարվա երկու եղանակներին Երևանի և աշնանը Գյումրիի ուսանողուհիների սննդում:

Աղջիկների սննդում տարվա երկու եղանակներին էլ Ca:P փոխհարաբերությունը համապատասխանել է օպտիմալին և կազմել է 1:1,5, իսկ Ca:Mg-ի փոխհարաբերությունը՝ 1:0,4՝ հանձնարարված 1:0,5-ի փոխարեն:

Այսպիսով, ուսանողների սննդի տարբեր եղանակներին կատարված ուսումնասիրության արդյունքներից պարզ դարձավ, որ սննդում ակնհայտ է բալանսավորվածության սկզբունքի՝ հիմնական սննդանյութերի և՛ որակական, և՛ քանակական անհաշվեկշռվածության խախտումը: Սովորողների սնունդը բնութագրվում է կենդանական և բուսական սպիտակուցների տոկոսային փոխհարաբերության խախտմամբ, բուսական ճարպերի անբավարար քանակով, ինչպես նաև պարզ շաքարների բարձր և սննդաթելերի ցածր պարունակությամբ: Հավելենք նաև, որ խախտված է հիմնական սննդանյութերի՝ սպիտակուց:ճարպ:ածխաջրատ փոխհարաբերությունը: Ուսանողների (տղաների և աղջիկների) փաստացի սննդում հանքային տարրերի պարունակության վերլուծությունը նույնպես փաստեց մի շարք շեղումներ, որոնք, միանշանակ, չեն կարող աննկատ մնալ աճի և զարգացման անավարտ պրոցեսներով բնութագրվող օրգանիզմի համար: Ուստի ուսանողների փաստացի սնունդը կարելի է բնութագրել որպես անհաշվեկշռված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

For the purpose of revealing the influence of a physician's profession on the empathy level, survey among doctors of the different specialities was conducted. The majority of doctors had normal level of empathy (80.6%), and 15.5% and 3.1 % of doctors had high and low levels of empathy, accordingly. The comparative analysis of development of empathy among students and doctors has revealed that doctors approximately 3 times more often have higher empathy level than students (15.5 % against 5.6 %; $P < 0.001$), and they have low empathy level 3 times less (3.1 % against 11.1 %; $P < 0.05$). According to the materials of own research, direct correlation between the age of doctors and empathy level has been established ($r = +0.33$; $m = 0.01$).

Conclusions: Thus, the empathy is rather steady parameter of a person exposed to changes under the influence of social factors. Presence of normal level of the empathy, inherent in the overwhelming majority of students of medical university and doctors, is a necessary condition for the preservation of emotional stability of mentality, and for the prevention of development of psychosomatic diseases.

ԱՍՓՈՓՈՒՄ

ԷՄՊԱԹԻԱՆ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԱՆՁՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մարգարյան Ա.Գ., Մարդիյան Մ.Ա., Նարիմանյան Մ.Շ.

ԵՊԲՀ, Ընտանեկան բժշկության և հանրային առողջության ամբիոններ

Ներածություն: Մարդու կարևոր անձնային բնութագրերից է Էմպաթիան, որը նպաստում է միջանձնային հարաբերությունների հավասարակշռմանը:

Նպատակ: Հետազոտության նպատակն է եղել գնահատել Էմպաթիայի մակարդակը ուսանողների և բժիշկների շրջանում:

Նյութ և մեթոդներ: Էմպաթիայի մակարդակի գնահատման նպատակով օգտագործվել է Ի.Մ. Յուսուպովի սանդղակը, որը կազմված է 36 հարցից: Հետազոտությունը անց է կացվել Երևանի պետական բժշկական համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողների (802 ուսանող 2005թ. և 117 ուսանող 2010թ.) և տարբեր մասնագիտությունների 129 բժիշկների շրջանում:

Արդյունքներ: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ուսանողների ($n=802$) և բժիշկների ($n=129$) շրջանում Էմպաթիայի մակարդակի միջին արժեքը նորմալ է՝ համապատասխան $47,6 \pm 0,3$ և $44,8 \pm 0,8$ բալ: Հարցման տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ ուսանողների 83,2% ունի նորմալ Էմպաթիա: Միևնույն ժամանակ ուսանողների 11,1% ունի Էմպաթիայի ցածր մակարդակ և ուսանողների 5,6% ունի Էմպաթիայի բարձր մակարդակ: Համեմատական վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ Էմպաթիայի նորմալ մակարդակ ունեցող ուսանողների թիվը ավելանում է VI կուրսում (86,3%;

$n=161$) համեմատած I կուրսի հետ (73,3%; $n=75$; $P<0,05$):

Բժշկական գործունեության ազդեցությունը հայտնաբերելու համար կատարվել է հարցում տարբեր մասնագիտությունների բժիշկների շրջանում: Բժիշկների մեծամասնությունն ուներ Էմպաթիայի նորմալ մակարդակ (80,6%), 15,5% և 3,1% բժիշկ ուներ համապատասխանաբար Էմպաթիայի բարձր և ցածր մակարդակներ: Ուսանողների և բժիշկների շրջանում Էմպաթիայի զարգացվածության համեմատական վերլուծությունը հայտնաբերեց, որ բժիշկներն ունեն 3 անգամ ավելի շատ բարձր Էմպաթիայի մակարդակ (15,5% հակառակ 5,6%; $P<0,001$), քան ուսանողները և նույն չափով ցածր՝ Էմպաթիայի ցածր մակարդակ (3,1% հակառակ 11,1%; $P<0,05$): Սեփական հետազոտության նյութերի հիման վրա հայտնաբերվել է դրական կորելիացիոն կապ բժիշկների տարիքի և Էմպաթիայի մակարդակի միջև ($r=+0,33$; $m=0,01$):

Եզրակացություն: Այսպիսով, Էմպաթիան անձի հարաբերականորեն կայուն ցուցանիշներից է, որը կարող է փոփոխվել սոցիալական գործոնների ազդեցության հետևանքով: Էմպաթիայի նորմալ մակարդակի առկայությունը, որը բնորոշ է բժշկական համալսարանի ուսանողներին բժիշկների մեծամասնության համար, անհրաժեշտ պայման է ինչպես հոգեկանի հուզական կայունության, այնպես էլ հոգեւորմատիկ հիվանդությունների զարգացման կանխարգելման համար:

ՀՏԴ: 37(07)

ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ՈՐՊԵՍ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑ-ՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սահակյան Լ.Ա.

ԵՊԲՀ, օրգանական քիմիայի ամբիոն

Անգլալեզու մշակույթում «մանկավարժական տեխնոլոգիա» սովորաբար անվանում են մանկավարժության այն ուղղությունը, որը նպատակ ունի բարձրացնել կրթական գործընթացի արդյունավետությունը, ապահովել սովորողներին հասնելու ուսուցման պլանավորված արդյունքներին [1]: «Մանկավարժական տեխնոլոգիա» բառակապակցությունը ոչ ճիշտ թարգմանություն է անգլերենից՝ an educational technology՝ «կրթական տեխնոլոգիաներ» [2]: «Կրթական տեխնոլոգիաներ» եզրույթն էլ օգտագործում ենք մեր հետագա շարադրանքում՝ մանկավարժագիտության այդ ուղղությունը դիտարկելիս:

Սովետական գիտնականները սովոր են **դիդակտիկա - ընդհանուր մեթոդաբանություն - մասնավոր մեթոդաբանություն** եռյակին: Այդ եռյակի երկրորդ տարրը ներկայացվում է շատ անորոշ և, բացի դասագրքերում հիշատակվելուց, ոչ մի տեղ չի հանդիպում: Դիդակտիկան, որպես ուսուցման ընդհանուր տեսություն, փորձելով պատասխանել *ինչո՞ւ, ի՞նչ և ինչպե՞ս* սովորեցնել հարցերին, հավակնում է կատարելու այն դեղամիջոցի դերը, որն ըստ շատերի, բուժում է բոլոր հիվանդությունները, սակայն իրականում համարյա ոչինչ չի բուժում: Մասնավոր մեթոդները կրկնում են մեկը մյուսին:

Տեխնոլոգիական մոտեցումը սկիզբ է առնում արևմտյան մանկավարժական մշակույթից. **կրթության փիլիսոփայություն - կրթության քաղաքականություն - կրթական տեխնոլոգիա**: Այս եռյակում առարկան սահմանազատված է բավականաչափ հստակ: Կրթության փիլիսոփայությունը լայն առումով բացահայտում է, թե **ինչու** սովորեցնել, կրթության քաղաքականությունը՝ **ինչ** սովորեցնել (նույնպես լայն իմաստով), իսկ կրթական տեխնոլոգիան՝ **ինչպես** սովորեցնել: Ուսումնական առարկաների յուրահատկությունն արտացոլվում է կոնկրետ տեխնոլոգիաների մակարդակներով՝ համընդհանուր, տեղայնացված և հատուկ: Այն, ինչով մեզանում զբաղվում են մասնավոր մեթոդիստները, արևմտյան մշակույթում գիտական գործունեություն չի համարվում:

Անցած դարի 40-ական թվականներից մանկավարժագիտության՝ վերը նշված ճյուղերը զարգացել են զուգահեռ և միմյանցից անկախ, բաժանված «երկաթե վարագույրով»: 90-ական թվականներից սկսած՝ վարագույրը վերացավ, և սահմանի այն կողմում մեր կոլեգաների կողմից կատարվածը ներխուժեց մեր երկիր: Սովե-

տական մանկավարժական մշակույթը սկսեց յուրացնել ներս լցված հարստությունը՝ չիրաժարվելով սեփական ձեռքբերումներից: Կրթության փիլիսոփայությունը և քաղաքականությունն արագ գտան իրենց տեղերը: Արևմտյան եռյակի երրորդ բաղադրամասի՝ կրթական տեխնոլոգիաների ներառման պատկերը սկզբունքորեն տարբեր է:

Կրթության արդյունքների տարբերությունը չէր կարելի վերագրել արևմտյան կրթության բովանդակությանը, որը նույնիսկ գիշում էր սովետականին: Ըստ երևույթին, ինդիոն այն է, թե ինչպես են սովորեցնում: Անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրելու դասավանդման մեթոդները, որոնք կազմավորվել են արևմտյան աշխարհում: Այդ ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ այնտեղ **դասավանդման մեթոդիկա** գիտական դասընթաց չկա, բայց կա **կրթական տեխնոլոգիա**՝ տեխնիկայով հագեցած մշակումների հսկայական արսենալով:

Հարցը՝ որտե՞ղ ներառել կրթական տեխնոլոգիան մեր մանկավարժագիտությունում, սուր բնույթ ընդունեց: Առաջարկվեցին մի շարք տարբերակներ, որոնք, Գուգենի ներկայացմամբ, համընդհանուր ընդունելություն չգտան: Տեսակետներից յուրաքանչյուրն ունի կողմնակիցներ, ովքեր պայքարում և զարգացնում են դրանք (*սովորաբար մարդը երկար ժամանակ հավատարիմ է մնում այն դիրքորոշմանը, որը նրան ի սկզբանե հայտնի է*):

Քանի որ ավանդական դիդակտիկայի հարցերի մի մասն անցավ կրթության փիլիսոփայությանը և քաղաքականությանը, դիդակտիկային մնաց անմիջական կրթության գործընթացը, որով էլ զբաղվում է կրթական տեխնոլոգիան: Հետևաբար իմաստ ունի դիդակտիկան փոխել կրթական տեխնոլոգիայով կամ, ծայրահեղ դեպքում, պահպանելով «դիդակտիկա» անվանումը, փոխել բովանդակությունը: Դիդակտիկայի տեսական հայեցակարգերի և պրակտիկայի միջև կամրջի դերին է հավակնում ընդհանուր մեթոդաբանությունը, որը գոյություն ունի միայն անվանման մեջ: Կրթական տեխնոլոգիան կարող է և պետք է փոխարինի դրան, քանի որ այն կատարում է հենց դրա գործառնությունը:

«Տեխնոլոգիա» բառը գիտության մեջ հայտնվել է անգլերենից և նշանակում է *տեխնիկա, մեքենաներ և գործիքներ, գործունեության միջոցներ*: Միայն երկրորդ

նշանակությամբ ընդունվում է «գործունեության կանոններ ու եղանակներ»: Ռուսաց լեզվի ցանկացած բառարանում տեխնոլոգիան սահմանվում է որպես ինչ-որ հումքի մշակման մեթոդների և հնարների համախումբ, որի հետևանքով ստացվում է նախապես կանխորոշված հատկություններով արդյունք: Ներկա ժամանակներում արևմուտքի հրապարակումներում կրթական տեխնոլոգիան մեծ մասամբ վերաբերում է տեխնիկական միջոցներին, հատկապես համակարգիչներին:


Կրթական տեխնոլոգիան, նույնիսկ այն ժամանակ, երբ այդ անվանումը չէր օգտագործվում, բայց համապատասխանում էր իրականությանը, հետևել է տեխնիկական առաջընթացին: Փաստորեն, տեխնիկայի զարգացումը, մատուցելով գործունեության նոր միջոցներ, յուրաքանչյուր անգամ խթան է ծառայել կրթության մեջ նոր գաղափարների և հայեցակարգերի երևան գալուն, որոնք էլ կարելի է վերագրել կրթական տեխնոլոգիային:

Առաջին տեխնիկական հեղաշրջումը, որը սկզբունքորեն ազդել է կրթության վրա, կարելի է կապել Եվրոպայում գրքերի տպագրության հայտնագործության հետ XV դարի կեսերին: Այդ պահից հնարավոր դարձավ զանգվածային կրթությունը, որը տարածվեց Եվրոպայում: Չանցած կես դար՝ նոր տեխնիկական հնարավորությունների և կրթության տեխնոլոգիաների միջև սրված անհամապատասխանությունը լուծվեց Յ.Ա. Կոմենսկու հանճարով. նա ավարտեց «Մեծ դիդակտիկան», որը մինչ այսօր ընկած է կրթական գործընթացի հիմքում: Այս տեխնոլոգիական հեղափոխությունը կրթության մեջ մարդկության զարգացման համար ունեցել է նույն նշանակությունը, ինչ որ տեխնիկական հեղաշրջումը: Երկու երևույթն էլ ապրում են և զարգանում. ծագում են ուսումնական գրականության նոր տեսակներ և դրանց տպագրման նոր սկզբունքներ, կատարելագործվում են դասերը և դաս-դասարանային համակարգն ամբողջությամբ: Ընդհանուր առմամբ, այդ բոլորը կարելի է պատկերել գծապատկերով:

Մինչև XX դարի կեսերը սկզբունքային որևէ կարևոր բան կրթական տեխնոլոգիաների բնագավառում չի կատարվել: Եական փոփոխություններ նկատվել է **պրոբլեմային ուսուցման** վերջնական ձևակերպումից հետո՝ Մախմուտովի աշխատանքներում [3]:

Ինչպես մեթոդաբանությունը կարելի է ներկայացնել երկու տեսանկյունից՝ որպես գիտական դիսցիպլին (գիտության ճյուղ) և որպես դասախոսի որոշակի գործիքների հավաքածու, այնպես էլ կրթական տեխնոլոգիան նույնպես կանգնած է մեր առջև երկու «պատկերով»: Կրթական տեխնոլոգիան **գիտական դիսցիպլին** է մանկավարժական գիտություններ կոչվող մեծ ընտանիքից: Այդ եզրույթով են անվանվում դասախոսի կոնկրետ այն գոր-

ծիքները, որոնք անհրաժեշտ են **լավագույն արդյունք ապահովելու համար**:



Կրթական տեխնոլոգիաներն առավել չափով կապված են ուսումնական գործընթացի՝ դասախոսի և ուսանողի գործունեության, միջոցների, մեթոդի, ձևերի և կառուցվածքի հետ: Ըստ Գ.Կ. Սելևկոյի՝ կրթական տեխնոլոգիաներն ունեն հետևյալ կառուցվածքը [8].

- ա) հայեցակարգ,
- բ) ուսուցման բովանդակային մաս. ուսուցման նպատակները՝ ընդհանուր և կոնկրետ, ուսումնական նյութի բովանդակությունը,
- գ) տեխնոլոգիական գործընթաց՝
 - ◆ ուսումնական գործընթացի կազմակերպումը,
 - ◆ սովորողների ուսումնական գործունեության մեթոդները և ձևերը,
 - ◆ դասախոսի աշխատանքի մեթոդները և ձևերը,
 - ◆ դասախոսի գործունեությունը նյութի յուրացման գործընթացի կառավարման գործում,
 - ◆ ուսումնական գործընթացի գնահատում:

Տեխնոլոգիականության չափանիշները: Ցանկացած կրթական տեխնոլոգիա պետք է բավարարի մի քանի հիմնական մեթոդաբանական պահանջների՝ տեխնոլոգիականության չափանիշների:

Հայեցակարգային: Ցանկացած կրթական տեխնոլոգիա պետք է հենված լինի որոշակի՝ իրեն հատուկ գիտական հայեցակարգի վրա, որն ընդգրկում է կրթական նպատակներին հասնելու փոխոսկայական, հոգեբանական, դիդակտիկ և սոցիալ-մանկավարժական հիմնավորում:

Համակարգվածություն: Կրթական տեխնոլոգիան պետք է օժտված լինի համակարգի բոլոր հատկանիշներով. գործընթացի տրամաբանություն, փոխադարձ կապ

բոլոր մասերի միջև, նպատակայնություն:

Կառավարելիություն, որը ենթադրում է դիագնոստիկ նպատակադրման, պլանավորման, ուսուցման գործընթացի նախագծման, փուլային գնահատման, միջոցների և մեթոդների տարափոխման հնարավորություն:

Արդյունավետություն: Ժամանակակից կրթական տեխնոլոգիաները գոյություն ունեն մրցակցային պայմաններում և կարող են արդյունավետ լինել ըստ արդյունքների, ամենաբարենպաստն ըստ ծախսերի, կարող են երաշխավորել ուսուցման որոշակի չափորոշչին հասնելը:

Վերարտադրելիություն, որի տակ հասկացվում է կրթական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունը այլ նույնանման կրթօջախներում ուրիշ սուբյեկտների կողմից:

«Ուսուցումը հոգևոր արժեքներից ամենակարևորի՝ անձնավորության ստեղծման կամ, այլ կերպ ասած, նրա կազմակերպված արտադրության գործընթացներից է: Դա նշանակում է, որ այստեղ ևս առկա է արտադրության տեխնոլոգիա: Ի տարբերություն մնացածների՝ այս տեխնոլոգիան այլ կերպ է լուծում օբյեկտի դիմադրությունը հաղթահարելու և նրանում նախատեսված փոփոխություններ կատարելու խնդիրները: Ցանկացած տեսակի անձնավորության արտադրության տեխնոլոգիայի առարկան՝ դաստիարակվողը կամ ուսուցանվողը, ի տարբերություն այլ օբյեկտների, նաև սուբյեկտ է՝ ամենաընդհանուր իմաստով: Դա կարող է լինել այդ տեխնոլոգիան չեզոքացնող գործունեության սուբյեկտ» [4]:

Օրինակ՝ որոշակի բժշկական մտածողություն ունեցող անձնավորություն ձևավորելու համար համալսարանում կիրառվող կրթական տեխնոլոգիան *օբյեկտ* կոչվածի դիմադրության հզոր ներուժը հաղթահարել չի կարողանում: Այդ պատճառով շատ հաճախ ձևավորվում է տվյալ մասնագիտությունից հաճույք չստացող անձնավորություն: Դա նշանակում է, որ այդ տեխնոլոգիան խոտան է արտադրում: Իրավիճակը կփոխվի, եթե մշակվի նոր՝ ուսուցման մեթոդների տեսության հիման վրա կառուցված տեխնոլոգիա [5]:

Ուսուցման գործընթացի վերջնական նպատակն արդյունավետ կրթական տեխնոլոգիաների ստեղծումն է:

Սակայն դրանք անհնար է ստեղծել, եթե կրթական գործունեության միջոցների լրիվ պարզություն չլինի: Իսկ մանկավարժական բոլոր միջոցների հիմքում ընկած են ուսուցման մեթոդները: Ժամանակակից դիդակտիկան ուսուցումը դիտարկում է որպես երկկողմ գործընթաց. դասավանդում՝ դասախոսի գործունեություն և ուսանում՝ ուսանողների գործունեություն:

Վ.Պ. Բեսպալկոն ուսուցման գործընթացն արտա-

հայտում է հետևյալ բանաձևով. $\Gamma\Phi = \Phi + \Delta\phi + \Delta\psi$, որտեղ $\Gamma\Phi$ -դիագնոստիկ գործընթացը, Φ -սովորողների ուսանելու դրդապատճառը, $\Delta\phi$ -գործունեության քայլաշարը, ուսանողի ուսումնախմացական գործունեությունը, $\Delta\psi$ -կառավարման քայլաշարը, ուսուցման կառավարման դասախոսի գործունեությունը [6]:

Նույն տեխնոլոգիան կարող է իրականացվել տարբեր կատարողների կողմից՝ ավելի կամ պակաս բարեխղճությամբ, ճիշտ հրահանգով կամ ստեղծագործաբար: Դրանում, անշուշտ, առկա են դասախոսի անձնային հատկանիշները, որոշակի առանձնահատկությունները:

Նոր կրթական տեխնոլոգիաների աղբյուրները և բաղադրամասերը: Ցանկացած ժամանակակից կրթական տեխնոլոգիա իրենից ներկայացնում է մանկավարժագիտության և պրակտիկայի նվաճումների սինթեզը,

անցած փորձի ավանդական տարրերի և հասարակության հումանացման ու դեմոկրատացման հիման վրա ծնված նորի զուգակցումը [7]: Բուհը՝ որպես սոցիալական ինստիտուտ, արտացոլում է ամբողջ հասարակության և հասարակական գիտակցության վիճակը: Այն չի կարող գոյատևել քաղաքականությունից և գաղափարախոսությունից դուրս, չդավանել փիլիսոփայական որևէ ուղղություն: Ցանկացած կրթական տեխնոլոգիա հիմնվում է որոշակի փիլիսոփայական հիմքի վրա: Գիտելիքների ձեռքբերումը, ունակությունների և կարողությունների ձևավորումը, ընդունակությունների զարգացումն ունեն որոշակի տրամաբանական հաջորդականություն, որն ընդգրկում է իր մեջ հետևյալ փուլերը [8].

ա) *ուսումնական նյութի ընկալում,*

բ) *ուսումնական նյութում ներքին կապերի և հակասությունների հասկացում,*

գ) *հիշել և պահպանել հիշողության մեջ,*

դ) *յուրացվածի կիրառում պրակտիկ գործունեության մեջ:*

Ուսուցումը դիտարկվում է որպես տեխնոլոգիա և առանձնացվում են հետևյալ բաղադրիչները.

1. սկզբնական իրավիճակների վերլուծություն և ուսուցման նպատակների կանխորոշում,
2. աշխատանքի պլանավորում, նպատակին հասնելու միջոցների ընտրություն,
3. դասախոսի և սովորողի ուսումնական աշխատանքների կազմակերպում,
4. աշխատանքի վերահսկում և կարգավորում, ուսուցման արդյունքների վերլուծություն և գնահատում:

Նման ձևով կառուցվում է դասախոսի գործունեությունը, բայց այդպիսի կառուցվածք պետք է ունենա նաև սովորողի ուսումնական գործունեությունը, ինչը գործնականում չի լինում: Հիմնախնդիրը մնում է չլուծված. ինչպե՞ս պետք է ձևավորել գիտելիքները սովորողների

մեջ՝ ուսուցման գործընթացում:

Սովորողին պետք է սովորեցնել գիտակցաբար կառուցել իր ուսումնական գործընթացը, որն ունի **նպատակ, բովանդակություն, միջոցներ և մեթոդ, արդյունքների վերահսկում և գնահատում**:

Դասախոսները ոչ միշտ են գիտակցված իրականացնում դասավանդումը՝ որպես սովորողների ուսուցման կառավարման գործունեություն: Մեծ թվով ուսուցիչներ հասկանում են իրենց գործունեությունը միայն որպես գիտելիքի փոխանցում սովորողներին, բացատրություն և հարցում՝ թողնելով սովորողներին պասիվ լսողի, այլ ոչ թե ուսուցման գործընթացի սուբյեկտի դերում: Ըստ ժամանակակից կրթական տեխնոլոգիայի՝ դասախոսը պետք է կազմակերպի սովորողների գիտելիքների յուրացման ակտիվ գործունեություն և կառավարի այն:

Պրոբլեմային ուսուցում, թե՞ տեխնոլոգիա: Ինչու՞ պրոբլեմային ուսուցումը իր արժանի տեղը չի գտնում ուսուցման տեխնոլոգիաների համակարգում:

Ինչպես տեսանք, այսօր արդեն ընդունված է խոսել ուսուցման տեխնոլոգիաների մասին, քանի որ, ըստ պրակտիկայում ստացված արդյունքների, *ուսուցման մեթոդ* հասկացությունը շատ ընդհանուր է և քիչ է օգնում դասախոսին դասավանդումը բարձր մակարդակով կազմակերպելու և կառավարելու համար: Գուցե հենց դա է պատճառը, որ Է. Սթոունսը մանկավարժական անհաջողությունների հիմնական պատճառներից մեկը համարում է ուսուցման մեթոդների անորոշ սահմանումները, որոնք կոնկրետ ոչինչ չեն ասում: Ահա ասվածը հավաստող մի այդպիսի օրինակ. «Ուսուցման մեթոդը դասախոսի և ուսանողի համատեղ գործունեությունն է՝ կրթական նպատակներին հասնելու համար» [9]: Ինչպես տեսնում ենք, այստեղ ամեն ինչ ընդհանուր է, և դասախոսը չի կարող որևէ եզրակացության հանգել դասավանդման համար:

Կրթական տեխնոլոգիան համեմատաբար նոր ուղղություն է մանկավարժագիտությունում, որը զբաղվում է լավագույն ուսուցման համակարգի կառուցմամբ, ուսումնական գործընթացների նախագծմամբ:

Մեր տեսանկյունից կրթական տեխնոլոգիաների էությունը առավել հաջող են արտացոլում հետևյալ սահմանումները.

1. Կրթական տեխնոլոգիան դասավանդման և գիտելիքների յուրացման ամբողջ գործընթացի ստեղծման, կիրառման և որոշման համակարգված մեթոդ է՝ հաշվի առնելով տեխնիկական և մարդկային ռեսուրսները և դրանց փոխազդեցությունները, որոնք իրենց խնդիրը համարում են կրթության ձևերի բարեփոխումները (ЮНЕСКО) [10]:
2. Կրթական տեխնոլոգիան բոլոր մանրամասներով

մտածված համատեղ մանկավարժական գործունեության մոդել է ուսումնական գործընթացի նախագծման, կազմակերպման և իրականացման վերաբերյալ, ինչն անպայման ապահովում է բարենպաստ պայմաններ դասախոսի և սովորողների համար:

3. Համակցելով *կրթական տեխնոլոգիաներ* հասկացության վերաբերյալ տարբեր մոտեցումները և հաշվի առնելով դրա հիմնական հատկանիշները՝ մանկավարժական տեխնոլոգիաներ ասելով՝ հասկանում ենք որոշակի հայեցակարգային հիմնավորմամբ դասախոսի և սովորողի համատեղ գործունեության բովանդակային և իրավական կողմի նկարագիրը, ինչը բնութագրում է դրված **նպատակին հասնելը**՝ անկախ սովորողի անհատականությունից և իրացման տեղից:

Ուսուցման ցանկալի նպատակներին հասնելու համար պահանջվում է դիագնոստիկ նպատակադրում, այսինքն՝ **նպատակի որոշում՝ արդյունքները ստուգելով**:

Ավանդական ուսուցման նպատակներն անորոշ են. **սովորել թեորեմը, լուծել քառակուսի հավասարումը, ծանոթանալ գործողություններին, գրել բանաձևը, սահմանել օրենքը**: Թվարկվածները չեն արտահայտում ուսուցման նպատակները, դրանց հասնելուն դժվար է հետևել: Դիագնոստիկ դրված նպատակներում սովորողի գործողությունները նկարագրվում են հետևյալ տերմիններով. **գիտի, հասկանում է, կիրառում է և այլն**:

Կրթական տեխնոլոգիաների հիմքում ընկած է ուսումնական գործընթացի լրիվ կառավարվելիության, ուսուցանվող ցիկլի նախագծման և վերարտադրման գաղափարը: Ավանդական ուսուցումը բնութագրվում է դրված նպատակի անորոշությամբ, ուսումնական գործունեության թույլ կառավարելիությամբ, ուսուցանվող գործողությունների կրկնվելու անհնարությամբ, հակադարձ կապի թուլությամբ և նպատակին հասնելը գնահատելու սուբյեկտիվությամբ [11]:

Կրթական տեխնոլոգիաների յուրահատուկ գծերն են.

- ◆ ուսուցման կանխորոշված նպատակների մշակումը,
- ◆ ուսումնական բոլոր գործողությունների կողմնորոշումը դեպի երաշխավորված նպատակին հասնելը,
- ◆ փոխադարձ կապի ապահովումը,
- ◆ ընթացիկ և ամփոփիչ արդյունքների գնահատումը,
- ◆ ուսուցման գործողությունների վերարտադրելիությունը:

Ուսուցման դիագնոստիկ նպատակադրումը: Ու-

սուցման ցանկացած մակարդակի հասնելու համար պահանջվում է դնել կանխորոշված նպատակ, այսինքն՝ նպատակը որոշել սովորողի գործողություններով արտահայտված այն արդյունքներով, որոնք դասախոսը կարող է չափել և գնահատել:

Կրթական տեխնոլոգիան կողմնորոշված է դեպի երաշխավորված նպատակին հասնելը, լրիվ յուրացման գաղափարն և ուսուցման ընթացակարգային ուղին: Դիագնոստիկ դրված նպատակների որոշումից հետո նյութը տրոհվում է կառույցահատվածների՝ ուսումնական տարրերի, որոնք ենթակա են յուրացման: Ապա մշակվում են ստուգող աշխատանքներ՝ ըստ բաժինների, այնուհետև կազմակերպվում է ուսուցում, ստուգում՝ ընթացիկ հարցում, ընդհանրացում և կրկնակի ուսուցում այլ գործողություններով: Եվ այդպես շարունակվում է մինչև տրված ուսումնական տարրի լրիվ յուրացումը:

Վերարտադրման ունակություններից հետագոտականի անցման համար առաջարկվում է ուսուցման հետևյալ տարբերակը:

1. Անհրաժեշտ գիտելիքների հաղորդում:
2. Ունակությունների ձևավորում վերարտադրման մակարդակով:
 - 2.1. Գործունեության ցուցադրում ամբողջովին և ըստ տարրերի (դա կարելի է համատեղել՝ հաղորդելով գիտելիքներ «ցուցադրում + բացատրություն» սկզբունքով):
 - 2.2. Ունակությունների ստուգման կազմակերպում պարզեցված պայմաններում:
 - 2.3. Ինքնուրույն պրակտիկայի կազմակերպում անընդհատ հետադարձ կապով և դասախոսի դրական գնահատումով:
3. Անցում հետագոտական, արդյունավետ ֆազի:
 - 3.1. Պրոբլեմային իրավիճակի կազմակերպում՝ կոնկրետ խնդիրների լուծում, մոդելավորում:
 - 3.2. Սովորողների կողմից իրենց գործունեության պարտադիր վերլուծություն դասախոսի և մյուս ուսանողների հետ:

Հետադարձ կապը և գիտելիքների օբյեկտիվ ստուգումը ուսուցման տեխնոլոգիայի բնորոշ գծերն են: Գիտելիքների յուրացման մակարդակի չափումը և դրանց գնահատումը արդի ժամանակներում կրում են անորոշ և սուբյեկտիվ բնույթ:

Գիտելիքները չգնահատելն ընդհանրապես անհնար է. առաջադիմության հաշվառումը ամբողջ ուսումնական համակարգի և դիդակտիկական գործընթացի վարման բաղադրիչներից մեկն է: Պրոբլեմի լուծումը ուսուցման կանխորոշված նպատակի մշակումն է, չափիչ «գործիքների» և չափման ընթացակարգի ստեղծումը. խոսքը ուսուցման յուրացման յուրաքանչյուր մակարդակի հա-

մար թեստերի՝ ստանդարտ առաջադրանքների մասին է: Ստուգման գործընթացը կարող է լինել ավտոմատացված, և այդ ձևը աստիճանաբար դուրս կմղի «աչքաչափով» գիտելիքների ստուգումն ու գնահատումը:

Ուսուցման տեխնոլոգիայի խնդիրներից մեկը ընթացիկ և ամփոփիչ ստանդարտ առաջադրանքների ստեղծումն է՝ ուսուցման բոլոր տեսակի նպատակների և մակարդակների համար:

Վերը նշվածը վերաբերում է ուսուցման տեխնոլոգիայի ձեռքբերումներին, չնայած առկա են նաև թերություններ, որոնցից են. կողմնորոշումը դեպի վերարտադրողական ուսուցումը, ուսուցման գործունեության մոտիվացիայի չմշակված լինելը, անձի, նրա ներքին աշխարհի անտեսումը: Կոպիտ ասած՝ վերարտադրողական ուսուցման գործընթացի համար լավ աշակերտը շոբոտն է, իսկ դասախոսը՝ համակարգիչը:

Նշված թերությունների վերացման համար գոյություն ունեն դիդակտիկական կոնստրուկցիայի օրինակներ, որոնք ուղղված են ուսուցման ընթացքում բնութագրելու սովորողների հոգեբանությունը, ընկալման բնույթը, նրանց ռեակցիան ուսուցանվող փաստերի, դժվարությունների նկատմամբ: Օրինակներից մեկը «տրամաբանության մոդելավորումն» է: Դասի պլանում դասախոսը ցույց է տալիս ուսանողի գործունեության ձևերը և հնարավոր դժվարությունները, սովորողների տրամաբանական քայլերը, հերթականությամբ կատարում է բոլոր գրանցումները, ինչի արդյունքում նա նյութը տեսնում է սովորողի աչքերով, որը թույլ է տալիս նրան համեմատել ուսուցանվող ընթացակարգը ուսուցման գործունեության հնարավոր ելքով, նկատի ունենալով ուսուցման տարբերակները:

Ուսուցման տեխնոլոգիան «գործնական» դիդակտիկային ապահովեց թռիչքային զարգացում՝ նպաստեց սովորեցնող համակարգի, փաստաթղթերի և միջոցների դիդակտիկ ու տեխնիկական փաթեթի ստեղծմանը, որոնք օգնում են «միջին» ընդունակություններով դասախոսին հասնելու բարձր ցուցանիշների: Փաստաթղթերի փաթեթներում կարող են մտնել ուսուցման նպատակները և բովանդակությունը, որոշակի կարգապահություն ուսուցանող օպերացիաներ, ուսուցման բոլոր փուլերի համար թեստային առաջադրանքներ: Զանի որ ժամանակակից տեխնոլոգիաները ուղղորդված են ուսուցման գործընթացում համակարգչի ներդրմամբ, ապա փաստաթղթերի փաթեթի հիմքը պետք է կազմի ծրագրավորման արգասիքը՝ սկավառակը՝ ուսուցման գործընթացի իրականացման համար նախատեսված բոլոր նյութերով: Ուսուցման տեխնոլոգիայի հիմքի վրա են զարգանում մոդուլային ուսուցումը և ուսուցման միջոցների տեխնիկական կիրառումը՝ սկսած հասարակ համակարգչից

(ուսուցման ծրագրով) միևնույն բարդ հեռուստակոմունիկացիոն համակարգը:

Ներկայացնենք տեխնոլոգիային վերաբերող մի նկարագիր, որը որոշակի օգնություն կարող է ցույց տալ դասախոսին՝ դասանպատակը որոշելիս: Այդ տեխնոլոգիան կառուցված է գործողությունների քայլաշարից, որին հետևելով, դասախոսը կկառուցի դասանպատակը, որն էլ դասի համար վճարողը նշանակություն կունենա: Այսպես կոչված՝ **դասանպատակի տեխնոլոգիան** կառուցված է հինգ գործողությունների համակարգից:

Առաջին՝ դասախոսը պետք է ուսումնասիրի օրվա դասանյութը՝ պարզելու համար, թե նա ինչ կարող է տալ ուսանողին՝ ոչ միայն գիտելիքների, այլև սովորողի անձի զարգացմանը այս կամ այն չափով նպաստելու իմաստով: Պարզելով դասանյութի այդ նշանակությունը՝ դասախոսը դրա իրականացումն էլ համարում է դասի մանկավարժական նպատակը:

Երկրորդ՝ անհրաժեշտ է որոշել այն գործունեությունը, որով մանկավարժ-դասախոսը հասնելու է իր նպատակին:

Երրորդ՝ դասախոսը պետք է կարողանա որոշել այնպիսի ուսանողական դասանպատակ, որին հասնելու համար սովորողը պետք է ինքնակամ ընդգրկվի դասախոսի նախատեսած գործունեության մեջ: Գործունեությունը պարտադրելը չի նպաստի մանկավարժական դասանպատակին հասնելուն, այլ ընդհակառակը, ուսանողը կգործի որպես ոչ ուսումնական աշխատանքի սուբյեկտ: Այդ դեպքում ուսանողը չի դառնա մանկավարժական ներգործությունների առարկա, այսինքն՝ դասախոսը չի կարող նրա անձնավորության այս կամ այն ոլորտում որակական փոփոխություն կատարել, որն էլ հենց մանկավարժական նպատակն է: Ահա թե ինչու է կարևորվում գործունեության մղելը և ոչ թե, ասենք, թեկուզ առաջարկելը, որ սովորողը կատարի՝ համոզվելով, որ դա կարևոր է անձամբ իր համար: Առավել վնասակար է, երբ այդ կատարելը համարում են ուսանողի պարտականությունը, ուստիև նա պետք է կատարի դասախոսի պահանջը:

Չորրորդ՝ մանկավարժը պետք է կարողանա արդեն որոշված դասանպատակը հասցնել ուսանողի գիտակցությանը: Այստեղ է, որ զգացվում է ուսուցման պրոբլեմատիկությունը մեխանիզմի անհրաժեշտությունը: Այն, ինչպես հայտնի է, հակասություն է առաջացնում ուսանողի գիտակցության մեջ արդեն իրենց տեղը գտած գիտելիքների ու նոր ձեռք բերվողների միջև, քանի որ նորը կասկածի տակ է դնում արդեն եղածի համապատասխանելը իրականությանը, և սկսվում է պայքար այդ երկուսի միջև: Նման հակասություն առաջանում է

նաև այնպիսի փաստեր հայտնաբերելիս, որոնք կասկածի տակ են դնում կամ ուղղակի մերժում են ստեղծված և միակ ճշմարիտը համարված տեսությունը: Այսպես եղավ, օրինակ՝ ատոմի մասին 2000 տարի շարունակ իշխող այն տեսության հետ, ըստ որի՝ ատոմը ամենափոքր և անբաժանելի մասնիկ է: Նույնը կատարվեց նաև ֆիզիկայում՝ լույսի մասին ստեղծված ալիքային տեսության հետ, երբ հայտնաբերվեց քվանտը: Այսպիսի պայմաններում գիտությունը զարգացման էվոլյուցիոն փուլից անցնում է ռևոլյուցիոնի:

Այսպիսով՝ դասանպատակի որոշման տեխնոլոգիայի չորրորդ գործողությունը պահանջում է ապահովել արդեն որոշված դասանպատակի ձևավորումը սովորողի գիտակցության մեջ:

Հակասությունների էության վերաբերյալ գոյություն ունեն իրարամերժ պատկերացումներ, ինչպես և, ընդհանրապես, պրոբլեմային ուսուցման մասին ստեղծված պատկերացումները ևս այնքան իրարամերժ են, որ շատերի համար կասկածի տակ են դնում այն ընդունելու անհրաժեշտությունը:

Հինգերորդ: Ուսուցման արդյունքների ստուգումն է՝ ուսուցման նպատակին համապատասխան:

Ուսուցման արդյունավետության բարձրացման լավագույն ուղին **պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի մշակումն է՝** հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսուցման այդ տեսակն ունի հետևյալ կառուցվածքը. պրոբլեմային հոգեվիճակի ստեղծում՝ հակասություններ առաջացնելով աշակերտների գիտակցության մեջ իրենց տեղը գտած գիտելիքների ու նոր ձեռք բերվածների միջև: Այդ եղանակով ստեղծվում է պրոբլեմային իրադրություն, որն էլ բնութագրվում է զարմանքի և տարակուսանքի հոգեվիճակներով: Այդ հոգեվիճակներն առաջացնում են հարցեր, որոնք աշակերտին են և մտահոգում են նրան, ուստի նա չի կարող հանգիստ և անտարբեր մնալ: Հարցի պատասխանը գտնելու կամ ստանալու համար առաջ է քաշվում վարկած, որի ստուգմամբ սկսվում է աշակերտների ուսումնառական գործունեությունը: Դրա արգասիքն է դառնում նոր ստացված գիտելիքը: Երևի պետք է մտածել այն մասին, որ **պրոբլեմային ուսուցման մեթոդ** կամ **եղանակ** բառակապակցությունները պետք է փոխարինվեն **պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա** հասկացությամբ, որը կստիպի կառուցել այդ տեխնոլոգիան. դա արդեն կներկայացնի որոշակի հրահանգներ այն կիրառելու վերաբերյալ: Միայն այդ դեպքում պրոբլեմային ուսուցումն իր տեղը կգտնի ուսուցման մյուս տեխնոլոգիաների համակարգում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кларин М.В. Педагогическая технология в учебном процессе. Анализ зарубежного опыта // Новое в жизни, науке, технике. Серия „Педагогика и психология“ №6.-М.: Знание, 1989.
2. Гузеев В.В. Образовательная технология как научная дисциплина//химия в школе.-2003.- №5.- С. 16-23.
3. Махмутов М. И. Организация проблемного обучения в школе. Книга для учителей.-М.:Просвещение,1977.-240с. Проблемное обучение. - М.: Педагогика, 1975.- 210 с.
4. Սահակյան Լ.Ա. Պրոբլեմամոդուլային ուսուցման ճկուն տեխնոլոգիա // Կանթեղ. -2003, թիվ 4, էջ 217- 225:
5. Մանուկյան Ս.Պ. Ուսուցման մեթոդներ, թե՛ տեխնոլոգիա // Նախաշավիղ . -2007, թիվ 3, էջ 44-50:
6. Беспалько В.П. Педагогика и прогрессивные технологии обучения//М.: ИЗД.

ИПО МО России, 2000, 148с.

7. Ջորջ Փոյա, Ուսուցման, դասավանդման և դասավանդելու ուսուցանելու մասին// Սովետական մանկավարժ.-1976, թիվ 3, էջ11:
8. Селевко Г.К. Современные образовательные технологии//Учебное пособие.- М.: Народное образование.-1998.-256 с.
9. Саакян Л.А. Особенности применения метода проблемного обучения в преподавании химии// Современные тенденции развития химического образования.- Кишинев.-2005.- С. 116-124.
10. Воскобойникова Н.П., Галыгина И.В., Галыгина Л.В. К вопросу о педагогических технологиях и системах обучения // Химия в школе.- 2002. - №2. - С.16-21.
11. Габриелян О.С. Современные технологии в процессе преподавания химии// электронная версия.

SUMMARY

EDUCATIONAL TECHNOLOGY AS A NEW DIRECTION DURING TRAINING

Sahakyan L.A.

YSMU, Department of organic chemistry

Technology of training (pedagogical technology) - a new direction in a pedagogical science aimed at designing optimal training systems and educational processes.

The idea of full controllability of educational process, design and reproducibility of a training cycle is the basis of a pedagogical technology.

Traditional training is characterized by ambiguity in setting purposes, weak controllability of an educational activity, impossibility of reproducing training operations, weak feedback and subjectivity in estimation of goals achievement procedure.

Specific features of a training technology are as follows:

- ◆ Development of training purposes,
- ◆ Orientation of all educational procedures to guaranteed achievement of educational goals,
- ◆ An operative feedback,
- ◆ Estimation of current and final results,
- ◆ Reproducibility of training procedures.

To achieve the required (desirable) training level it is necessary to set purposes diagnostically, i.e. to determine them through the results expressed in the actions of students that can be measured and estimated by a teacher. Purposes are set ambiguously in a traditional training: “to study the theorem”, “to solve the equation”, “to acquaint with the principle of action”. These purposes do not describe the results of a training, it’s difficult to check whether they are achieved or not. The purposes describes actions of a student in terms of such words as “knows”, “understands”, “applies” and so forth.

The technology of training is oriented on guaranteed achievement of the goals and on the idea of complete mastering through training procedures. After defining the purposes of

a subject, the material is broken into fragments - educational elements that should be mastered. Then verifying work on sections (the sum of educational elements) is developed. Afterwards, procedures of training, checking (current control), updating and repetition are organized during other activities of training. It’s done until the set educational elements are completely mastered. The current estimations are defined as “has acquired - has not acquired “. Final results are explained to each student.

For transition from reproductive skills to search ones the following variant of training is offered:

1. Giving necessary knowledge and formation of skills at a reproductive level,
2. Organization of skills development under simplified conditions and that of an independent practice, with a continuous feedback and positive estimation by a teacher,
3. Transition to a search, productive phase. Creation of problematic situations – solution of specific problems, imitating modeling,
4. Obligatory analysis of activities by students in the group together with their teacher.

The essential feature of the training technology is reproducibility of a training cycle, i.e. the possibility that it can be reproduced by any teacher. The training cycle contains the following elements: an establishment of training purposes, a tentative estimation of the knowledge level, training, a set of educational procedures and corrections, according to the feedback results, final estimation of the results and setting new goals.

Feedback, the objective control of knowledge, is an essential feature of a training technology.

РЕЗЮМЕ

ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ТЕХНОЛОГИЯ КАК НОВОЕ НАПРАВЛЕНИЕ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ

Саакян Л.А.

ЕГМУ, кафедра органической химии

Технология обучения (педагогическая технология) – новое направление в педагогической науке, которое занимается конструированием оптимальных обучающих систем, проектированием учебных процессов.

В основе педагогической технологии лежит идея полной управляемости учебным процессом, проектирования и воспроизводимости обучающего цикла.

Традиционное обучение характеризуется неопределенностью постановки целей, слабой управляемостью учебной деятельностью, невозможностью повторения обучающих операций, слабостью обратной связи и субъективностью оценки достижения целей.

Специфические черты технологии обучения:

- ◆ разработка диагностично поставленных целей обучения;
- ◆ ориентация всех учебных процедур на гарантированное достижение учебных целей;
- ◆ оперативная обратная связь;
- ◆ оценка текущих и итоговых результатов;
- ◆ воспроизводимость обучающих процедур.

Для достижения заданного (желаемого) уровня обучения требуется ставить цели диагностично, то есть определять их через результаты, выраженные в действиях учащихся, которые (действия) преподаватель может измерить и оценить. В традиционном обучении цели ставятся неопределенно: «изучить теорему», «решить уравнение», «ознакомить с принципом действия». Эти цели не описывают результатов обучения, достижение их трудно проверить. В поставленной цели описываются действия студента в терминах: знает, понимает, применяет и пр.

Технология обучения ориентируется на гарантированное достижение целей и идею полного усвоения путем обучающих процедур. После определения диагностично поставлен-

ных целей по предмету материал разбивается на фрагменты – учебные элементы, подлежащие усвоению. Затем разрабатываются проверочные работы по разделам (сумме учебных элементов), далее организуется обучение, проверка- текущий контроль, корректировка и повторное, в других операциях обучение. И так до полного усвоения заданных учебных элементов. Текущие оценки определяются по типу «усвоил – не усвоил». Итоговые результаты разясняются каждому студенту.

Для перехода от репродуктивных умений к поисковым, предлагается такой вариант обучения.

1. Сообщение необходимых знаний и формирование умений на репродуктивном уровне.
2. Организация отработки умения в упрощенных условиях и организация самостоятельной практики с непрерывной обратной связью и положительной оценкой преподавателя.
3. Переход к поисковой, продуктивной фазе. Организация проблемных ситуаций – решение конкретных задач, имитационное моделирование.
4. Обязательный анализ учащимися своей деятельности с преподавателем и группой.

Существенной чертой технологии обучения является воспроизводимость обучающего цикла, то есть возможность его повторения любым преподавателем. Цикл обучения содержит следующие моменты: установление целей обучения; предварительная оценка уровня обученности; обучение; совокупность учебных процедур и корректировка, согласно результатам обратной связи; итоговая оценка результатов и постановка новых целей.

Обратная связь, объективный контроль знаний - существенная черта технологии обучения.

ՀՏԴ: 61(071.1):312

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՏԵՐՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ԹԵՍԱԿՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Յաղջյան Գ.Վ., Կարապետյան Յ.Բ., Գևորգյան Ն.Գ.

ԵՊՀ, մասնագիտական և շարունակական կրթության բաժին,
ինֆորմացիոն և հաղորդակցության տեխնոլոգիաների բաժին

Բանալի բառեր՝ ինտերնատուրա, համակարգչային թեստավորում, ատեստացիա, գնահատական, ֆակուլտետ, տոկոսային հաշվետվություն, թեմա, առարկա և այլն:

2010-2011 ուստարում Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ինտերնատուրայում մասնագիտանում են բոլոր ֆակուլտետներից ընդգրկված 139 շրջանավարտներ:

Ինտերնատուրայի նպատակը և խնդիրներն են՝ փորձառու մասնագետների հսկողության ներքո ապահովել բժշկական համալսարանի շրջանավարտների մասնագիտական որակի բարձրացումը, գործնական հմտությունների կատարելագործումը, տեսական գիտելիքների խորացումը և երիտասարդ մասնագետների պատրաստումն ինքնուրույն գործնական աշխատանքի:

Ինտերնատուրայի ծրագիրը լիարժեք յուրացնելու, ինտերնատուրան ավարտող երիտասարդ բժիշկների գիտելիքները և ունակությունները հանրապետության առողջապահության համակարգի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով համալսարանի մասնագիտական և շարունակական կրթության բաժինը ատեստացիաներ է կազմակերպում յուրաքանչյուր մասնագիտական ցիկլն ավարտվելուց հետո: Որպես նորություն, այս ուստարում ինտերնների ատեստացիաներից առաջ կազմակերպել ենք տվյալ առարկայից համակարգչային թեստավորում, որի արդյունքները միջինացվել են բանավոր պատասխանից ինտերնների ստացած գնահատականների հետ: Ներկա դրությամբ արդեն հանձնվել է 254 համակարգչային թեստ:

Այս միջոցառման նպատակն է հստակեցնել ինտերնների ունեցած գիտելիքները, բացահայտել ծրագրի այն ենթաբաժինները, որոնք նրանց կողմից վատ են յուրացվել և անհրաժեշտ գործունեություն ծավալել այդ թերությունները վերացնելու համար:

Ընդհանուր ձևով բնութագրելով ատեստացիաների արդյունքները՝ մանրամասնորեն կներկայացնենք որոշ մասնագիտությունների գծով անցկացված համակարգչային թեստավորման արդյունքները:

Ընթացիկ ուստարում **ընդհանուր բժշկական գործունեություն** մասնագիտությամբ 12 բժիշկ-ինտերնները հաջողությամբ ատեստացիա են հանձնել թերապիա առարկայից: Նույն առարկայից ատեստացիան լավ են հանձնել նաև **ընդհանուր բժշկական գործունեություն զինված ուժերում** մասնագիտությամբ 11 բժիշկ-ինտերններ:

Վերոհիշյալ երկու մասնագիտություններով բժիշկ-ինտերնների համակարգչային թեստավորման արդյունքները թերապիայից պատկերված են աղյուսակ 1-ում:

Ինչպես երևում է ստացված արդյունքից, թերապիայի թեստավորումը դրական միավորներով են հանձնել բոլոր ինտերնները: Նրանց գիտելիքներն առավելապես կայուն են *սրտաբանություն* (78%), *ռևմատոլոգիա* (72%), մասնագիտություններից, իսկ համեմատաբար ցածր ցուցանիշ է ստացվել *նեֆրոլոգիա* (56%) առարկայից:

Ընդհանուր բժշկական գործունեություն զինված ուժերում մասնագիտությամբ 22 բժիշկ-ինտերններ համակարգչային թեստավորման են ենթարկվել վիրաբուժությունից (աղյուսակ 2), ապա՝ հանձնել ատեստացիա:

Այս մասնագիտությունից ևս թե՛ համակարգչային թեստավորումը և թե՛ ատեստացիան դրական միավորներով են հանձնել բոլոր ինտերնները: Ուսումնասիրելով թեստավորման արդյունքները՝ կարելի է ասել, որ ամենաբարձր ցուցանիշ է ստացվել կրծքավանդակի և թոքերի հիվանդություններ բաժնից (75,8%), սակայն ինտերններն ավելի վատ են յուրացրել թոքի ուռուցքները (45,5%):

Ընդհանուր ստոմատոլոգիական գործունեություն մասնագիտությամբ 60 բժիշկ-ինտերններ ատեստացիա են հանձնել մանկական և օրթոպեդիկ ստոմատոլոգիա առարկաներից: Մանկական ստոմատոլոգիայից «անբավարար» ստանալու պատճառով 5 բժիշկ-ինտերն վերահանձնել են ատեստացիան, ընդ որում նրանցից մեկը կրկնակի է վերահանձնել այն: Օրթոպեդիկ ստոմատոլոգիա առարկայից ատեստացիան

Աղյուսակ 1

Ընդհանուր բժշկական գործունեություն (Թերապիա)

Թեմաներ	ճիշտ պատասխանված	ընդամենը պատասխանված	տոկոսային հարաբերություն
Սրտաբանություն	546	700	78,00%
Գաստրոէնտերոլոգիա	91	150	60,67%
Թոքաբանություն	74	125	59,20%
Նեֆրոլոգիա	42	75	56,00%
Ուռմատոլոգիա	108	150	72,00%
Թերապիա	861	1200	71,75%

Աղյուսակ 2

Վիրաբուժություն

Թեմաներ	ճիշտ պատասխանված	ընդամենը պատասխանված	տոկոսային հարաբերություն
Կրծքագեղձի հիվանդություններ	82	132	62,12%
Թոքի ուռուցքներ	45	99	45,45%
Պլևրայի էմպիեմա	54	110	45,09%
Կրծքավանդակի, թոքերի հիվանդություններ	125	165	75,76%
Որովայնի ճողվածքներ	150	220	68,18%
Որովայնի վնասվածքներ	91	154	59,09%
Վահանագեղձի և հարվահանագեղձի հիվանդություններ	38	55	69,09%
Վիրաբուժություն	585	935	62,57%

Աղյուսակ 3

Օրթոպեդիկ ստոմատոլոգիա

Թեմաներ	ճիշտ պատասխանված	ընդամենը պատասխանված	տոկոսային հարաբերություն
Բյուզելային պրոթեզ	11	22	50,00%
Քունքաձևոտային հոդ	9	22	40,91%
Իմպլանտ	15	22	68,18%
Պսակ	9	22	40,91%
Նյութագիտություն	16	22	69,57%
Կամրջաձև պրոթեզ	17	22	77,27%
Պարոտիդի հիվանդ, Օրթոպեդիկ բուժումը	8	22	36,36%
Լրիվ շարժական պրոթեզ	13	22	59,09%
Դիմաձևոտային պրոթեզավորում	8	22	36,36%
Օրթոպեդիկ ստոմատոլոգիա	106	22	53,27%

վերահանձնել է 1 հոգի:

Մանկական ստոմատոլոգիայից համակարգչային թեստավորման ժամանակ 2 ինտերն, իսկ օրթոպեդիկ ստոմատոլոգիայից՝ 3 ինտերն չեն կարողացել հավաքել պահանջվող 5 միավորը:

Ստորև ներկայացվում է **օրթոպեդիկ ստոմատոլոգիա** մասնագիտությունից օտարալեզու բժիշկ-ինտերնների կողմից հանձնված համակարգչային թեստավորման արդյունքները (աղյուսակ 3):

Համաձայն թեստավորման արդյունքների, լավագույն գիտելիքներ են դրսևորվել կամրջաձև պրոթեզների (77,3%), նյութագիտության (69,6%) հետ կապված հարցերում, սակայն ցուցանիշները ցածր են եղել պարոտիդի հիվանդությունների օրթոպեդիկ բուժման (36,4%) և դիմաձևոտային պրոթեզավորման (36,4%) բաժիններում:

Դեղագիտություն մասնագիտությամբ 33 դեղագետ-ինտերններ ատեստացիա են հանձնել դեղագիտության կառավարում և դեղագործական էկոնոմիկա, դեղագիտական քիմիա և ֆարմակոգնոզիա առարկաներից: Ատեստացիային չներկայանալու պատճառով ԴԵԿ առարկան վերահանձնել են 2 ինտերն: Դեղագիտական քիմիայից ատեստացիան վերահանձնել են 7 ինտերն, որոնցից 2-ը՝ կրկնակի: Ֆարմակոգնոզիա առարկայից ատեստացիան վերահանձնել են 6 ինտերն, որոնցից 4-ը՝ ատեստացիային չներկայանալու պատճառով:

ԴԵԿ-ի համակարգչային թեստավորման արդյունքում 3 ինտերն, իսկ դեղագիտական քիմիայից՝ 15 ինտերն չեն կարողացել հավաքել պահանջվող 5 միավորը: Ներկայացվող աղյուսակ 4-ում պատկերված են դեղագիտական քիմիայի համակարգչային թեստավորման արդյունքները՝ ըստ բաժինների:

Աղյուսակ 4

Դեղագիտական քիմիա

Թեմաներ	ճիշտ պատասխանված	ընդամենը պատասխանված	տոկոսային հարաբերություն
Ամինաթթուներ	10	174	57,47%
ԱՓՖ-արգելակիչներ, կալցիումի անտագոնիստներ	127	231	54,98%
Գործիքային եղանակներ	100	229	43,67%
Դեղանյութերի որակի վերահսկում	176	264	66,67%
Ընդհանուր թեմաներ	98	254	38,58%
Հակաբիոտիկներ	113	220	51,36%
Հակամետաբոլիտներ	93	228	40,79%
Հոգեմետ դեղամիջոցներ	113	220	51,36%
Սրտային գլիկոզիդներ, հորմոններ	93	228	70,79%
Վիտամիններ	124	241	51,45%
Տեղային անզգայացնողներ	125	230	54,35%
Ցավազրկողներ	141	229	61,57
Վերլուծման ֆիզիկոքիմիական եղանակներ	118	254	46,46%
Ֆունկցիոնալ անալիզ	147	264	55,68
Դեղագիտական քիմիա	1666	3280	50,79%

Աղյուսակ 5

Ֆարմակոգնոզիա

Թեմաներ	ճիշտ պատասխանված	ընդամենը պատասխանված	տոկոսային հարաբերություն
Ալկալոիդ պարունակող դեղաբուսական հումքեր	136	231	58,87%
Ֆարմակոգնոստիկ վերլուծություն	88	198	44,44%
Անտրագլիկոզիդներ պարունակող դեղաբուսական	116	197	58,88%
Դաբադային նյութեր	134	230	58,26%
Լիպիդներ պարունակող դեղաբուսական հումքեր	148	223	66,37%
Կենդանական ծագման հումքեր	144	197	73,10%
Ֆարմակոգնոզիայի հիմունքները	178	230	77,39%
Դեղաբույսերի նկարներ	181	231	78,35%
Պոլիսախարիդներ պարունակող դեղաբուսական	166	228	72,81%
Սապոնիններ պարունակող դեղաբուսական	161	229	70,31%
Սրտային գլիկոզիդներ	128	193	66,32%
Վիտամիններ պարունակող դեղաբուսական	187	229	81,66%
Տերպենոիդներ պարունակող դեղաբուսական	162	230	70,43%
Ֆենոլային գլիկոզիդներ պարունակող	100	198	50,51%
Ֆլավոնոիդներ պարունակող դեղաբուսական	157	229	68,56%
Ֆարմակոգնոզիա	2186	3273	66,79%

Թեստավորման արդյունքներից կարելի է եզրակացնել, որ համեմատաբար լավագույն գիտելիքներ են դրսևորվել ընդհանուր թեմաներ (66,7%), ցավազրկողներ (61,6 %), ամինաթթուներ (57,5%) բաժիններից: Ինտերնները լավ չեն յուրացրել հակաբիոտիկներ (38,6%), սրտային գլիկոզիդներ, հորմոններ (40,8%) թեմաները:

Այս առարկայի հետ կապված խնդիրները քննարկվել են ֆարմացիայի ամբիոնի աշխատակիցների հետ և նրանց տրվել է հանձնարարական: Ամբիոնը ձեռնարկել է միջոցներ թերութունները վերացնելու համար:

